

«23» նոյեմբեր 2017թ.

No 3358 - Ա

ՀԻՊԵՐՏՐՈՖԻԿ ԿԱՐԴԻՈՄԻՈՊԱԹԻԱ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.3 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման 12-րդ կետի «դ» ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա ախտորոշման և բուժման կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի խորհրդական Արմեն Փարսադանյանին՝ ուղեցույցի հաստատումից հետո սեղմ ժամկետում ապահովել սույն ուղեցույցի մուտքագրումը միասնական էլեկտրոնային առողջապահության համակարգ:
3. Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝ «Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա ախտորոշման և բուժման կլինիկական ուղեցույց»-ը ընդունելի գիտություն:
4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ Ապահովել սույն հրամանի տրամադրումը կատարողներին:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ս. Խաչատրյանին:

Լ. ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՀԻՊԵՐՏՐՈՖԻԿ ԿԱՐԴԻՈՄԻՈՊԱԹԻԱ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփ տեսություն

Ուղեցույցը տրամադրում է հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների վաղ ախտորոշման և բուժման արդյունքները:

Մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է Հայաստանի սրտաբանների ընկերության աշխատանքային խմբի և ՀՀ ԱՆ գլխավոր սրտաբանին կից մասնագետների կողմից: Փաստաթղթի հիմքն է հանդիսացել Սրտաբանների եվրոպական միության (European Society of Cardiology, ESC) կողմից 2014 թվականին մշակված <Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ախտորոշման և բուժման ուղեցույց>-ը (2014 ESC Guidelines on diagnosis and management of hypertrophic cardiomyopathy): Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների արդյունավետությունը որոշելիս, հիմք է ընդունվել ESC-ի ապացույցների դասակարգումը: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի սրտաբանների միության կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցը նախատեսված է սրտաբանների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման՝ յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա, Ուղեցույցում լուսաբանվել են հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի սահմանումը, համաճարակաբանության, ռիսկի գործոնների, ախտորոշման, կլինիկական պատկերի, մոնիթորինգի, բուժական

միջամտությունների և ելքերի հիմնահարցերը: Առաջարկվել են ներդրման տարբերակները և աուդիտի ցուցանիշները: **Հեղևություններ**

Միջազգային փորձագետների մեծաքանակ խումբը եկել է համաձայնության՝ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի վարման բազմաթիվ կարևոր սկզբունքների վերաբերյալ:

Պատասխանատու համակարգող

Հ.Գ. Հայրապետյան, բ.գ.դ., ՀՀ ԱՆ գլխավոր սրտաբան, ԵՊԲՀ շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի սրտաբանության ամբիոնի պրոֆեսոր, <Էրեբունի> բ/կ Սրտաբանական կենտրոնի ղեկավար:

Աշխատանքային խմբի անդամներ

- Հ.Հ. Պետրոսյան, Էրեբունի բ/կ Անհետաձգելի սրտաբանության բաժանմունքի բժիշկ – սրտաբան

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը ոչ մի ազդեցություն չի ունեցել սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու համակարգողն իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր անդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումները ընդունելու հմտություններին՝ անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում: Խորհուրդների մեծամասնությունը կիրառելի է ինչպես նեղ մասնագիտացում ունեցող բժշկական կենտրոնների, այնպես էլ այլ բժշկական կենտրոնների համար:

Բովանդակություն

1. Նախաբան
2. Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

3. Համաճարակաբանություն
4. **Ծագումնաբանություն**
5. Ախտորոշում
6. Գենետիկ հետազոտություն և ընտանեկան սքրինինգ
7. Օգնության ցուցաբերում
8. Ախտանիշների գնահատում
9. Ախտանիշների և բարդությունների բուժում
10. Դինամիկ հսկողության խորհուրդներ
11. Վերարտադրողականություն և հակաբեղմնավորում
12. Հատուկ դեպքեր
13. Կյանքը կարդիոմիոպաթիայով. խորհուրդներ պացիենտներին
14. Գրականության ցանկ
15. Հավելված 1. Սրտաբանների եվրոպական միության ապացույցների որակի դասակարգում

Հապավումներ

ԱՓՖ՝ ադենոզին փոխակերպող ֆերմենտ

ԱԸՊ՝ ադենոզինային ընկալիչների պաշարիչներ

ԷՍԳ՝ Էլեկտրասրտագրություն

Էխտ-ՍԳ՝ Էխոսրտագրություն

ԻԿԴ՝ իմպլանտացվող կարդիովերտեր-դեֆիբրիլյատոր

ՀՇ՝ համակարգչային շերտագրություն

ՀԿՄՊ՝ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա

ՁՓ՝ ձախ փորոք

ՄՌՇ՝ մագնիսառեզոնանսային շերտագրություն

ՍԿՀ՝ սրտի կծկումների հաճախականություն

AHA (American Heart Association)՝ Սրտի Ամերիկյան Ընկերություն

AL(Amyloid light - chain)՝ թեթև շղթաների ամիլոիդոզ

AV (Atrioventricular)՝ նախասիրտփորոքային

CRT (Cardiac Resynchronization Therapy)՝ Սրտային ռեսինխրոնիզացիոն թերապիա
ESC (European Society of Cardiology)՝ Սրտաբանների եվրոպական միություն

HAS-BLED-Hypertension, Abnormal renal-liver function, Stroke, Bleeding history or predisposition,
Labile international normalized ratio, Elderly (65 years), Drugs or alcohol concomitantly

INR՝ international normalized ratio

MELAS՝ միտոքոնդրիալ էնցեֆալոպաթիա, լակտատ-ացիդոզ, ինսուլտանման դրվագներ,
MERRF՝ միոկլոնուս- էպիլեպսիա, <հավասար կարմիր թելիկներ>

PRKAG 2՝ ադենոզին-մոնոֆոսֆատ-ակտիվացնող պրոտեին-կինազի գամմա-2 ենթամիավոր

SAM (systolic anterior motion)՝ առաջնասիտուլիկ շարժում

TT (transthyretin)՝ տրանսթիրետին

1. Նախաբան

Կարդիոմիոպաթիաները բնորոշվում են փորոքների սրտամկանի կառուցվածքային և ֆունկցիոնալ խանգարումներով, որոնք պայմանավորված չեն իշեմիկ հիվանդության հետևանքով արյունահոսքի սահմանափակումով կամ ոչ նորմալ ծանրաբեռնվածությամբ [1]: Կատարվել են քիչ ռանդոմիզացված հետազոտություններ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի վերաբերյալ, այդ պատճառով այս փաստաթղթում ամրագրված խորհուրդների մի մասը հիմնված է դիտողական հետազոտությունների և մասնագետների համաձայնեցված կարծիքի վրա [2]: Պատմականորեն հիվանդությունների այս խումբը բաժանվել է երկու ձևերի. առաջնային, որոնց դեպքում սիրտը հանդիսացել է միակ ախտահարված օրգանը և երկրորդային, որոնց դեպքում կարդիոմիոպաթիան հանդիսանում է համակարգային հիվանդության դրսևորում: Այս ուղեցույցների հիմքում ընկած է Սրտաբանների եվրոպական միության (ESC) դասակարգումը, որի համաձայն կարդիոմիոպաթիաները բնորոշվում են մորֆոլոգիական և ֆունկցիոնալ չափորոշիչների միջոցով: Բացի այդ, նրանք խմբավորվում են ընտանեկան/գենետիկ և ոչ ընտանեկան/ոչ գենետիկ ենթատիպերի՝ անկախ ոչ սրտային հիվանդության առկայությունից [1]: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիան (<ԿՄՊ) բնորոշվում է ձախ փորոքի պատի հաստության մեծացմամբ, որը չի բացատրվում բացառապես անկանոն ծանրաբեռնվածությամբ: Բնորոշումը կիրառելի է երեխաների և մեծահասակների համար, և

համապարփակ պատկերացում չի տալիս էթիոլոգիայի և սրտամկանի ախտաբանության վերաբերյալ: Չնայած այսպիսի մոտեցումն ընդլայնում է ուղեցույցի հայեցակարգը և դարձնում է որոշ հանձնարարականների կատարումն ավելի դժվար, այնուամենայնիվ, այն համաձայնության մեջ գտնվելով ամենօրյա կլինիկական պրակտիկայի հետ, ավելի է բարձրացնում ախտորոշման և բուժման ճշգրտությունը:

Հայաստանի Հանրապետությունում չկա հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների ռեգիստր, ուստի օբյեկտիվ գնահատական տալ Հայաստանում հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի տարածվածության մասին՝ դժվար է:


2. Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է Հայաստանի սրտաբանների ընկերության աշխատանքային խմբի և ՀՀ ԱՆ գլխավոր սրտաբանին կից մասնագետների կողմից: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել Եվրոպական Սրտաբանների Ընկերության (European Society of Cardiology, ESC) կողմից 2014թ. մշակված <Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ախտորոշման և բուժման ուղեցույց>-ը (2014 ESC Guidelines on diagnosis and management of hypertrophic cardiomyopathy): Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունն ընդգրկել է հիմնական բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում MEDLINE, PubMed, Cochrane library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարաններում: Որոնման ժամանակային շրջանակն է՝ 2005–2017թթ.: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ուղեցույցերի ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն և ցանկացած խոհրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթում հիմք է ընդունվել ESC-ի ապացույցների դասակարգումը (մանրամասները տես՝ Հավելված 1-ում):

Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքներն իրականացվել են ըստ ADAPTE մեթոդաբանության՝ միջմասնագիտական աշխատանքային խմբի անդամների առերես հանդիպումների և հեռահար շփումների միջոցով: Ուղեցույցի դրույթների վերաբերյալ ապահովվել է աշխատանքային խմբի բոլոր անդամների կոնսենսուս: Ուղեցույցը նախատեսված է սրտաբանների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ պայմանավորված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալով:

3. Համաճարակաբանություն

Հյուսիսային Ամերիկայում, Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում կատարված մեծ քանակությամբ մեթոդոլոգիական տարբեր ուսումնասիրությունները վկայում են մեծահասակների մոտ ձախ փորոքի (ՁՓ) պատի հաստության անբացատրելի մեծացման դեպքերի մասին [3-12]: Շատերը ցույց են տալիս հաճախականության տարիք-կախյալ բնույթը, որը նշանակալիորեն քիչ է 25 տարեկանից ցածր տարիքի փստորոշված պացիենտների համար[9]: Մանկաբուժական ռեգիստրներում հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով երեխաների հաճախականությունն անհայտ է, սակայն պոպուլյացիոն հետազոտությունները հաղորդում են տարեկան 0.3-0.5/100000 հիվանդացության մասին [13, 14]: Չնայած որ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիան հաճախ ժառանգվում է աուտոսոմ-դոմինանտ տիպով, հետազոտությունների մեծամասնությունը ցույց է տալիս հիվանդացության հաճախականությամբ կանանց նկատմամբ տղամարդկանց ոչ մեծ առավելություն: Այս փաստը մնում է անբացատրելի, սակայն կարող է արտացոլել սքրինինգ ռազմավարության շեղումը և նաև գենետիկ և հորմոնալ մոդիֆիկատորները: Տարբեր ռասաների մոտ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով հիվանդացությունը նույնն է [3-12] :



Սկար 1

4. Ծագումնաբանություն

Դեռահաս և մեծահասակ պացիենտների մոտավորապես 60% -ի մոտ հիվանդությունն ունի ժառանգական աուտոսոմ-դոմինանտ բնույթ և պայմանավորված է սրտամկանի սարկոմերային սպիտակուցները կոդավորող գեների մուտացիայով [15-19]: Մեծահասակների 5-10%-ի մոտ հիվանդությունը զարգանում է այլ գենետիկ հիվանդությունների արդյունքում, ներառյալ ժառանգական մետաբոլիկ և նյարդա-մկանային հիվանդությունները, քրոմոսոմային անոմալիաները և գենետիկ համախտանիշները [20, 21]: Որոշ պացիենտներ տառապում են ոչ գենետիկ հիվանդություններով, որոնք կարող են իմիտացնել (նմանակեղծել) ժառանգական ձևեր, օրինակ սենիլ (TT) և (AL) ամիլոիդոզը [22, 23]:

4.1. Սարկոմերային սպիտակուցների գեների մուտացիաներ

Բետա-միոզինի ծանր շղթա (MYH 7) և միոզին – կապող սպիտակուց C (MYBPC3) կոդավորող գեների մուտացիաները կազմում են դեպքերի մեծամասնությունը: Ավելի քիչ ներգրավված են սրտային տրոպոնին I և T (TNN13, TNNT2), տրոպոմիոզինի ալֆա-1 շղթան (TPM1) և 3-միոզինի թեթև շղթան (MYL3) կոդավորող գեները: Ընդհանուր առմամբ, սարկոմերային սպիտակուցները կոդավորող գեների մուտացիայով հիվանդների մոտ հիվանդությունը դրսևորվում է ավելի վաղ և նկատվում է հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ժառանգական կուտակման և հանկարծակի սրտային մահվան ավելի բարձր հաճախականություն, քան առանց մուտացիայի հիվանդների մոտ [19, 24]: Այդ հիվանդների մոտ նաև նկատվում է ավելի արտահայտված հիպերտրոֆիայի, միկրովասկուլյար դիսֆունկցիայի և սրտամկանի ֆիբրոզի հակում [25]: Որոշ հետազոտություններում ենթադրվել է, որ որոշ սարկոմերային սպիտակուցներ կոդավորող գեներում մուտացիաները բնութագրվում են ավելի լուրջ կանխատեսմամբ, քան այլ գեների մուտացիաները, սակայն այս ուսումնասիրությունները կատարվել են հիվանդների ոչ մեծ խմբերի վրա, երբեմն հետազոտությունների միջև նկատվել է անհամաձայնություն և նրանք սահմանափակված են եղել առանձին մուտացիաների հազվադեպությամբ [26-32]: Անհատների մինչև 5%-ը հանդիսանում է սարկոմերային սպիտակուցները կոդավորող գեների մի քանի մուտացիաների կրող և նրանց մոտ առկա է հիվանդության առավել վաղ դրսևորման և ավելի ծանր ֆենոտիպի միտում [33-35]:

4.2. Մետաբոլիկ հիվանդություններ

Շատ ժառանգական հիվանդություններ ասոցացվում են ծախս փորոքի հիպերտրոֆիայի հետ: Նրանց մեծամասնությունը ժառանգվում են աուտոսոմ-ռեցեսիվ տիպով, սակայն կան նաև մի քանի X-կապակցված հիվանդություններ [21]: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով մեծահասակների մոտ առավել հաճախ հանդիպող մետաբոլիկ հիվանդություններն են Անդերսոն-Ֆաբրիի հիվանդությունը (0,5-1% 35-40 տարեկանից բարձր տարիքի հիվանդների

մոտ [36]) և ադենոզին-մոնոֆոսֆատ ակտիվացնող պրոտեին-կինազայի (PRKAG2) գամմա-2-ենթամիավորի գենի մուտացիան մոտ 1% հաճախանությամբ [37] Լիզոսոմ-ասոցացվող թաղանթային սպիտակուց-2 (LAMP2) գենի մուտացիան, որը հանգեցնում է Դանոնի հիվանդության, տատանվում է 0,7-2,7% դիապազոնում [38]: Մնալով հազվադեպ հիվանդություն, մետաբոլիկ հիվանդությունները գրավում են ավելի նշանակալի մաս հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով երեխաների և դեռահասների մոտ:

4.3 Միտոքոնդրիալ կարդիոմիոպաթիաներ

Միտոքոնդրիոմների առաջնային հիվանդություններն առաջանում են կորիզային կամ միտոքոնդրիալ ԴՆԹ-ի մուտացիաներից, որոնք փոխանցվում են ժառանգական աուտոսոմ-դոմինանտ, աուտոսոմ-ռեցեսիվ, X-կապակցված և մայրական տիպերով [39]: Առավել հաճախ հանդիպում են նրանք, որոնք առաջանում են շնչառական շղթայի կոմպլեքսի սպիտակուցները կոդավորող գեների մուտացիայի հետևանքով: Միտոքոնդրիալ հիվանդությունների կլինիկական դրսևորումները սովորաբար տատանվում են դրսևորման ժամանակի, սպեկտրի և այլ օրգանների ախտահարման ծանրության մեջ:

4.4. Նյարդամկանային հիվանդություններ

Բացառությամբ Ֆրիդրեյքի ատաքսիայի [40,41], հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիան հանդիսանում է նյարդամկանային հիվանդությունների հազվադեպ դրսևորում [21]: Այն ցույց է տրվել որոշ մկանային դիստրոֆիաների և բնածին կմախքային միոպաթիաների համար (օրինակ, նեմալինային միոպաթիան) [42] և նաև ասոցացվում է FHL1 գենի մուտացիայի հետևանքով մկանային թուլության և կոնտրակտուրաների հետ [43]: Դեսմինի գենի մուտացիան սովորաբար հանգեցնում է դիլատացիոն կամ ռեստրիկտիվ կարդիոմիոպաթիաների, սակայն կարող է դրսևորվել ինչպես հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա՝ AV պաշարմամբ [44]:

4.5 Մալֆորմացիայի համախտանիշներ

Որոշ մալֆորմացիայի համախտանիշներ ասոցացվում են հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի հետ: Նրանցից առավել հաճախ հանդիպողը MAPK ազդանշանային ուղին կոդավորող գեներն են, ներառյալ՝ Նունանի համախտանիշը [45], LEOPARD համախտանիշը [46,47] և Կոստելլոի համախտանիշը [48]: Նրանց մեծամասնությունն ախտորոշվում է մանկական հասակում, սակայն ավելի մեղմ ձևերը (օրինակ, Նունանի համախտանիշը) կարող են շուտ չբացահայտվել և նույնականացվել ավելի ուշ:

4.6 Ինֆիլտրատիվ հիվանդություն/բորբոքում

Սրտի ամիլոիդոզը հնագեցնում է ձախ և աջ փորոքների, միջնախասրտային միջնապատի և նախասիրտ-փորոքային փականների հաստացմանը [49]: Ժառանգական տրանստիրետինային (TT) և AL (թեթև շղթաների) ամիլոիդոզը կարող է իզոլացված ձևով ախտահարել սիրտը կամ ընդգրկել այլ օրգաններ, այն դեպքում, երբ սովորական սենիլային TT-ամիլոիդոզն ախտահարում է գլխավորապես սիրտը և կարպալ ուղու կապանը: Սուր միոկարդիտի ժամանակ սրտամկանի այտուցը և բջջային ինֆիլտրացիան կարող են նմանակեղծել (իմիտացնել) հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա, սակայն դրանք հանդիսանում են անցողիկ ֆենոմեն և ուղեկցվում են այլ կլինիկական և լաբորատոր տվյալներով, որոնք օգնում են ախտորոշման հարցում [50,51]:


4.7.Ներզատական հիվանդություններ

Տրանզիտոր փորոքային հիպերտրոֆիան կարող է դիտվել շաքարային դիաբետով մայրերի մոտ հղիության ժամանակ՝ նույնիսկ շաքարային դիաբետի բավարար հսկողության դեպքում [52]: Մեծահասակների մոտ ձախ փորոքի հիպերտրոֆիա գրանցվել է ֆեոքրոմոգիտոմայի [53] և ակրոմեգալիայի [54] ժամանակ, սակայն առաջնային էնդոկրինային հիվանդության բուժումը նպաստում է հիպերտրոֆիայի վերացմանը:

4.8 Դեղամիջոցներ

Որոշ դեղամիջոցների երկարատև օգտագործումը, այդ թվում՝ անաբոլիկ ստերոիդների, տակրոլիմուսի, հիդրոքսիբլորոֆինի ընդունումը կարող է լինել ձախ փորոքի հիպերտրոֆիայի պատճառ, սակայն դրանք հազվադեպ են բերում ձախ փորոքի պատի ≥ 1.5 սմ հաստացմանը [55-57]:

5.0 Ախտորոշում



Նկար 2

5.1. Ախտորոշիչ չափանիշներ

5.1.1 Մեծահասակներ

Մեծահասակների մոտ ՀԿՄՊ ախտորոշվում է ցանկացած վիզուալիզացիայի մեթոդով (էխ-ՍԳ, ՄՌՇ, ՀՇ) հաստատված ՁՓ-ի մեկ կամ ավելի սեգմենտներում պատի հաստության 15 մմ և ավելի ավելացման դեպքում, որը պայմանավորված չէ բացառապես ձախ փորոքի գերծանրաբեռնվածությամբ: Գենետիկ և ոչ գենետիկ հիվանդությունները կարող են արտահայտվել ձախ փորոքի պատի քիչ արտահայտված հաստացմամբ (13-14 մմ), որի դեպքում ՀԿՄՊ ախտորոշումը պահանջում է լրացուցիչ տվյալներ (ընտանեկան անամնեզ, արտասրտային ախտանշաններ և առանձնահատկություններ, ԷՍԳ խանգարումներ, լաբորատոր հետազոտություններ, սրտի մուլտի-մոդալ վիզուալիզացիա):

Ախտորոշման հիմնական դժվարությունները պայմանավորված են.

1. Հիվանդության ուշ փուլերի դրսևորումով, որն ուղեկցվում է ձախ փորոքի դիլատացիայով և/կամ հիպոկիինեզով, ձախ փորոքի պատի հաստության նվազմամբ:

2. Ինտենսիվ սպորտային պարապմունքների ժամանակ առաջացած ֆիզիոլոգիական հիպերտրոֆիայով:
3. Պացիենտների ուղեկցող հիվանդություններով (օրինակ զարկերակային հիպերտենզիա, փականային հիվանդություններ):
4. Տարեց անձանց մոտ միջփորոքային միջնապատի բազալ հատվածի իզոլացված հիպերտրոֆիայով:

5.1.2 Երեխաներ

Ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների մոտ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ախտորոշումը պահանջում է ձախ փորոքի պատի հաստացում՝ ենթադրվող միջին արժեքից 2 ստանդարտ շեղումով:

(z-գործակից, որտեղ z-գործակիցը բնորոշվում է որպես պոպուլյացիոն միջինից ստանդարտ շեղումների քանակ):

5.1.3 Ազգականներ

ՀԿՄՊ կլինիկական ախտորոշումն առաջին կարգի ազգականների մոտ հիմնավորվում է ձախ փորոքի մեկ կամ ավելի սեգմենտներում 13մմ և ավելի պատի հաստացումով (չափված ցանկացած վիզուալիզացիայի մեթոդով էխո-սգ, ՄՌՇ, ՀՇ), որը պայմանավորված չէ այլ պատճառներով:

Գենետիկ տիպերի հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների ընտանիքներում մուտացիայի կրողները կարող են ունենալ ախտորոշման համար ոչ այնքան արժեք ներկայացնող մորֆոլոգիական անոմալիաներ, որոնք երբեմն զուգակցվում են ԷՍԳ փոփոխությունների հետ: Չնայած այդ անոմալիաների սպեցիֆիկությունը ցածր է, սակայն ընտանեկան հիվանդությունների կոնտեքստում նրանք կարող են վկայել չափավոր կամ վաղ դրսևորված հիվանդության մասին:

Նշանների և ախտանշանների օրինակներ, որոնք թույլ են տալիս ենթադրել որոշակի ախտորոշման մասին (մոդիֆիկացված է ըստ Rapezzi et al.)	
Ախտանշաններ/նշաններ	Ախտորոշում
Ուսման դժվարություններ Ինտելեկտուալ ուշացում	.Միտոքոնդրիալ հիվանդություններ .Նունան/LEOPARD/Կոստելլո

	<p>համախտանիշներ</p> <ul style="list-style-type: none"> . Դանոնի հիվանդություն
Նեյրոսենսոր ծանրալսություն	<p>.Միտոքոնդրիալ հիվանդություններ (հատկապես համակցված դիաբետի հետ)</p> <ul style="list-style-type: none"> . Անդերսոն – Ֆաբրիի հիվանդություն . LEOPARD սինդրոմ
Տեսողական խագարում	<p>.Միտոքոնդրիալ հիվանդություններ (ցանցաթաղանթի հիվանդություններ, տեսողական նյարդի ատրոֆիա)</p> <p>.TT-միջնորդավորված ամիլոիդոզ (ապակենման մարմնի բամբականման տիպի պղտորում)</p> <p>.Դանոնի հիվանդություն (պիզմենտային ռետինիտ)</p> <p>.Անդերսոն–Ֆաբրիի հիվանդություն (կատարակտա, եղջերաթաղանթի բորբոքում)</p>
Քայլվածքի խանգարում	<ul style="list-style-type: none"> . Ֆրիդրեյխի ատաքսիա
Պարեսթեզիաներ/սենսոր անոմալիաներ/նեյրոպաթիկ ցավեր	<ul style="list-style-type: none"> .Ամիլոիդոզ . Անդերսոն – Ֆաբրիի հիվանդություն
Կարպալ ուղու համախտանիշ	<p>.TT-միջնորդավորված ամիլոիդոզ (հատկապես տղամարդկանց մոտ բիլատերալ ախտահարման ժամանակ)</p>
Մկանային թուլություն	<ul style="list-style-type: none"> . Միտոքոնդրիալ հիվանդություններ . Գլիկոգենի կուտակման հիվանդություններ . FHL-1 գենում մուտացիաներ . Ֆրիդրեյքի ատաքսիա
Աչքի պտոզ	<ul style="list-style-type: none"> . Միտոքոնդրիալ հիվանդություններ . LEOPARD/Նունան համախտանիշներ .Միոտոնիկ դիստրոֆիա
Լենտիգո / <café au lait> բծեր	<p>LEOPARD/Նունան համախտանիշներ</p>

Անգիոկերատոմա, հիպոհիդրոզ	Անդերսոն–Ֆարրիի հիվանդություն
Կրճատումներ. FHL-1–պրոտեին–1 չորս ու կես LIM–դոմեններով, LEOPARD–լենտիգո, ԷՍԳ անոմալիաներ, ակնային հիպերտելորիզմ, թոքային ստենոզ, սեռական անոմալիա, աճի դանդաղում և նեյրոսենսոր ծանրալսություն, TT–տրանսթիրետին	

Մի քանի հատկանիշների առկայությունն ավելացնում է հիվանդության կանխարգելման ճշգրտությունը գենոտիպային պոպուլյացիայում [59-61]:

Ընդհանուր առմամբ, ցանկացած անոմալիայի առկայությունը (օրինակ, անոմալ միոկարդիա և հյուսվածքային դոպլեր հետազոտությունները, միտրալ փականի փեղկի (փեղկերի) ձգումը և ոչ ամբողջական սիստոլիկ առաջնային շարժումը կամ պտկածև մկանի անոմալիաները, հատկապես ԷՍԳ խագարումների առկայության դեպքում ավելացնում են ազգականների մոտ հիվանդության հավանականությունը [59,65,66]:

5.2. Անամնեզ և ֆիզիկական հետազոտություն

Տարիքն ամենակարևոր գործոններից մեկն է, որին պետք է ուշադրություն դարձնել հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիաների հնարավոր պատճառներն ուսումնասիրելիս: Օրինակ, ժառանգական մետաբոլիկ հիվանդությունները և բնածին դիզմորֆիկ համախտանիշներն ավելի հաճախ են հանդիպում նորածինների, քան մեծ տարիքի երեխաների և մեծահասակների մոտ, իսկ TTL–ամիլոիդոզն ավելի հաճախ հանդիպում է 65 անց տղամարդկանց մոտ:

Տոհմաճառի երրորդ և չորրորդ սերնդի գեներացիայի կառուցումն օգնում է պարզելու հիվանդության գենետիկ պատճառները և բացահայտում ընտանիքի այլ անդամների, որոնց մոտ հիվանդության զարգացման ռիսկը բարձր է :

Հատուկ ուշադրություն են պահանջում այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են հանկարծակի սրտային մահը, չբացատրվող սրտային անբավարարությունը, սրտի տրանսպլանտացիան, ութամսվարի կամ դեֆիբրիլյատորի իմպլանտացիան, համակարգային հիվանդությունների մասին տեղեկությունները (ինսուլտ երիտասարդ տարիքում, կմախքային մկանների թուլություն, երկամային դիսֆունկցիա, դիաբետ, խլություն և այլն):

Տոհմաճառի վերլուծությունը կարող է նաև թույլ տալ ենթադրել ժառանգական տեսակը: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիաների գենետիկ ձևերը մեծամասամբ ժառանգվում են

առատոսոմ-դոմինանտ տեսակով և բնորոշվում են ամեն սերնդի մեջ հիվանդների առկայությամբ, ծնողների երկու սեռից փոխանցումով (ներառյալ հայր-որդի փոխանցում) և հաջորդ սերնդի համար 50% ռիսկով:

Առատոսոմ-ռեցեսիվ ժառանգականությունը, հավանական է, երբ երկու ծնողներն առողջ են և ունեն ազգակցական կապ : Երբ կինը փոխանցում է հիվանդությունը երկու սեռերի երեխաներին, անհրաժեշտ է հաշվի առնել միտոքոնդրիալ ԴՆԹ-ի մուտացիայի հավանականությունը:

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով հիվանդ բազմաթիվ մարդիկ չունեն գանգատներ կամ դրանք աննշան են: Այդ դեպքում ՀԿՄՊ ախտորոշումը կարող է լինել պատահական կամ սքրինինգի արդյունքում:

Որոշ հիվանդներ գանգատվում են կրծքահեղձուկի ցավերից, հևոցից, սրտխփոցից, ուշագնացություններից: Բազմաթիվ արտասրտային ախտանիշներ կարող են նպաստել ախտորոշմանը [67]: Ընդհանուր զննումը նաև հեշտացնում է մետաբոլիկ կամ այլ համախտանիշներով պայմանավորված հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիաների ախտորոշումը: Պարադոքսալ կերպով սիրտ-անոթային հիվանդությունների ժամանակ հետազոտությունները հաճախ տալիս են նորմալ արդյունք, սակայն ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով հիվանդների մոտ կարող են ի հայտ գալ բազմաթիվ տիպիկ առանձնահատկություններ, ներառյալ զարկերակային պոլսի անկայունությունը, կամ կրծոսկրի ձախ եզրով սիստոլիկ աղմուկի առկայությունը, որը տարածվում է մինչև կրծոսկրի աջ, վերին եզր և գագաթ: Աղմուկն ավելի արտահայտված է փորոքային նախաձանրաբեռնվածության իջեցման կամ հետձանրաբեռնվածության իջեցման պատկերի, օրինակ նստած դիրքից ոտքի կանգնելիս, Վալսալվայի փորձի ժամանակ: Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով հիվանդների մեծ մասն ունի նաև միտրալ հետհոսքի նշաններ:

ԷՍԳ անոմալիաներ, որոնք թույլ են տալիս ենթադրել կոնկրետ ախտորոշման և մորֆոլոգիական տարբերակի մասին	
Առանձնահատկություններ	Մեկնաբանություններ
AV-պաշարում	AV-հաղորդականության հարաճող դանդաղումը հաճախ հանդիպում է միտոքոնդրիալ հիվանդությունների ժամանակ, որոշ կուտակման հիվանդությունների ժամանակ (ներառյալ Անդերսոն-Ֆաբրիի հիվանդությունը), ամիլոիդոզ,

	դեսմինոպաթիա և PRKAG2 գենում մուտացիա ունեցող պացիենտների մոտ:
Ձախ փորոքի արտահայտված հիպերտրոֆիա (ըստ Սոկոլովի բալլը > 50)	QRS կոմպլեքսի չափից ավելի բարձր վոլտաժը բնորոշ է կուտակման հիվանդություններին, ինչպիսին են Պոմպեի և Դանոնի հիվանդությունները, սակայն այն կարող է նաև լինել միայն փորոքների վաղաժամ գրգռման հետևանքով:
QRS կոմպլեքսի ցածր վոլտաժ (կամ նորմալ վոլտաժ չնայած ձախ փորոքի պատի հաստության մեծացման)	QRS կոմպլեքսի ցածր վոլտաժը պերիկարդում հեղուկի, ճարպակալման և թոքերի հիվանդության բացակայության դեպքում հազվադեպ է հանդիպում հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ժամանակ (բացառությամբ դեկոմպենսացիայի փուլերի դեպքերի), սակայն հանդիպում է AL-ամիլոիդոզի մինչև 50% դեպքերում և TT-ամիլոիդոզի մինչև 20% դեպքերում: ՀԿՄՊ-ի և ամիլոիդոզի սրտային ձևի միջև տարբերակիչ ախտորոշումն ավելի հեշտանում է, երբ ավելացվում է QRS-կոմպլեքսի և ձախ փորոքի պատի հաստության միջև հարաբերությունը:
QRS- կոմպլեքսի վեկտորի արտահայտված առաջային (հյուսիս-արևմտյան) շեղում	Հանդիպում է Նունանի համախտանիշով պացիենտների մոտ, ովքեր ունեն արտահայտված բազալ հիպերտրոֆիա, որը տարածվում է աջ փորոքի արտատար հատված:
Հսկա բացասական T ատամիկ (>10 մմ)	Պրեկորդիալ և/կամ առաջակողմնային արտածումներում հսկա բացասական T ատամիկը խոսում է ձախ փորոքի գագաթի ընդգրկման մասին:
Q ատամիկի անոմալ տևողությունը >40 մվ և/կամ > R-ատամիկի խորության 25%-ից և/կամ գոնե երկու արտածումներում խորությունը >3 մմ բացառությամբ aVR	Առաջակողմնային արտածումներում անոմալ Q ատամիկը, սովորաբար դրական T ալիքով, ասոցացվում է ձախ փորոքի ասիմետրիկ հիպերտրոֆիայի հետ: Q-ատամիկի անոմալ տևողությունը (≥ 40 մվ) ասոցացվում է ֆիբրոզ փոխարինման հատվածների հետ:
Կարճ PR	Փորոքների վաղաժամ գրգռում-կուտակման հիվանդությունների

ինտերվալ/վաղաժամ գրգռում	(Պոմպե, PRKAG2 և Դանոն) և միտոքոնդրիալ հիվանդությունների (MELAS, MERFF) հաճախ հանդիպող ֆենոմեն: Անդերսոն-Ֆաբրիի հիվանդության ժամանակ հանդիպող կարճ PR ինտերվալ՝ առանց փորոքների վաղաժամ գրգռման:
Կամարաձև ST-էլևացիա կրծքային կողմնային արտաձումներում	Ապիկալ կամ դիստալ հիպերտրոֆիայով որոշ պացիենտների մոտ զարգանում են փոքր գագաթային անևրիզմաներ, որոնք երբեմն ասոցացվում են սրտամկանի ֆիբրոզի հետ: Նրանք հայտնաբերվում են միայն սրտի ՄՌՏ հետազոտության, վենտրիկուլոգրաֆիայի կամ էխո-սգ կոնտրաստավորման միջոցով, հաճախ ասոցացվում են կողմնային-կրծքային արտաձումներում ST էլևացիայի հետ:
Կրճատումներ. MELAS-միտոքոնդրիալ էնցեֆալոպաթիա, լակտատ-ացիդոզ, ինսուլտաման էպիզոդներ, MERRF-միոկլոնուս-էպիլեպսիա, < հավասար կարմիր թելիկներ >, PRKAG 2-ադենոզին-մոնոֆոսֆատ-ակտիվացնող պրոտեին-կինազի գամմա-2 ենթամիավոր, AV-ատրիովենտրիկուլյար, AL-թերևս շղթաների ամիլոիդոզ, ՀԿՄՊ-հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա, ՄՌՏ-մագնիսառեզոնանսային տոնոգրաֆիա, TT-տրանսթիրետին:	

5.3. Էլեկտրասրտագրություն

Ստանդարտ էլեկտրասրտագրությունը հիվանդության սկզբնական շրջանում կարող է լինել նորմալ (ըստ հղված հետազոտությունների՝ 6 % պացիենտների մոտ), բայց սովորաբար հայտնաբերվում են ձախ փորոքի հիպերտրոֆիայի տարբեր նշանների կոմբինացիաներ. ST – անոմալիաներ, T-ալիքի անոմալիաներ, ախտաբանական Q ատամիկ [68]: Այս նշանները կարող են պայմանավորված լինել այլ ախտաբանական պատճառներով, ինչպիսիք են սրտամկանի իշեմիան կամ ինֆարկտը, բայց էխո-սգ, ՄՌՇ պատկերի համատեղ մեկնաբանությունը, տարիքը, ժառանգականության տիպը, ասոցացվող կլինիկական դրսևորումները կարող են վկայել հիվանդության մասին կամ հնարավորություն տալ ճշտել հիպերտրոֆիայի կամ սպինների տարածվածությունը սրտամկանում:

Այդ նպատակով հաստատված կամ ենթադրվող հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտներին խորհուրդ է տրվում ԷՍԳ առաջնային հետազոտման ժամանակ և պետք է կրկնել ամեն անգամ, երբ փոխվում են հաստատված հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով

պացիենտների ախտանիշները: ԷՍԳ-ն նաև հանդիսանում է զգայուն, սակայն ոչ սպեցիֆիկ հիվանդության մարկեր ազգականների մոտ [61]:

Երկարատև ԷՍԳ-մոնիտորինգով հայտնաբերվող առիթմիաների հաճախականությունը պայմանավորված է տարիքով: 120-200 զ/ր հաճախականությամբ անախտանիշ, ոչ կայուն փորոքային տախիկարդիան հայտնաբերվում է ՀԿՄՊ-ով մեծահասակ պացիենտների 25%-ի մոտ [69,70]: Երկարատև ԷՍԳ-մոնիտորինգի ժամանակ պացիենտների ոչ պակաս 38% -ի մոտ գրանցվում են պարոքսիզմալ վերփորոքային առիթմիաներ [70]: Երկարատև ԷՍԳ մոնիտորինգ խորհուրդ է տրվում որպես սրտային հանկարծամահության ռիսկի գնահատման առաջնային կլինիկական հետազոտություն:

ԷՍԳ խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Ենթադրվող հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտներին խորհուրդ է տրվում ստանդարտ 12-արտաձումային էլեկտրասրտագրություն՝ ախտորոշումը հեշտացնելու և ստանալու տեղեկություններ՝ էթիոլոգիան հասկանալու համար	I	B
48-ժամյա ամբուլատոր ԷՍԳ մոնիտորինգ խորհուրդ է տրվում առաջնային կլինիկական հետազոտություն անցնող պացիենտներին՝ նախասրտային և փորոքային առիթմիաները հայտնաբերելու համար	I	B
Նշում - ^a խորհուրդի դասը, ^b - ապացուցողականության մակարդակը Կրճատում՝ ԷՍԳ-էլեկտրասրտագրություն		

5.4. Էխոսրտագրություն

Էխոսրտագրությունը հանդիսանում է հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ախտորոշման և հսկման հիմնական մեթոդ: Պացիենտների մեծամասնության մոտ հիպերտրոֆիան առավելապես ընդգրկում է ձախ փորոքի միջփորոքային միջնապատի բազալ հատվածները, բայց հաճախ տարածվում է կողմնային և հետին պատերի, գագաթի վրա [74]: Հաշվի առնելով, որ փորոքի պատի հաստացում հնարավոր է պրակտիկորեն ցանկացած տեղում (ներառյալ աջ փորոքը), ապա հիպերտրոֆիայի առկայությունը, արտահայտվածությունը և տարածվածությունը պետք է հաստատվի ստանդարտ արձանագրությունների (պրոտոկոլ) օգտագործմամբ՝ մի քանի խաչաձև պրոյեկցիաների վիզուալիզացիայով համադրումով: Ճառագայթի ճիշտ դիրքը և ուղղությունը օրթոդոնալ պրոյեկցիաների երկայնքով անհրաժեշտ են թեք հատումներից և պատի հաստության չափազանցումից խուսափելու համար: Ձախ փորոքի պատերի հաստության չափումը պետք է անցկացնել վերջնադիաստոլիկ փուլում, ցանկալի է կարճ առանցքային պրոյեկցիաներով: Հնարավորության դեպքում խորհուրդ է տրվում խուսափել պարաստեոնալ երկար առանցքով M-ռեժիմով չափումներից, թեք կտրվածքների հաշվին միջնապատի հաստության չափազանցումից խուսափելու համար: Պետք է պահպանել վիզուալիզացիայի բոլոր ռեժիմների համար սրտամկանի սեզմենտավորման և նոմենկլատուրայի ստանդարտիզացված մոտեցումը [75]:

5.4.1. Ձախ փորոքի պատի հաստության գնահատում

Գոյություն ունեն մեծ թվով էխոկարդիոգրաֆիկ ցուցիչներ, որոնք թույլ են տալիս անցկացնել ձախ փորոքի հիպերտրոֆիայի կիսաքանակական գնահատում, սակայն ախտորոշիչ նպատակների համար միակ առավել էական ցուցանիշ է հանդիսանում ձախ փորոքի սրտամկանի հաստությունը ցանկացած մակարդակի վրա:

Ախտորոշված կամ ենթադրվող հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիաներով պացիենտների մոտ ձախ փորոքի հաստության գնահատման համար անհրաժեշտ է ձախ փորոքի բոլոր սեզմենտների հետազոտություն բազալ հատվածներից մինչև գագաթ՝ միտրալ փականի, ձախ փորոքի միջին հատվածի և գագաթի մակարդակներում:

Ձախ փորոքի պատի հաստության ճշգրիտ գնահատումը կարող է դժվարացած լինել, երբ հիպերտրոֆիան սահմանափակված է 1-2 սեզմենտներով՝ հատկապես առաջնա-կողմնային պատով կամ գագաթով [74, 76-80]:

Այդ դեպքերում պահանջվում է լրացուցիչ նախազգուշական միջոցներ վիզուալիզացիայի ընթացքում (օրինակ կրիչի անկյունային տեղադրումը կողմնային թուլացման և կծկման հետ

կապված անճշտություններից խուսափելու համար): Նմանապես պարաստեռնալ և բազմակի գագաթային դիրքերից գագաթի մանրակրկիտ վիզուալիզացիան անհրաժեշտ է գագաթային հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիան բացահայտելու համար: Եթե սեզմենտն աղեկվատ չի վիզուալիզացվում պետք է նկատի ունենալ ուլտրաձայնային կոնտրաստ նյութերի միջոցով ձախ փորոքի կոնտրաստավորման կամ սրտի ՄՌՇ հետազոտության հնարավորությունը[81]:

5.4.2. Ձախ փորոքի արտատար հատվածի և միտրալ փականի ասոցացված անոմալիաներ

Պացիենտների մոտավորապես 1/3-ի մոտ նկատվում է հանգիստ վիճակում միտրալ փականի փեղկերի առաջնասիստոլիկ շարժում, որը հանգեցնում է ձախ փորոքի արտատար հատվածի օբստրուկցիայի, այն դեպքում, երբ մյուս 1/3-ի մոտ ներկայացված է լատենտ օբստրուկցիան միայն շարժման ժամանակ (ավելացնում է ծանրաբեռնվածությունը և ձախ փորոքի կծկողականությունը) [82-85]: Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի մեջ դեր ունեցող այլ մորֆոլոգիական առանձնահատկությունները ներառում են պապիլյար մկանների անոմալիան (հիպերտրոֆիա, առաջնային և ներքին տեղակայում, միտրալ փականի փեղկին անմիջական միացում) և միտրալ փականի փեղկերի անոմալիաներ այնպիսին, ինչպիսին են երկարումը կամ ներածումը [78,86-90]:

Չնայած ձախ փորոքի արտատար ուղու դինամիկ օբստրուկցիան հանդիպում է հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ, սակայն այն նաև հանդիպում է այլ դեպքերում, օրինակ, միտրալ փականի ֆիբրոզ օղի հետին հատվածի կալցիֆիկացիա, հիպերտենզիա, հիպովոլեմիա և բարձր կծկողականության վիճակներ:

Ըստ սահմանման, ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիան դա ձախ փորոքի արտատար ուղու մեջ ակնթարթորեն առաջացող ճնշման բարձրացումն է ≥ 30 մմ ս.ս. գրադիենտով՝ հանգիստ վիճակում, կամ ֆիզիոլոգիական պրովոկացիաների դեպքում, ինչպիսիք են օրինակ Վալսալվայի փորձը, կանգնելը կամ ֆիզիկական ծանրաբեռնվածությունը: 50մմ ս.ս. հավասար կամ դրանից բարձր գրադիենտը հիմնականում հանդիսանում է այն շեմը, որից հետո ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիան համարվում է հեմոդինամիկ նշանակալի: Այս կոնցեպցիան հիմնավորված է այնպիսի հետազոտություններով, որոնք ցույց են տալիս այս շեմը հատելու դեպքում արյան հոսքին ցույց տրվող աճող դիմադրությունը [78]:


Երբ ձախ փորոքի խոռոչում որոշվում է գրադիենտ, կարևոր է բացառել առաջնասիստոլիկ շարժման հետ կապված օբստրուկցիայի առկայությունը, ներառյալ սուբաորտալ մեմբրանը,

միտրալ փականի փեղկերի անոմալիան և ձախ փորոքի կենտրոնական հատվածի օբստրուկցիան, հատկապես այն դեպքերում, երբ պլանավորվում է ձախ փորոքի օբստրուկցիայի վերացմանն ուղղված միջամտություն:

Համակարգային երկչափ (2D) և դոպլեր էխոսրտագրությունը սովորաբար բավական են ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի մեխանիզմը և արտահայտվածությունը բացահայտելու համար, սակայն երբ ոչ ինվազիվ վիզուալիզացիան բավարար չէ, որոշ պացիենտներին կարող է առաջարկվել տրանսէզոֆագեալ էխոսրտագրություն կամ ճնշման ինվազիվ չափում՝ համակցված ՄՌՏ հետազոտության հետ:

Միտրալ փականի առաջնասիստոլիկ շարժումը պրակտիկորեն միշտ հանգեցնում է փեղկերի նորմալ փակման անբավարարության և միտրալ հետհոսքի, որը կարող է լինել միջին-սիստոլիկից մինչև ուշ-սիստոլիկ և կենտրոնացած է ստորին-կողմնային ուղղությամբ: Միտրալ հոսքի արագության և ժամանակի հաշվումը թույլ է տալիս տարբերակել այն ձախ փորոքի արտատար ուղու տուրբուլենտությունից: Առաջնասիստոլիկ շարժմամբ միջնորդավորված միտրալ հետհոսքն իր բնույթով դինամիկ է և դրա արտահայտվածությունը կախված ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի աստիճանից փոխվում է [78,91,92]:

Կենտրոնական կամ առաջնային ուղղվածությամբ միտրալ հետհոսքի առկայության դեպքում պետք է կասկածել միտրալ փականի բնածին արատի մասին և կատարել լրացուցիչ հետազոտություններ, անհրաժեշտության դեպքում՝ տրանսէզոֆագեալ էխո-սգ:



Նկար 3

5.4.3. Լաթենտ օբստրուկցիայի գնահատումը

Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի հայտնաբերումը կարևոր է ախտանշանային բուժման և հանկարծակի սրտային մահվան ռիսկը գնահատելու համար: 2D և դոպլեր էխոսրտագրությունը Վալսալվայի փորձի ժամանակ, նստած, կիսապառկած և գրադիենտը չորոշվելու դեպքում կանգնած դիրքում, խորհուրդ է տրվում բոլոր պացիենտներին [78,93]: Սթրես-էխոսրտագրություն խորհուրդ է տրվում այն ախտանշանային պացիենտներին, որոնց մոտ պառկած վիճակում չափումների ժամանակ չի հայտնաբերվում ≥ 50 մմ ս.ս. գրադիենտ: Դեղորայքային ծանրաբեռնվածության փորձը դոբուտամինով խորհուրդ չի տրվում քանի որ չի հանդիսանում ֆիզիոլոգիական և կարող է ունենալ վատ տանելիություն: Նմանապես նիտրատները չեն առաջացնում սթրես-ինդուկցված գրադիենտ և մնում են օգտագործելու այն պացիենտների համար, որոնց մոտ հնարավոր չէ անցկացնել ֆիզիոլոգիական ծանրաբեռնվածության փորձեր [94]: Կան որոշակի վկայություններ այն մասին, որ սնունդ ընդունելուց հետո չափվող գրադիենտը լինում է ավելի բարձր, քան այն գրադիենտը, որը ստացվել է նախքան ուտելը և որ բետա – պաշարիչներով պրեմեդիկացիան ոչ հազվադեպ նվազեցնում են ձախ փորոքի արտատար տրակտում սթրես-ինդուկցված գրադիենտի հաճախականությունը և արտահայտվածությունը [95]: Քանի որ սթրես-էխոսրտագրության հանձնարարականները համեմատող տվյալները քիչ են [93,95-98], լաբորատորիաները պետք է մշակեն սեփական հանձնարարականները և համոզված լինեն, որ անձնակազմն անհրաժեշտ չափով պատրաստված է գործողությունն անցկացնելու համար:

Անախտանիշ պացիենտների մոտ պառկած վիճակում կատարվող ծանրաբեռնվածության միջամտություններն օգտակար են ռիսկը գնահատելու համար (ստրատիֆիկացիա), այն դեպքում, երբ ռուտին ծանրաբեռնվածության սթրես- էխոսրտագրությունն այս վիճակում պրոսպեկտիվ չի գնահատվել և պետք է դիտարկել միայն հատուկ պացիենտների մոտ, որոնց մոտ ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի առկայությունը կարևոր է ապրելակերպի և դեղորայքային թերապիայի մասին որոշում կայացնելիս:

5.4.4. Ձախ նախասրտի մեծացում

Ձախ նախասրտը հաճախ մեծացած է և դրա չափն արտահայտում է կարևոր կանխատեսող ինֆորմացիա [72,73,99] : Չնայած հրապարակված հետազոտությունների մեծամասնության մեջ օգտագործված է ձախ նախասրտի առաջնա-հետին տրամագիծը [100], կան

համեմատական տվյալներ, որտեղ օգտագործվում են ձախ նախասրտի ծավալի հարաբերությունը մարմնի մակերեսին [101,102]: Ձախ նախասրտի մեծացման պատճառները տարբեր են, սակայն ամենահաճախ հանդիպող մեխանիզմը հանդիսանում է առաջնա-սիստոլիկ շարժմամբ պայմանավորված միտրալ հետհոսքը և ձախ փորոքի լցման ճնշման բարձրացումը:

5.4.5. Դիաստոլիկ դիսֆունկցիայի գնահատումը

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ հաճախ զարգանում է սիստոլիկ դիսֆունկցիա և ձախ փորոքի լցման ճնշման գնահատումն օգտակար է ախտանիշների գնահատման և հիվանդության փուլի որոշման տեսանկյունից: Դոպլեր էխոսրտագրությունը հանդիսանում է դիաստոլիկ ֆունկցիայի գնահատման համար զգայուն գործիք, բայց արդյունքները ենթարկվում են ծանրաբեռնվածության պայմանների, սրտի կծկումների հաճախության, տարիքի ազդեցությանը և ոչ մի էխոկարդիոգրաֆիկ ցուցանիշ չի կարող օգտագործվել որպես ձախ փորոքի դիաստոլիկ դիսֆունկցիայի միակ ախտորոշիչ չափանիշ [103]: Այսպիսով, դիաստոլիկ ֆունկցիայի բազմակողմանի գնահատումը ներառյալ սրտամկանի դոպլեր էխո-սգ հետազոտությունը, թոքային երակներում հոսքերի արագությունը, թոքային զարկերակներում սիստոլիկ ճնշումը և ձախ նախասրտի չափը խորհուրդ են տրվում որպես ռուտին հետազոտության մաս հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիաների ժամանակ [103]: Ձախ փորոքի ռեստրիկտիվ տեսակի լեցումով պացիենտները ($E/A \geq 2$, E-ալիքի դանդաղման ժամանակը ≤ 150 մվրկ) կարող են ունենալ ոչ բարենպաստ ելքի մեծ ռիսկ՝ նույնիսկ պահպանված արտամղման ֆրակցիայի դեպքում [104,105]: Լեցման ճնշման և ինվազիվ հետազոտության միջոցով որոշված ճնշման արդյունքների համեմատական տվյալները հակասական են [106], սակայն որոշ հետազոտություններ ցույց են տալիս վաղ տրանսմիտրալ հոսքի արագության և միտրալ օղով հոսքի վաղ արագության հարաբերության բարձրացման $E/e' > 12-15$, վերջնադիաստոլիկ ճնշման աճի, ֆիզիկական ծանրաբեռնվածության տոլերանտության և կանխատեսման միջև կորելացիա [107,108]:

5.4.6 Սիստոլիկ ֆունկցիա

Ռադիալ կծկողական ֆունկցիան (արտամղման ֆրակցիա կամ կրճատման ֆրակցիան) հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով հիվանդների մոտ սովորաբար նորմալ է կամ բարձրացած, սակայն հիպերտրոֆիայի առկայության դեպքում արտամղման ֆրակցիան վատ է արտահայտում ձախ փորոքի սիստոլիկ արդյունավետությունը [109]: Սրտամկանի դոպլեր

վիզուալիզացիայի կամ speckle մեթոդով ստացվող միոկարդիալ երկայնական արագության վեկտորները և դեֆորմացիայի պարամետրերը (ձգումը և ձգման գործակիցը) հաճախ իջած են չնայած նորմալ արտամղման ֆրակցիային և գենետիկորեն ախտահարված ազգականների մոտ կարող են խանգարված լինել մինչև սրտի պատերի հաստանալը: Միոկարդիալ երկայնական դեֆորմացիաները սովորաբար իջած են հիպերտրոֆիայի շրջանում [110]:

Էխոկարդիոգրաֆիկ առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս ենթադրել կոնկրետ ախտորոշման և մորֆոլոգիական տարբերակի մասին (մոդիֆիկացված ըստ Rapezz et al.)	
Առանձնահատկություններ	Մեկնաբանություններ
Միջնախասրտային միջնապատի հաստացում	Ամիլոիդոզ
Միտրալ փականի փեղկերի հաստացում	Ամիլոիդոզ, Անդերսոն –Ֆաբրիի հիվանդություն
Աջ փորոքի ազատ պատի հաստացում	Ամիլոիդոզ, միոկարդիտ, Անդերսոն–Ֆաբրիի հիվանդություն, Նունանի համախտանիշ և դրա հետ կապված հիվանդություններ
Մինչև միջին քանակի հեղուկ պերիկարդում	Ամիլոիդոզ, միոկարդիտ
Փորոքների <հղկված> սրտամկան 2D էխոսրտագրությամբ	Ամիլոիդոզ
Կոնցենտրիկ ձախ փորոք	Միտոքոնդրիալ հիվանդություններ, TT – ամիլոիդոզ, Անդերսոն–Ֆաբրիի հիվանդություն, PRKAG2 գենի մուտացիա
Ծայրահեղ կոնցենտրիկ ձախ փորոք (պատի հաստությունը ≥ 30 մմ)	Դանոնի հիվանդություն, Պոմպեի հիվանդություն
Ձախ փորոքի գլոբալ հիպոկինեզ (ձախ փորոքի դիլատացիայով կամ առանց դիլատացիայի)	Միտոքոնդրիալ հիվանդություններ, TT – ամիլոիդոզ, PRKAG2 գենի մուտացիա, Դանոնի հիվանդություն, միոկարդիտ, սարկոմերային հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ուշ փուլեր, Անդերսոն – Ֆաբրիի հիվանդություն

Աջ փորոքի արտատար ուղու օբստրուկցիա	Նունանի համախտանիշ և դրա հետ ասոցացվող հիվանդություններ
Կրճատումներ. 2D–երկչափ, PRKAG2–ադենոզին–մոնոֆոսֆատ–ակտիվացնող պրոտեին-կինազի գամմա-2 ենթամիավոր, AV–ատրիովենտրիկուլյար, ՀԿՄՊ–հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա, TT-տրանսթրեպտին	

5.4.7 Էխոսրտագրության կարևորությունը փարբերակիչ ախտորոշման մեջ

Շատ էխոկարդիոգրաֆիկ առանձնահատկություններ կարող են վկայել սպեցիֆիկ ախտորոշման մասին [67]: Կոնցենտրիկ հիպերտրոֆիան առավել հաճախ հանդիպում է մետաբոլիկ և ինֆիլտրատիվ հիվանդությունների դեպքում, իսկ բիվենտրիկուլյար հիպերտրոֆիան և երկու փորոքների արտատար ուղու օբստրուկցիան առավել հաճախ հանդիպում են Նունանի համախտանիշի և ասոցացվող հիվանդությունների դեպքում: Միոկարդիալ կուտակման կամ ինֆիլտրատիվ հիվանդությունների մասին կարելի է ենթադրել հետևյալ նշանների դեպքում. սրտամկանի փայլուն կամ հատիկավորված կազմվածքը, պերիկարդում քիչ քանակությամբ հեղուկի առկայությունը, միջնախասրտային միջնապատի հաստացումը, աորտալ փականի հանգուցավորված հաստացումը և ռեստրիկտիվ տեսակով չափավոր իջած արտամղման ֆրակցիան:

5.4.8. Կոնփրասպ էխոսրտագրություն

Գազաթային հիպերտրոֆիան կարող է մնալ չբացահայտված, որը կարող է պայմանավորված լինել մոտակա դաշտի արտեֆակտներով: Ձախ փորոքի կողմնային պատի վատ վիզուալիզացիան նույնպես կարող է թաքցնել այդ հատվածում տեղայնացված հիպերտրոֆիան: Կասկածի դեպքում էնդոկարդի սահմանազատման համար պետք է կիրառել ներերակային ուլտրաձայնային կոնտրաստ ազենտներ [81]: Բոլոր այն հիվանդներին, որոնց պլանավորվում է սեպտալ ալկոհոլային աբլացիա, ալկոհոլի ներարկման ճշգրիտ տեղայնացման մեջ վստահ լինելու համար, խորհուրդ է տրվում ինտրակորոնար կոնտրաստ էխոկարդիոգրաֆիա:

5.4.9. Տրանսէզոֆագեալ էխոսրտագրություն

Վատ տրանսթորակալ էխոկարդիոգրաֆիկ տեսադաշտով հիվանդների համար տրանսէզոֆագեալ էխոսրտագրությունը պետք է նկատի ունենալ, որպես ՄՌՇ հետազոտության այլընտրանք կամ լրացնող հետազոտություն: Այն, հատկապես, օգտակար է անհայտ գենեզի ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով պացիենտների մոտ, սեպտալ ռեդուկցիայից առաջ միտրալ փականի վիճակը գնահատելու համար և այն դեպքում, երբ ենթադրվում է փականի բնածին անոմալիայով պայմանավորված ծանր միտրալ հետհոսք [114-117]: Սեպտալ միոմէկտոմիայի ենթարկվող հիվանդների մոտ պերիօպերատիվ տրանսէզոֆագեալ էխոսրտագրությունը պետք է օգտագործել վիրաբուժական ռազմավարությունը ճշգրտելու, վիրաբուժական բարդությունները (միջփորոքային միջնապատի դեֆեկտ և աորտալ ռեգուրգիտացիա) և ձախ փորոքի արտատար ուղու մնացորդային օբստրուկցիան վերահսկելու համար [116-118]: Հազվադեպ դեպքերում, երբ տրանսթորակալ տեսադաշտը բավարար չէ սրտամկանի կոնտրաստի վիզուալիզացիայի համար, սեպտալ ալկոհոլային աբլացիայի հսկողության համար անհրաժեշտ է սեպտալ պերֆորացվող զարկերակների ինտրակորոնար կոնտրաստավորմամբ տրանզէզոֆագեալ էխոսրտագրություն:

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիաների ժամանակ տրանսթորակալ էխոսրտագրության խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով բոլոր պացիենտներին առաջնային հետազոտման ժամանակ խորհուրդ է տրվում տրանսթորակալ 2D և դոպլեր էխոսրտագրություն հանգիստ վիճակում և Վալսալվայի փորձով՝ նստած, կիսապառկած և հետո կանգնած դիրքերում, եթե չի առաջացել ճնշման գրադիենտ	I	B
Խորհուրդ է տրվում պատի հաստության առավելագույն դիաստոլիկ չափում 2D կարճ-առանցքային դիրքում ձախ փորոքի բոլոր սեգմենտներում, հիմքից մինչև գագաթը	I	C
Խորհուրդ է տրվում ձախ փորոքի դիաստոլիկ ֆունկցիայի մանրակրկիտ գնահատում, ներառյալ միտրալ փականով պուլսային դոպլերոգրաֆիան, միտրալ օղի վրա հյուսվածքային դոպլեր	I	C

<p>արագությունները, թոքային երակներով արագությունը, թոքային զարկերակում սիստոլիկ ճնշումը և ձախ նախասրտի ծավալը և չափերը</p>		
<p>Ձախ փորոքի արտատար տրակտի <50մմ.ս. գրադիենտով (հանգիստ վիճակում կամ ինդուկցված) ախտանշանային (սիմպտոմատիկ) պացիենտներին խորհուրդ է տրվում 2D և դոպլեր էխոսրտագրություն ծանրաբեռնվածության ժամանակ, կանգնած դիրքում, նստած կամ կիսապառկած դիրքում՝ ձախ փորոքի արտատար ուղու պրովոկացնող օբստրուկցիան հայտնաբերելու և սթրես-ինդուկցված միտրալ հետհոսքը բացահայտելու համար</p>	I	B
<p>Ձախ փորոքի արտատար ուղու < 50 մմ.ս. գրադիենտով (հանգիստ վիճակում կամ ինդուկցված) անախտանշանային (ասիմպտոմատիկ) պացիենտներին խորհուրդ է տրվում 2D և դոպլեր էխոկարդիոգրաֆիա ծանրաբեռնվածության ժամանակ կանգնած, նստած կամ կիսապառկած դիրքում, եթե ձախ փորոքի արտատար ուղու գրադիենտի առկայությունը դեր ունի կյանքի կենսակերպի խորհուրդների և դեղորայքային թերապիայի նշանակման մեջ</p>	IIb	C
<p>Սուբօպտիմալ որակով պատկերման կամ ձախ փորոքի ենթադրվող անևրիզմալով կամ հիպերտրոֆիայով հիվանդների մոտ տրանսթորակալ էխոսրտագրությունը ներերակային կոնտրաստանյութերով, պետք է դիտարկել որպես այլընտրանք՝ սրտի ՄՌՏ հետազոտությանը</p>	IIa	C
<p>Ալկոհոլի կոռեկտ տեղայնացումն ապահովելու համար սեպտալ ալկոհոլային աբլացիայի ենթարկվող բոլոր պացիենտներին խորհուրդ է տրվում ինտրակորոնար կոնտրաստ էխոսրտագրություն</p>	I	B

Նշում - ^a խորհուրդի դասը, ^b – ապացուցողականության մակարդակը, ^c – վախճանային փորձով պրովոկացիաներ կանգնելով նիտրատների օրալ ընդունումով

Տրանսէզոֆագեալ էխոսրտագրության խորհուրդներ		
	Դաս	Մակարդակ
Պերիօպերատիվ տրանսէզոֆագեալ էխոսրտագրություն խորհուրդ է տրվում այն պացիենտներին, որոնց կատարվում է սեպտալմիոմէկտոմիա, ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի մեխանիզմը ճշտելու, վիրահատության ռազմավարությունը վերահսկելու, հետվիրահատական բարդությունները գնահատելու և ձախ փորոքի արտատար ուղու մնացորդային օբստրուկցիան հայտնաբերելու համար	I	C
Տրանսէզոֆագեալ էխոսրտագրություն խորհուրդ է տրվում դիտարկել մինչև սեպտալաբլացիայի միջամտությունը միտրալ փականի գնահատման համար, կամ երբ ենթադրվում է միտրալ փականի սեփական անոմալիայով պայմանավորված արտահայտված միտրալ հետհոսք, ինչպես նաև այն պացիենտների համար, որոնց մոտ ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի մեխանիզմը պարզ չէ	IIa	C
Թիրախային զարկերակի սեպտալ պերֆորատոր ինտրակորոնար կոնտրաստի ներարկումով տրանսէզոֆագեալ էխոսրտագրություն պետք է դիտարկվի սեպտալ ալկոհոլային աբլացիայի հսկողության համար, եթե տրանսթորակալ վիզուալիզացիան անբավարար չէ սրտամկանում էխոկոնտրաստի կոռեկտ վիզուալիզացիայի համար	IIa	C
Նշում - ^a խորհուրդի դասը, ^b – ապացուցողականության մակարդակը		

5.5 Սրտի և անոթների մագնիսա-ռեզոնանսային շերտագրության հետազոտություն

Սրտի և անոթների մագնիսա-ռեզոնանսային շերտագրության հետազոտությունը ներառում է մի քանի մոտեցում, որոնք ներկայացնում են մանրակրկիտ ինֆորմացիա սրտի մորֆոլոգիայի, փորոքների ֆունկցիայի և սրտամկանի առանձնահատկությունների մասին [123]: Հաստատված կամ ենթադրվող հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ սրտի և անոթների ՄՌՇ հետազոտությունը պետք է իրականացնել վերջին հանձնարարականներին համապատասխան և պետք է իրականացվի և վերծանվի սրտի վիզուալիզացիայի և սրտամկանի հիվանդությունների գնահատման մեջ փորձ ունեցող մասնագետի կողմից:

5.5.1. Փորոքների մորֆոլոգիայի և ֆունկցիայի գնահատումը

Եթե հնարավորությունները և փորձը թույլ են տալիս, հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ սրտի ՄՌՇ հետազոտությունը պետք է դիտարկել որպես հետազոտության բազային մեթոդ:

Որակյալ էխոսրտագրային պատկերով պացիենտների մոտ ՄՌՇ հետազոտությունը ներկայացնում է նման ինֆորմացիա փորոքների ֆունկցիայի և մորֆոլոգիայի մասին [124,125], սակայն այն օգտակար է վատ ակուստիկ պատկերմամբ պացիենտների ախտորոշման համար, կամ երբ որոշ շրջաններ վատ են վիզուալիզացվում, ինչպիսիք են ձախ փորոքի առաջնակողմնային պատը, գագաթը, աջ փորոքը [126,127]: Ինչպես և 2D էխոսրտագրության դեպքում, պատի հաստության գերագնահատումը կարող է պայմանավորված լինել անկյունավորված կտրվածքներով (հատկապես, ձախ փորոքի գագաթային շրջանում), կամ հարկրծոսկրային կառուցվածքների ներառման (օրինակ մկանային կամրջակների կամ կեղծ խորդանների) հաշվին: Պատի հաստության գերագնահատումը հնարավոր է նաև էխո-պատկերման խանգարված գրադիենտի դեպքում, այդ դեպքում նախընտրելի է SSFP հաջորդականությամբ արձանագրություններով (պրոտոկոլով) գրանցումը: Ձախ փորոքի զանգվածի որոշման տեսանկյունից սիրտ-անոթային ՄՌՇ հետազոտությունն ունի առավելություններ տրանսթորակալ էխոկարդիոգրաֆիայի համեմատ, սակայն ձախ փորոքի զանգվածը թույլ է կորելացվում պատի մաքսիմալ հաստության հետ և կարող է նորմալ լինել ասիմետրիկ հիպերտրոֆիայով պացիենտների մոտ, հատկապես, երբ այն ներառում է ձախ փորոքի

երկուսից պակաս սեգմենտ [124,128]: Ձախ փորոքի գագաթային կամ առաջնակողմնային մասերի հիպերտրոֆիաների հայտնաբերման, անևրիզմաների [129], թրոմբների [130] հայտնաբերման տեսանկյունից, սիրտ-անոթային համակարգի ՄՌՇ հետազոտությունն ունի առավելություն ստանդարտ 2D էխոսրտագրության համեմատ և ավելի զգայուն է հիվանդության ավելի թեթև դրսևորումների հայտնաբերման տեսանկյունից, ինչպիսիք են օրինակ, սարկոմերային սպիտակուցների գենային մուտացիայով պացիենտների մոտ սրտամկանի կրիպտաների և անոմալ պտկային մկանների հայտնաբերումը [131-133]:

Հոսքի փուլային արագության քարտեզավորման արձանագրությունը կարող է օգտագործվել ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով հիվանդների մոտ ձախ փորոքի արտատար ուղիով արյան հոսքի մաքսիմալ արագությունը որոշելու նպատակով, սակայն հոսքերի առավելագույն արագության ստացման համար պատկերի դիրքերի պատշաճ համադրումը հանդիսանում է շատ երկարատև գործընթաց և կարող է հանգեցնել սխալների: Փուլերի խառնումը ոկսելներով և փուլի տեղաշարժի պատճառով ազդանշանի կորցնելը նույնպես բարդացնում է տուրբուլենտ հոսքի ճշգրիտ քանակական գահատումը և ձախ փորոքի արտատար ուղու գրադիենտները կարող են հաշվարկվել միայն հանգիստ վիճակում: Այդ պատճառով դոպլեր էխոսրտագրությունը հանդիսանում է ընտրության մեթոդ ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի գնահատման համար: Նմանապես, չնայած ՄՌՇ փուլ-կոնտրաստավորման մեթոդով ձեռք բերված տրանսմիտրալ հոսքի արագությունը և թոքային երակի հոսքերը հանդիսանում են ճշգրիտ տվյալներ, ամենօրյա պրակտիկայում էխոսրտագրությունը հանդիսանում է դիաստոլիկ ֆունկցիայի գնահատման նախընտրելի մեթոդ:

Առանձին դեպքերում, երբ էխոկարդիոգրաֆիկ պատկերը օպտիմալ չէ, սրտի ՄՌՇ հետազոտությունը կարող է լինել օգտակար վիրաբուժական միոմէկտոմիայի նախավիրահատական պլանավորման համար, հատկապես բազմակի մակարդակներով ձախ փորոքի օբստրուկցիայով (ձախ փորոքի արտատար ուղու և կենտրոնական խոռոչ) և աջ փորոքի արտատար ուղու անոմալիայով պացիենտների համար: Սրտի ՄՌՇ հետազոտության միջոցով կարելի է նաև քանակապես գնահատել սեպտալ ալկոհոլային աբլացիայով պայմանավորված հյուսվածքի նեկրոզը, ինչպես նաև ճշգրտել այդ միջամտությամբ պայմանավորված սպիի տեղակայումը և ձախ փորոքի զանգվածի նվազումը [134, 135]:

5.5.2 Սրտամկանի ֆիբրոզ

Հիմք ընդունելով տարբեր հյուսվածքներին բնորոշ մագնիսային հատկությունները և գադոլինիումի հիմքով կոնտրաստային ազեոնների տարածումը, սրտի ՄՌՇ հետազոտությունը կարող է օգտագործվել ֆիբրոզի հետևանքով ինտերստիցյալ հյուսվածքի չափի ավելացման հայտնաբերման նպատակով: Գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումը նկատվում է 65 % պացիենտների մոտ, սովորաբար հիպերտրոֆիայի զոնայում ոչ միատար պատկերի տեսքով և աջ փորոքի առաջնային և հետին շրջանների կետային միացումների տեսքով [136]: Գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումը հազվադեպ է հանդիպում հիպերտրոֆիայի օջախներից դուրս, բացառությամբ հիվանդության խորը փուլերի, որոնց դեպքում հաճախ հանդիպում է գադոլինիումի ազդանշանի ամբողջական (տոտալ) ուշ ուժեղացում՝ համակցված պատերի բարակման հետ [136]: Գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումը կարող է ասոցացվել սրտամկանի կոշտության ավելացման, ձախ փորոքի ոչ բարենպաստ ռեմոդելավորման հետ և գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացման տարածումը ասոցացվում է պատի կծկողականության խանգարման բարձր հաճախականության հետ: Գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումը նշանակալիորեն փոփոխվում է պայմանավորված այն բանով, թե որ քանակական գնահատման մեթոդն է օգտագործվում, այդ մեթոդներից միայն երկու ստանդարտների շեղման մեթոդն է հաստատվել աուտոպսիայի արդյունքներով [137]: Գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացման գնահատումը մինչև ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի ինվազիվ բուժումը կարող է օգտակար լինել առավել օպտիմալ թերապիայի ընտրության համար՝ հաշվի առնելով միջնապատի ֆիբրոզի աստիճանը:

5.5.3. Գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումը և կանխատեսումը

Գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացման և կանխատեսման (պրոգնոզի) միջև կապը գնահատվել է 6 հետազոտություններում [138-143], որոնցից 4-ի մեջ ներառված է մետաանալիզ [144]: Բոլոր հրապարակված հետազոտությունները սահմանափակվել են ոչ պատահական ընտրությամբ և պացիենտների ուղղորդմամբ, ռիսկի ոչ ամբողջական գնահատմամբ, սկանավորման և գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացման քանակական գնահատման համար օգտագործվող հանձնարարականների (պրոտոկոլների) տարբերություններով: Հավաքագրված տվյալները վկայում են գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացման և սիրտ-անոթային մահացության, սրտային անբավարարությունից մահվան և բոլոր պատճառներից մահացության միջև կապի օգտին, բայց ցուցադրում են միայն հանկարծակի սրտային մահվան ավելացման միտում: Գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումն ասոցացվում է

հոլտեր մոնիտորինգով հայտնաբերվող ոչ կայուն փորոքային տախիկարդիաների հետ [140-142]:

Հաշվի առնելով բոլոր տվյալները, գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացման տարածումը սրտի ՄՌՇ-ի վրա ունի որոշ նշանակություն սիրտ-անոթային մահացության կանխատեսման մեջ, սակայն ժամանակակից տվյալները չեն հաստատում գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացման նշանակությունը հանկարծակի սրտային մահվան ռիսկի գնահատման համար:

5.5.4. Տարբերակիչ ախտորոշում

Սրտի ՄՌՇ հետազոտությունը հազվադեպ է տարբերակում հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի պատճառները՝ պայմանավորված իրենց սեփական մագնիսային հատկություններով, սակայն ինտերստիցիալ հյուսվածքի տարածվածությունը և արտահայտվածությունը կարող են կոնկրետ պացիենտի կոնտեքստում օգնել ենթադրել ախտորոշման մասին: Անդերսոն–Ֆաբրիի հիվանդությունը բնութագրվում է չկոնտրաստավորված T1 ազդանշանով և հետին–կողմնային շրջանի գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացմամբ [145,146]: Սրտի ամիլոիդոզի դեպքում հաճախ հանդիպում է գլոբալ, սուբէնդոկարդիալ, և սեզմենտար գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացում, և սրտամկանից և արյունահոսքից առաջացող T1 ազդանշանների գադոլինիումի սրտամկանի և ցիրկուլատոր պուլերի կինետիկայի բարձր սպեցիֆիկության պատտերն [22, 147]: Ֆիբրոզի բացակայությունը կարող է ինֆորմատիվ լինել հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի և մարզիկների մոտ ֆիզիոլոգիական ադապտացիայի տարբերակման համար, սակայն գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումը կարող է բացակայել նաև հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով անձանց մոտ, հատկապես երիտասարդների և հիվանդության սկզբնական շրջանում գտնվող անձանց մոտ:

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ժամանակ մագնիսառեզոնանսային շերտագրության խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Խորհուրդ է տրվում, որպեսզի սրտի մագնիսառեզոնանսային շերտագրության հետազոտությունը կատարվի սրտի վիզուալիզացիայի և սրտամկանի հիվանդությունների գնահատման փորձ ունեցող մասնագետների կողմից	I	C
Ախտորոշման հաստատման նպատակով գադոլինիումի	I	B

ազդանշանի ուշ ուժեղացումով սրտի մագնիսառեզոնանսային շերտագրության հետազոտությունը, հակացուցումների բացակայության դեպքում, խորհուրդ է տրվում այն հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտներին, որոնց մոտ նկատվում է ոչ ադեկվատ էխոկարդիոգրաֆիկ պատկեր		
Հակացուցումների բացակայության դեպքում, գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումով սրտի մագնիսառեզոնանսային շերտագրության հետազոտությունը խորհուրդ է տրվում այն հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտներին, որոնց մոտ կատարվում են հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ախտորոշիչ չափորոշիչներ սրտի անատոմիայի, փորոքների ֆունկցիայի, միոկարդիալ ֆիբրոզի առկայության և տարածվածության գնահատման համար	Ila	B
Գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումով սրտի մագնիսառեզոնանսային շերտագրության հետազոտությունը պետք է դիտարկել ենթադրվող գազաթային հիպերտրոֆիայով կամ անևրիզմայով պացիենտների մոտ	Ila	C
Գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումով սրտի մագնիսառեզոնանսային շերտագրության հետազոտությունը պետք է դիտարկել ենթադրվող սրտի ամիլոիդոզով պացիենտների մոտ	Ila	C
Գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումով սրտի մագնիսառեզոնանսային շերտագրության հետազոտությունը կարելի է դիտարկել մինչև ակոհոլային սեպտալ աբլացիան՝ հիպերտրոֆիայի և սրտամկանի ֆիբրոզի բնույթը և տարածվածությունը գնահատելու համար	IIb	C
Նշում - ^a խորհուրդի դասը, ^b – ապացուցողականության մակարդակը		

5.6. Միջուկա-մագնիսային ռեզոնանս և համակարգչային շերտագրություն

Միջուկա-մագնիսային ռեզոնանսը, ներառյալ պոզիտրոն-էմիսիոն շերտագրությունը օգտագործվել է հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ սրտամկանի

արյունահոսքի և սնուցման խանգարումների գնահատման համար, սակայն նրանց նշանակությունը հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ախտորոշման մեջ սահմանափակ է [152-155]: Միջուկային վիզուալիզացիայի հիմնական կլինիկական ներդրումը TT-միջնորդավորված սրտի ամիլոիդոզի ախտորոշումն է: Տրանսթիրետինը պլազմայի տետրամերային տրանսպորտային սպիտակուց է, որը սինթեզվում է լյարդում և սենիլ համակարգային ամիլոիդոզի և ընտանեկան TT-միջնորդավորված ամիլոիդոզի ժամանակ հանդիսանում է նախորդող սպիտակուց [156,157]: Մի շարք հետազոտություններում ենթադրվում էր որ TT-ից կազմված ֆիբրիլները ցուցաբերում են աֆինություն այնպիսի տարբերանշանների նկատմամբ, որոնք սպեցիֆիկ են ոսկրային հյուսվածքի համար, հատկապես, k99m Տեխնիցիում-3,3-դիֆոսֆոնո-1,2-պրոպանոբիկարբոնային թթվի նկատմամբ (99mTc-DPD), այն դեպքում, երբ սարկոմերային սպիտակուցների գեների մուտացիայով պայմանավորված հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների սրտում այդ միացության կլանում տեղի չի ունենում: Այդ պատճառով ոսկրերի սցինտիգրաֆիան պետք է առաջարկվի TTR-ամիլոիդոզի կասկածով պացիենտներին (տարիք>65, կարպալ ուղու երկկողմանի համախտանիշ անամնեզում, հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի բացակայություն ընտանիքում սրտի ամիլոիդոզի հետ համաձայնեցված ԷՍԳ և վիզուալիզացիայի առանձնահատկություններ) [156-158]:

Կոնտրաստ ՀՏ-ն թույլ է տալիս հստակ որոշել սրտամկանի սահմանները, ճշգրիտ չափել պատի հաստությունը, փորոքների ծավալը, արտամզման ֆրակցիան և ձախ փորոքի զանգվածը, որը համեմատելի է ՄՌՇ, Էխոկարդիոգրաֆիկ արդյունքների հետ [159]: Սիրտ-անոթային ՀՏ հետազոտությունը թույլ է տալիս միաժամանակ վիզուալիզացնել կորոնար զարկերակները և փականները և կարող է օգտագործվել վերփորոքային առիթմիաների կաթետերային արևացիայի հսկողության համար [159]: Հիվանդների ոչ մեծ խմբերից ստացված սրտամկանի հյուսվածքը բնութագրող արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ կոնտրաստ ՀՏ կարող է օգտակար լինել սրտամկանի փոխարինող ֆիբրոզի հայտնաբերման համար, սակայն այս ենթադրությունը պահանջում է հավելյալ հետազոտություններ [160,161]: Սրտի ՀՏ-ն պետք է նկատի ունենալ այն պացիենտների համար, որոնց մոտ ստացվել են էխոսրտագրության ոչ գոհացնող արդյունքներ կամ ՄՌՇ հետազոտության հետ հակասական արդյունքներ [159]:

Միջուկային սցինտիգրաֆիայի խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b

Ոսկորների սցինտիգրաֆիան (հատկապես, ^{99m}Tc - DPD), պետք է դիտարկվի TT-ամիլոիդոզի նշաններ, ախտանշաններ և ոչ ինվազիվ մարկերներ ունեցող պացիենտների համար	IIa	B
Սրտի ^{45}S հետազոտությունը պետք է դիտարկվի ոչ ադեկվատ էխոսրտագրային պատկերով և սրտի ՄՌՇ հետազոտության հակացուցումներով պացիենտների համար	IIa	C
Նշում - ^a խորհուրդի դասը, ^b – ապացուցողականության մակարդակը Կրճատում ^{45}S – կոնայուտերային տոմոգրաֆիա, TT – տրանսթիրետին, ^{99m}Tc –DPD– $^{99\text{m}}$ տեխնիցիում–3,3 դիֆոսֆոն–1,2-պրոպանոլիկարբոնաթթու		

5.7. Էնդոմիոկարդիալ բիոպսիա

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի բազմաթիվ գենետիկ և ոչ գենետիկ պատճառներ ունեն բնորոշ հիստոլոգիական դրսևորումներ, սակայն հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա ախտորոշումը հանդիսանում է կլինիկական ախտորոշում և, առաջին հերթին, հիմնված է ոչ ինվազիվ հետազոտությունների վրա: Քանի որ հիվանդության էթիոլոգիան կարող է դրվել կլինիկական հետազոտության արյունքների, ծագումնաբանության վերլուծության, սրտի ոչ ինվազիվ վիզուալիզացիայի, լաբորատոր և գենետիկ հետազոտությունների հիման վրա, էնդոմիոկարդիալ բիոպսիան չի հանդիսանում ռուտին հետազոտություն, սակայն դրա իրականացումը կարելի է նկատի ունենալ այնպիսի իրավիճակներում, երբ կասկածվում են ինֆիլտրատիվ կամ կուտակման հիվանդություններ, այլ մասնագիտացված թեստերից հետո (ներառյալ առավել հասանելի հյուսվածքների բիոպսիան) [162,163]:

Էնդոմիոկարդիալ բիոպսիայի խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Էնդոմիոկարդիալ բիոպսիան կարող է դիտարկվել այն դեպքերում, երբ այլ կլինիկական հետազոտությունների արդյունքները ենթադրում են սրտամկանի ինֆիլտրացիա, բորբոքում կամ կուտակում, որոնք չեն կարող հաստատվել այլ մեթոդներով	IIb	C
Նշում - ^a խորհուրդի դասը, ^b – ապացուցողականության մակարդակը		

5.8 Լաբորատոր հետազոտություն

Ռուտին լաբորատոր հետազոտությունը թույլ է տալիս հայտնաբերել արտասրտային պաթոլոգիական վիճակներ, որոնք կարող են առաջացնել կամ վատթարացնել փորոքային դիսֆունկցիան (օրինակ վահանագեղձի հիվանդությունները, երիկամային դիսֆունկցիան և շաքարային դիաբետը) և ծանր սրտային անբավարարությունով հիվանդների օրգանների երկրորդային դիսֆունկցիան: BNP[164] և NT-pro-BNP [165] և բարձր սպեցիֆիկության սրտային տրոպոնին T (hs-cTnT) բարձր մակարդակն ասոցացվում է սուր սիրտ-անոթային պատահարի, սրտային անբավարարության և մահվան հետ: Չնայած պատերի հաստության համեմատելիությանը, BNP ցուցանիշի մակարդակը սրտի ամիլոիդոզով պացիենտների մոտ 3-5 ավելի բարձր է, քան այլ պատճառներով հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտներինը: Խորհուրդ տրվող լաբորատոր հետազոտությունների ցանկը ներկայացված է աղյուսակում: Առաջնային լաբորատոր հետազոտության թեստերը երեխաների մոտ նման են այն թեստերին, որոնք իրականացվում են մեծահասակների մոտ և պետք է ներառեն արյունաբանական հետազոտություն, գլյուկոզայի մակարդակ, սրտային ֆերմենտներ (կրեատինկինազա, ասպարտատամինոտրանսֆերազա, ալանինամինոտրանսֆերազա, լակտատդեհիդրոգենազա), երիկամային և լյարդային ֆունկցիոնալ թեստեր, pH, էլեկտրոլիտներ և միզաթթու: Մասնագետների խորհրդատվությունից հետո հաճախ պահանջվում են հավելյալ հետազոտություններ, ներառյալ լակտատի, պիրուվատի, ամոնիակի, կետոնների, ազատ ճարպաթթուների, կարնիտինային պրոֆիլի, մեզի օրգանական և ամինաթթուների որոշում:

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով մեծահասակ պացիենտների լաբորատոր հետազոտությունների խորհուրդներ	
Հետազոտություն	Մեկնաբանություն
Հեմոգլոբին	. Սակավարյունության դեպքում կրծքավանդակի շրջանում ցավերը և հևոցն ուժեղանում են և այն պետք է բացառել ախտանիշների փոփոխության դեպքում
Երիկամային ֆունկցիա	. Ձախ փորոքային ծանր անբավարարությունով պացիենտների մոտ երիկամային ֆունկցիան կարող է

	<p>խանգարվել</p> <p>.Կծիկային ֆիլտրացիայի մակարդակի վատացումը և պրոտեինուրիան կարող են դիտվել ամիլոիդոզի, Անդերսոն–Ֆաբրիի հիվանդության և միտոքոնդրիալ ԴՆԹ հիվանդությունների ժամանակ</p>
<p>Լյարդի տրանսամինազներ</p>	<p>. Լյարդային թեստերը կարող են փոխված լինել միտոքոնդրիալ հիվանդությունների, Դանոնի հիվանդության և բետա-օքսիդացման դեֆեկտների դեպքում</p>
<p>Կրեատինֆոսֆոկինազ</p>	<p>. Պլազմայում կրեատինֆոսֆոկինազան բարձրանում է մետաբոլիկ հիվանդությունների ժամանակ, ինչպիսիք են Դանոնի հիվանդությունը և միտոքոնդրիալ հիվանդությունները</p>
<p>Ալֆա-գալակտոզիդազ-A-ի ակտիվությունը պլազմայում /լեյկոցիտներում (>30տ տղամարդկանց մոտ)</p>	<p>. Ցածր (նորմալ մակարդակից 10% -ով ցածր) կամ չորոշվող ալֆա-գալակտոզիդազ-A-ն հայտնաբերվում է Անդերսոն–Ֆաբրիի^a հիվանդությունով տղամարդկանց մոտ</p> <p>. Հիվանդ կանանց մոտ ֆերմենտի մակարդակը պլազմայում և լեյկոցիտներում հաճախ նորմայի սահմաններում է, այդ պատճառով կլինիկական կասկածի դեպքում կարող է առաջարկվել գենետիկական հետազոտություն</p>
<p>Իմունոգլոբուլինի թեթև շղթաների որոշում, պլազմայի և մեզի էլեկտրոֆորեզ</p>	<p>.Պետք է նկատի ունենալ անամնեզի և ոչ ինվազիվ հետազոտությունների հիման վրա ամիլոիդոզի կասկածի դեպքում</p> <p>. Ճարպաթթուների և կարնիտինի փոխանակային հիվանդությունների դեպքում մակարդակը կարող է լինել ցածր</p>
<p>Գլյուկոզի մակարդակը քաղցած վիճակում</p>	<p>. Որոշ միտոքոնդրիալ ԴՆԹ</p>

	<p>հիվանդությունների ժամանակ կարող է բարձրացած լինել</p> <p>. Ճարպաթթուների և կարնիտինի փոխանակային հիվանդությունների դեպքում կարող է ցածր լինել</p>
Ուղեղային նատրիուրետիկ պեպտիդ և տրոպոնին T	. Պլազմայում բարձրացած BNP, NT-pro-BNP և տրոպոնին T-ի մակարդակը ասոցացվում է սիրտ-անոթային պատահարների բարձրացած մակարդակի, սրտային անբավարարության և մահվան բարձր ռիսկի հետ
Վահանաձև գեղձի ֆունկցիայի գնահատումը	. Պետք է որոշվի ախտորոշումը դրվելու պահին և ենթարկվի մոնիտորինգի ամեն 6 ամիսը մեկ ամիոդարոն ստացող պացիենտների մոտ
Պլազմայի լակտատ	Որոշ միտոքոնդրիալ հիվանդություններով հիվանդների մոտ բարձրացած է
<p>Նշումներ. կեղծ-անբավարարությունը կարող է լինել որոշ գենետիկ տարբերակների դեպքում, ինչպիսիք են D313Y</p> <p>Կրճատումներ – BNP–ուղեղային նատրիուրետիկ պեպտիդ, NT-proBNP–N-տերմինալ պրո-ուղեղային նատրիուրետիկ պեպտիդ, ԴՆԹ-դեզօքսիռիբոնուկլեինաթթու</p>	

6. Գենետիկ հետազոտություն և ընտանեկան սքրինինգ

Մեծամասամբ դեպքերում հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիան ժառանգվում է աուտոսոմ-դոմինանտ տիպով, ժառանգներին փոխանցվելու 50% ռիսկով [34]: Որոշ դեպքեր բացատրվում են de novo մուտացիաներով, սակայն արտաքին սպորադիկ դեպքերը կարող են ի հայտ գալ ծնողների հիվանդության ոչ լրիվ պենետրանտության հետ կապված, կամ ավելի հազվադեպ, կապված աուտոսոմ-ռեցեսիվ ժառանգման հետ: Ախտորոշիչ չափորոշիչներ հանձնող մոտավորապես 60% պացիենտների մոտ սարկոմերային սպիտակուցների գեների սեկվեստավորման ժամանակ հայտնաբերվում են մուտացիաներ [34,167]: Հիվանդություն առաջացնող մուտացիայի հայտնաբերման հավանականությունը առավել բարձր է

հիվանդության ընտանեկան ձևի դեպքում և ամենաքիչ հայտնաբերման հավանականությունը նկատվում է հասուն տարիքի պացիենտների և ոչ դասական դրսևորումներով պացիենտների մոտ:

6.1. Պրոբանդների խորհրդատվություն

Գենետիկ խորհրդատվություն խորհուրդ է տրվում բոլոր այն պացիենտներին, որոնց մոտ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիան ամբողջովին չի բացատրվում ոչ գենետիկական պատճառներով: Խորհրդատվություն պետք է իրականացվի մուլտիդիսցիպլինար թիմում աշխատող փորձառու մասնագետի կողմից, որպեսզի օգնի պացիենտներին հասկանալ և հաղթահարել ժառանգական հիվանդության հետ կապված հոգեբանական, էթիկական, մասնագիտական և իրավաբանական ասպեկտները [169-173]: Խորհրդատվությունը նաև հեշտացնում է ընտանիքի այլ անդամներից տեղեկատվության հավաքումը, ներառյալ սրտային և արտասրտային ախտանիշները և աուտոպսիայի արդյունքները, որոնք կարելի է օգտագործել ճշգրիտ ծննդաբանական ընտանիքի կառուցման համար: Ծննդաբանության վերլուծությունն օգնում է որոշել ընտանեկան հիվանդության հավանականությունը և ժառանգման հավանական տեսակը և նաև օգնում է ենթադրել էթիոլոգիական պատճառի մասին [67]: Թեստի դրական արդյունքի հետևանքները պացիենտների և նրանց ազգականների համար պետք է բացատրվեն և պացիենտներին պետք է ներկայացվի աջակցող խմբերի և այլ աղբյուրների մասին տեղեկատվություն՝ ներառյալ պաշտոնական կայքերը:

Բժշկագենետիկական խորհրդատվության վերաբերյալ խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Բժշկագենետիկական խորհրդատվություն պետք է իրականացվի բոլոր այն պացիենտներին, որոնց մոտ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիան ամբողջովին չի բացատրվում միայն ոչ գենետիկական պատճառներով, անկախ նրանից պլանավորվում է հարազատների կլինիկական կամ գենետիկ սքրինինգ, թե ոչ	I	B
Բժշկագենետիկական խորհրդատվություն պետք է իրականացվի այդ բնագավառում պատրաստված, մուլտիդիսցիպլինար թիմում աշխատող մասնագետի կողմից	IIa	C

6.2. Պրոբանդների մոլեկուլային-գենետիկ սքրինինգի մեթոդները

Սովորական գենետիկական պրակտիկան օգտագործում է ծննդաբանության վերլուծությունը և կլինիկական հետազոտությունն առավել հավանական ախտորոշման նկատմամբ մոլեկուլային թեստավորման ռազմավարության որոշման համար: Բարձր արդյունավետության սեկվեստավորման նոր տեխնոլոգիաները, որոնք համեմատելի արժեքի և ճշգրտության դեպքում ունակ են վերլուծել ամբողջ էկզոմաներ՝ համեմատած սեկվեստավորման սովորական մեթոդների հետ, առաջարկում են այլընտրանքային մոտեցում, որի դեպքում բացակայում է հիվանդության պատճառի *a priori* հիպոթեզը [174,175]: Սակայն մեծ քանակությամբ գեների սքրինինգը հանգեցնում է մեծ քանակությամբ, անհայտ կլինիկական նշանակությամբ, հազվադեպ ոչ հոմանիշային գենետիկական տարբերակների իդենտիֆիկացիայի [175-177]: Միջանկյալ մոտեցում է հանդիսանում նախապես ընտրված ՀԿՄՊ–կապված գեների աղյուսակի վերլուծությունը բարձր արդյունավետության սեկվեստավորման մեթոդով, սակայն այլ ռազմավարությունների հետ համեմատ, առավելությունը կարիք ունի ճշգրտման: Անկախ սեկվեստավորման համար օգտագործվող տեխնոլոգիայից, գենետիկ վերլուծությունը պետք է ներառի առավել հաճախ ներառվող սարկոմերային սպիտակուցների գեները: Այն պացիենտների մոտ, որոնց մոտ առկա են նշաններ, որոնք թույլ են տալիս ենթադրել սպեցիֆիկ հազվադեպ գենետիկ հիվանդության մասին, պետք է իրականացվի այլ գեների մուտացիաների հիմնավորված որոնում: Մուտացիայի բոլոր տարբերակները պետք է համաձայնեցվեն գենետիկ թեստավորման ընդհանուր սկզբունքներին և գենետիկ հետազոտությունը պետք է կատարվի արտոնագրված լաբորատորիաներում՝ գենետիկական վերլուծության և հաշվետվության հաստատված մեթոդների օգտագործումով [169-173]:

6.3 Պրոբանդի գենետիկ թեստավորման ցուցումները

Աշխատանքային խումբը խոստովանում է, որ ռեսուրսների սահմանափակ լինելն առողջապահական համակարգում բարդացնում է գենետիկ թեստավորումը: Ամեն դեպքում պաթոգեն մուտացիայի հայտնաբերումը հեշտացնում է ընտանիքի անդամների նախաախտանշանային ախտորոշումը, կլինիկական վարումը և ռեպրոդուկտիվ խորհրդատվությունը: Այդ պատճառով գենետիկ թեստավորում խորհուրդ է տրվում այն պացիենտներին, որոնց մոտ հայտնաբերվել են ՀԿՄՊ ախտորոշիչ չափանիշներ՝ նրանց

ազգականների համար կասկադային սքրինինգը հնարավոր դարձնելու համար [24,175,178-180]:

Գենոտիպ-ֆենոտիպ ասոցացիայի սպեցիֆիկ ասոցացիայի մասին ճշգրիտ տվյալների անբավարարությունը նշանակում է, որ գենետիկ թեստավորման ներդրումը պացիենտների կլինիկական վարման մեջ սահմանափակվում է գլխավորապես ՀԿՄՊ հազվադեպ գենետիկական պատճառներով: Գենետիկ թեստավորումը կարող է ունենալ սահմանափակ նշանակություն, երբ առաջին աստիճանի ազգականներն անհասանելի են կամ չեն ցանկանում անցնել հիվանդության սքրինինգ:

Ոչ ակնհայտ կլինիկական ախտորոշմամբ պացիենտների մոտ (օրինակ, մարզիկների կամ հիպերտոնիկների մոտ) գենետիկ թեստավորումը պետք է անցկացվի միայն կարդիոմիոպաթիաների ախտորոշման և վարման փորձ ունեցող մասնագետների թիմի կողմից մանրակրկիտ կլինիկական և ընտանեկան հետազոտությունից հետո, քանի որ սարկոմերային սպիտակուցները կողավորող գեների մուտացիայի բացակայությունը չի բացառում ընտանեկան հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիան, իսկ անհայտ կլինիկական նշանակության տարբերակները դժվար է իդենտիֆիկացնել: Հյուսվածքների հետմահու օրինակների կամ ԴՆԹ օրինակների գենետիկ վերլուծությունը կարող է օգտակար լինել կենդանի ազգականների հետազոտման համար, սակայն պետք է վերծանվի սրտի post mortem հետազոտության լույսի և համապատասխան գենետիկական տարբերակների գնահատման ընդունված կանոնների ներքո [181,182]:

Պրոբանդների գենետիկ թեստավորման խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
Գենետիկ թեստավորումը խորհուրդ է տրվում այն պացիենտներին, որոնց մոտ հայտնաբերվել են ՀԿՄՊ ախտորոշիչ չափանիշներ, երբ այն թույլ է տալիս ազգականների կասկադային սքրինինգ	I	B
Խորհուրդ է տրվում գենետիկ թեստավորումն իրականացնել կարդիոմիոպաթիաների հետ կապված մուտացիաների ինտերպրետացիայի փորձագիտական հմտություններով արտոնագրված ախտորոշիչ լաբորատորիաներում	I	C
ՀԿՄՊ սպեցիֆիկ պատճառներ ենթադրող հիվանդության ախտանշանների և նշանների դեպքում խորհուրդ է տրվում	I	B

գենետիկ թեստավորում՝ ախտորոշումը հաստատելու համար		
ՀԿՄՊ սահմանային Կախտորոշմամբ պացիենտների մոտ գենետիկ թեստավորումը պետք է կատարվի միայն մասնագետների թիմի մանրակրկիտ հետազոտությունից հետո	IIa	C
Պահպանված հյուսվածքների կամ ԴՆԹ-ի օրինակների հետմահու գենետիկ հետազոտությունը պետք է դիտարկվի պաթոմորֆոլոգիկ հաստատված ՀԿՄՊ-ով մահացած պացիենտների մոտ, ազգականների կասկադային գենետիկ սքրինինգ անցկացնելու հնարավորություն ունենալու համար	IIa	C
Նշումներ ^a –խորհուրդի դասը ^b ապացուցողականության մակարդակ ^c սահմանային ախտորոշում. ձախ փորոքի պատի հաստությունը մեծահասակների մոտ 12-13մմ, ձախ փորոքի հիպերտրոֆիա զարկերակային հիպերտենզիայի, սպորտային ծանրաբեռնվածության, փականային հիվանդությունների առկայության դեպքում		


6.4 Ազգականների գենետիկական և կլինիկական սքրինինգ

Ընտանիքում պոտենցիալ ժառանգական հիվանդության մասին ազգականներին տեղյակ պահելու իրավաբանական կանոններն աշխարհում նշանակալիորեն տարբերվում են: Երկրների մեծամասնությունում ազգականների տեղեկացումը և նրանց հրավիրումը հետազոտման առողջապահական համակարգում իրականացնում է պրոբանդը (սովորաբար ընտանիքի առաջին անդամը, որին դրվել է ախտորոշում) [184]: Երբեմն տեղեկատվական նամակը հեշտացնում է այս խնդիրը պացիենտի համար [184]: Հաշվի առնելով, որ ազգականների մեծամասնությունը կլինիկական սքրինինգի ժամանակ չեն ունենում ախտանշաններ, կարևոր է որպեսզի նրանց ներկայացվի կյանքի ապահովագրության, կենսաթոշակի, զբաղվածության, սպորտային ծանրաբեռնվածության, ինչպես նաև ծնողական և որդեգրման հետ կապված թեստավորման հետևանքների մասին տեղեկատվություն՝ մինչև թեստավորման անցկացումը:

6.4.1 Ակնհայտ պաթոզեն մուտացիայով ընտանիքներ

Այն դեպքում, երբ պացիենտի մոտ հայտնաբերվում է ակնհայտ պաթոզեն մուտացիա, նրա հարազատները պետք է ենթարկվեն գենետիկ թեստավորման և, եթե հայտնաբերվի, որ նրանք հանդիսանում են նույն մուտացիայի կրողները, ապա հետո՝ կլինիկական հետազոտման: Տնտեսական գնահատման մոդելները համեմատել են մոլեկուլյար սքրինինգի տնտեսական

նպատակահարմարությունը միայն կլինիկական սքրինինգի հետ և ցույց են տվել, որ գենետիկ թեստավորման և կլինիկական սքրինինգի կոմբինացիան հայտնաբերում է հիվանդության զարգացման բարձր ռիսկով ավելի շատ անհատների և թույլ է տալիս մեծ մասին խուսափել դինամիկ հսկողությունից [185,186]: Այդ պատճառով կասկադային գենետիկ սքրինինգը կարող է առաջարկվել բոլոր ազգականներին, երբ պրոբանդի մոտ հայտնաբերվել է ակնհայտ պաթոգեն մուտացիա: Եթե մուտացիան հայտնաբերված չէ ազգականները պետք է հանվեն ռեգուլյար դինամիկ հսկողությունից, բայց նրանց պետք է խորհուրդ տալ դիմել կլինիկական հետազոտման համար, եթե նրանց մոտ առաջանան ախտանշաններ կամ եթե ընտանիքում ի հայտ գան կլինիկական նոր ռելևանտ տվյալները: Երեխաների հետ կապված հնարավոր է այլ մոտեցում, ուշադրության տակ վերցնելով տեղեկացված համաձայնության առանձնահատկությունները և դրական գենետիկական թեստավորման երկարատև արդյունքները: Ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հարցումով կլինիկական հետազոտությունը կարող է նախորդել կամ փոխարինել գենետիկ թեստավորմանը, եթե դա առավելագույնս համաձայնեցված է երեխայի շահերի հետ:



Նկար 4

6.4.2 Առանց ակնհայտ պաթոգեն մուտացիայի ընտանիքներ

Եթե պրոբանդին գենետիկ թեստավորում չի իրականացվել կամ, եթե գենետիկական հետազոտությունը չի հայտնաբերել հիվանդության գենետիկական պատճառներ, կամ հայտնաբերել է մեկ կամ մի քանի անհայտ կլինիկական նշանակությամբ տարբերակներ, ապա առաջին աստիճանի ազգականներին պետք է առաջարկվի ԷՍԳ-ով և էխոսրտագրությամբ կլինիկական թեստավորում [168,185,187,188]: Կարևոր է, որ տարիք – կախյալ պենետրանտությունը նշանակում է, որ կլինիկական հետազոտությունների նորմալ արդյունքները չեն կարող բացառել հետագայում հիվանդության առաջացման հնարավորությունը, այդ իսկ պատճառով առաջին աստիճանի ազգականներին պետք է խորհուրդ տալ կրկնակի հետազոտություն [168]: Գենետիկական ախտորոշման բացակայության պարագայում կլինիկական հետազոտությունների հաճախականությունը պետք է հիմնված լինի հիվանդության սկզբի տարիքի, ընտանիքում կարդիոմիոպաթիայի ծանրության և սպորտում ակտիվ մասնակցության վրա: Ախտորոշիչ ոչ նշանակալի կլինիկական նշաններով անհատները, համաձայնեցված հիվանդության վաղ փուլի հետ, պետք է սկզբնական շրջանում հետազոտվեն 6-12 ամիս ինտերվալով և հետո ավելի մեծ ինտերվալով, եթե չկա հիվանդության հարաճում: Սիրտ–անոթային համակարգի հետ կապված գանգատներ ներկայացնող բոլոր ազգականները պետք է հետազոտվեն անհետաձգելի կարգով:

Մեծահասակ ազգականների գենետիկ և կլինիկական թեստավորման խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
Ակնհայտ պաթոգեն մուտացիա ունեցող հիվանդների առաջին աստիճանի մեծահասակ ազգականներին ցուցված է կասկադային գենետիկ սքրինինգ նախնական կոնսուլտացիայից հետո	I	B
Կլինիկական հետազոտություններ, ներառյալ ԷՍԳ, էխոսրտագրություն և երկարատև դինամիկ հսկողություն այն առաջին աստիճանի ազգականներին, որոնց մոտ նույնպես հայտնաբերվել է ակնհայտ պաթոգեն մուտացիա, ինչ հայտնաբերվել է պրոբանդի մոտ	I	C
Առաջին աստիճանի ազգականները, որոնց մոտ չի հայտնաբերվել նույն ակնհայտ պաթոգեն մուտացիան, ինչ պրոբանդի մոտ, պետք է դուրս բերվեն հետագա դինամիկ հսկողությունից, բայց կրկնակի հետազոտության դիմելու խորհուրդներով՝ ախտանշանների զարգացման կամ նոր ռելևանտ տվյալներ ի հայտ գալու դեպքում	IIa	B
Եթե պրոբանդի մոտ ակնհայտ պաթոգեն մուտացիա չի հայտնաբերվել, կամ գենետիկ սքրինինգ չի իրականացվել,	IIa	C

կլինիկական հետազոտությունը ԷՍԳ-ով և էխոսրտագրությամբ պետք է առաջարկվեն 1-ին աստիճանի ազգականներին ամեն 2-5 տարին մեկ (կամ 6-12 ամիս ինտերվալով, եթե առկա են ախտորոշիչ ոչ նշանակալի անոմալիաներ)		
Նշումներ. ^a -խորհուրդի դաս, ^b -ապացուցողականության մակարդակ ^c -պրոբանդ-սովորաբար ընտանիքի առաջին անդամը, ում դրվել է ախտորոշումը Կրճատումներ. ԷՍԳ - էլեկտրոսրտագրություն		

6.5. Երեխաների կլինիկական և գենետիկական հետազոտությունը

Երեխաների կլինիկական և գենետիկական հետազոտությունը պետք է բխի ամեն երեխայի կենսական շահերից՝ համաձայնեցված առկա կլինիկական պրակտիկայի միջազգային չափանիշներով [190-192]: Մանուկ հասակում սքրինինգի պոտենցիալ օգուտը ներառում է անորոշության և տագնապի նվազեցումը, հոգեբանական աջակցությունը, իրական կյանքի պլաններ կառուցելու հնարավորությունը և թիրախավորված կլինիկական հսկողությունը: Պոտենցիալ վնասը ներառում է միանշանակ չլինելը, եթե սպեցիֆիկ ֆենոտիպը հնարավոր չէ կանխագուշակել, ինքնաընկալման փոփոխությունը, ծնողների կամ այլ պատասխանատու մեծահասակների կողմից երեխայի աղավաղված ընկալումը, տագնապի և մեղքի ավելացումը, կյանքի ապահովագրման հեռանկարների դիկրեդիտացիան: Հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ գենետիկական և կլինիկական հետազոտությունները վարման, կենսակերպի կազմակերպման և հետագա կլինիկական հետազոտության համար պետք է ունենան նշանակություն: Սարկոմերային սպիտակուցների գեների մուտացիայով պայմանավորված հիվանդությամբ երեխաների մասին պրոսպեկտիվ հետազոտության տվյալները քիչ են, բայց առկա են համոզիչ վկայություններ այն մասին, որ անախտանիշ երեխաների մոտ կլինիկորեն նշանակալի պատահարները հազվադեպ են մինչև դեռահաս տարիքը [189]: Այս ուղեցույցները մշակող խմբի համաձայնեցված կարծիքն այն է, որ կլինիկական և/կամ գենետիկական թեստավորումը երեխաների մոտ պետք է դիտարկել սկսած 10 տարեկանից: Ավելի վաղ տարիքում կլինիկական կամ գենետիկական թեստավորումը պետք է դիտարկել այն ընտանիքներում, որտեղ առկա է հիվանդության վաղ դրսևորում, առկա է չարորակ ընտանեկան պատմություն՝ մանուկ հասակում դրսևորումով, այն դեպքերում, երբ երեխաների մոտ առկա է սրտային դրսևորումներ կամ եթե նրանք վարում են չափազանց ակտիվ կենսակերպ:

Երեխաների գենետիկական և կլինիկական թեստավորման խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
Ակնհայտ պաթոզեն մուտացիա ունեցող պացիենտների երեխաների համար պետք է դիտարկել ընտանիքի նախնական կոնսուլտացիայի հաջորդող պրեդիկտիվ գենետիկ թեստավորումը ≥ 10 տ տարիքում, այն պետք է իրականացվի ըստ երեխաների գենետիկական թեստավորման միջազգային ուղեցույցների	IIa	C
Առաջին աստիճանի ազգական-երեխաների մոտ (տարիքը ≥ 10 տ), որոնց մոտ գենետիկական կարգավիճակը անհայտ է, կլինիկական հետազոտությունը ԷՍԳ-ով և էխոսրտագրությամբ պետք է իրականացվի ամեն 1-2 տարին 10-20 տ շրջանում և 20 տ-ից հետո ամեն 2-5 տարին մեկ	IIa	C
Ծնողների կամ օրինակ, այլ ներկայացուցիչների հարցումով կլինիկական հետազոտությունը ԷՍԳ-ի և էխոսրտագրության հետ միասին կարող են նախորդել կամ փոխարինել գենետիկական հետազոտությանը, փորձառու բժշկի հետ խորհրդատվությունից հետո, եթե այն համաձայնեցված է երեխայի շահերի հետ	IIb	C
Եթե առկա է չարորակ ընտանեկան պատմություն մանուկ հասակում կամ վաղ տարիքում հիվանդության սկզբով, կամ, երբ երեխայի մոտ առկա են սրտային ախտանշաններ, կամ երբ նա ընդգրկված է ակտիվ ֆիզիկական ակտիվության մեջ, հնարավոր է դիտարկել առաջին աստիճանի ազգական-երեխաների կլինիկական և գենետիկական հետազոտությունը մինչև 10 տարեկան հասակը	IIb	C
Նշումներ. ^a - հանձնարարականի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

6.6. Առանց կլինիկական դրսևորումների ակնհայտ մուտացիայով պացիենտների վարումը

Նախնական տվյալները վկայում են, որ հսկողությունը փորձագիտական կենտրոնում իրականացնելիս, հիվանդության ռիսկ ունեցող երեխաների և մեծահասակների երկարատև գենետիկական և կլինիկական սքրինինգից չկան նշանակալի բացասական հոգեբանական հետևանքներ [189]: Կան շատ քիչ տվյալներ հիվանդության իրական ընթացքի մասին այն պացիենտների մոտ, ովքեր հանդիսանում են պաթոզեն մուտացիայի կրողներ և չունեն

կլինիկական դրսևորումներ, սակայն վերջերս կատարված հետազոտությունները թույլ են տալիս ենթադրել կլինիկորեն չախտահարված, մուտացիան կրող պացիենտների մոտ հիվանդության մեղմ ընթացքի մասին [189,193]: Մեղմ մորֆոլոգիական և ֆունկցիոնալ խանգարումների կլինիկական նշանակությունը պարզ չէ, սակայն երևում է մեծամասամբ դեպքերում մեծ չէ [194-196]: Հանկարծակի սրտային մահը հիպերտրոֆիայի բացակայության դեպքում հանդիպում է հազվադեպ և գլխավորապես սահմանափակված է տրոպոնին T գենում մուտացիա ունեցող պացիենտների մասին իզոլացված հաղորդումներով [27,28,197,198]: Վերլուծական հետազոտությունները եթադրում են տարիքի հետ պենենտրանտության բարձրացում [30,189,199-201], նկատի ունենալով, որ կլինիկորեն չախտահարված, մուտացիա կրողների մի մասի մոտ ժամանակի ընթացքում կզարգանա ակնհայտ կարդիոմիոպաթիա: Այսպիսով, խորհուրդ է տրվում մուտացիա կրող առողջ անհատների երկարատև կանխարգելիչ հսկողություն: Առանց հիվանդության ԷՍԳ կամ էխոկարդիոգրաֆիկ դրսևորումների մուտացիայի կրողները, ովքեր ցանկություն ունեն գրառվելու սպորտով, պետք է խորհրդակցվեն անհատական ձևով, հաշվի առնելով տեղական իրավական կարգավորումները, մուտացիայի բնույթը և սպորտաձևը [202]:

Մուտացիայի անախտանիշ կրողների դինամիկ հսկողության խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
Ակնհայտ մուտացիան կրողների մոտ, որոնց մոտ չկան համոզիչ տվյալներ հիվանդության դրսևորումների մասին, սպորտային պարապմունքները կարող են թույլատրվել մուտացիայի դրսևորման, սպորտային ակտիվության տեսակի և ռեգուլյար ու կրկնակի կլինիկական հետազոտության հարցերը քննարկելուց հետո	IIb	C
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

6.7. Նախաինսպլանտացիոն և պրենատալ գենետիկական ախտորոշում

Պրենատալ գենետիկական ախտորոշումը կարող է իրականացվել հղիության սկզբում խորիոնի թելկների բիոպսիայի կամ ամնիոցենտեզի ճանապարհով, սակայն այս միջամտությունը սահմանափակված է այլ ծանր և անբուժելի հիվանդություններով: Ուշադրություն դարձնելով հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ֆենոտիպային դրսևորման նշանակալի վարիաբեությանը և հիվանդության հաճախակի իրական մեղմ ընթացքը,

արենատալ գենետիկական ախտորոշումը հազվադեպ է լինում արդարացված [168,203]: Կարող են քննարկվել տարբերակներ, որոնք հանդիսանում են այլընտրանք արենատալ ախտորոշմանը, ինչպիսին են որդեգրումը, արհեստական բեղմնավորումը դոնորական գամետների օգտագործումով և նախաիմպլանտացիոն գենետիկական ախտորոշումը [168]: Ֆետալ էխսրտագրության կիրառումը հիվանդության վաղ փուլերի հայտնաբերման համար խորհուրդ չի տրվում, քանի որ պտղի մոտ հիվանդության էքսպրեսիայի հավանականությունը բացառապես ցածր է, բացառությամբ մի քանի համախտանիշային և մետաբոլիկ հիվանդությունների:

Բժշկական օգնության կազմակերպման խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Ոչ ակնհայտ ախտորոշմամբ, ծանր ախտանիշներով կամ հիվանդության հետ կապված բարդությունների բարձր ռիսկով պացիենտներին խորհուրդ է տրվում հետազոտվել մուլտիդիսցիպլինար թիմի մասնագետների մոտ՝ հետագա հետազոտման և բուժման համար	I	C
Անկախ ախտանիշների արտահայտվածությունից, խորհուրդ է տրվում պացիենտների պարբերաբար հետազոտություն և, հնարավորության դեպքում, 1-ին աստիճանի ազգականների հետազոտություն	I	C
ՀԿՄՊ բոլոր դեպքերում կլինիցիստները պետք է պլանավորեն հետազոտությունը գենետիկական օգնության և սրտամկանի հիվանդությունների բուժման փորձ ունեցող մասնագետների մուլտիդիսցիպլինար թիմ ունեցող կենտրոններում	IIa	C
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

7. Օգնության ցուցաբերում

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիան դա հավաքական տերմին է, որը միացնում է գենետիկական և ձեռքբերովի հիվանդությունների լայն և ոչ միատար սպեկտրը: Այդ պատճառով հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների ախտորոշումը և վարումը պահանջում է բարձր իրազեկվածություն և հմտություն: Անկախ առողջապահական

համակարգում օգտագործվող մոդելից, բոլոր պացիենտները և ընտանիքները պետք է ստանան օգնություն՝ համաձայն միասնական միջազգային չափանիշների:

Չնայած ներկա ուղեցույցի նպատակը ՀԿՄՊ-ով պացիենտների օգնության համակարգերի մանրակրկիտ նկարագրումը չէ, անհրաժեշտ է պահպանել բուժման չափանիշները, եթե պլանավորվում է այս ուղեցույցի հանձնարարականների էֆեկտիվ ներդրում:

7.1 Կրթություն

Կարդիոմիոպաթիաների մասնագիտացված օգնության ստանալու առաջարկը կավելանա սրտի ժառանգական հիվանդությունների մասին գիտելիքների խորացման և մեծ հասարակական տեղեկացվածության ժամանակ: Ազգային միավորումները և առողջապահության աշխատակցիները պետք է ապահովեն այդ պահանջարկին բավարարող անհրաժեշտ հմտությունների իմացությամբ մասնագետների առկայությունը և տալ բավական կրթական հնարավորություններ՝ պահելու և զարգացնելու համար ՀԿՄՊ-ով հիվանդներին օգնություն ցուցաբերելու համար ներառված բոլոր խմբերի պրոֆեսիոնալների իրազեկվածությունը: Ազգային և միջազգային միավորումները նույնպես պետք է ստեղծեն կարդիոմիոպաթիայով պացիենտների համար ռեգիստրներ և օգնության համակարգեր:

8. Ախտանիշների գնահատում

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով անհատների մեծամասնությունը անախտանիշ են և ունեն նորմալ կյանքի տևողություն, սակայն որոշ հիվանդների մոտ հաճախ ԷՍԳ և էխոկարդիոգրաֆիկ տվյալները հայտնաբերելուց տարիներ անց զարգանում է կլինիկական ախտանիշներ: Երեխաների մոտ սրտային անբավարարության ախտանշանները ներառում են տախիպնոեն, վատ ախորժակը, չափից դուրս քրտնարտադրությունը և ֆիզիկական զարգացման դանդաղումը: Մեծ տարիքի երեխաները, դեռահասները և մեծահասակները զանգատվում են թուլությունից և հևոցից, ինչպես նաև կրծքավանդակի շրջանում ցավից, սրտխփոցից և ուշագնացությունից: Պարբերաբար իրականացվող 2D էխոսրտագրությունը, դոպլեր հետազոտությունը և երկարատև ԷՍԳ մոնիտորինգը սովորաբար բավարար են ամենահավանական պատճառը հայտնաբերելու համար: Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի գնահատումը, ինչպես ներկայացված է 5.4 բաժնում, պետք է դիտարկվի որպես ռուտին հետազոտության մաս՝ բոլոր ախտանշանային պացիենտների մոտ:

8.1 Ցավեր կրծքավանդակի շրջանում

Շատ պացիենտներ գանգատվում են հանգիստ վիճակում կրծքավանդակի շրջանում ցավերից կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ կրծքավանդակի շրջանում ցավերից: Ցավերին նաև կարող են նախորդել մեծ քանակի սնունդի կամ ալկոհոլի ընդունումը [205-207]: Կրծքավանդակի շրջանում ցավերի պատճառ են հանդիսանում միկրովասկուլյար դիսֆունկցիայի, ձախ փորոքի պատի բարձրացած ծանրաբեռնվածության և ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի հետևանքով առաջացած սրտամկանի իշեմիան: Կորոնար զարկերակների բնածին անոմալիաները, ներառյալ թունելավորված ձախ առաջնային վայրէջ զարկերակը, կամ կորոնար անոթների աթերոսկլերոտիկ ապշխտահարումները նույնպես կարող են հանդիսանալ իշեմիայի պատճառ [208]: Էպիկարդիալ կամ ինտրամուրալ անոթների սիստոլիկ կոմպրեսիան հանդիպում է շատ հաճախ և սովորաբար չունի կլինիկական նշանակություն [209-211]:

Հանգստի ԷՍԳ-ի վրա խանգարումները և միջուկա-մագնիսային ռեզոնանսի և սրտի ՄՌՇ հետազոտության ժամանակ պերֆուզիայի խանգարումների մեծ հաճախականությունը նշանակում է, որ այդ մեթոդներն ունեն սահմանափակ նշանակություն կորոնար անոթների օբստրուկցիայի՝ այլ պատճառներից տարբերակիչ ախտորոշման և ՀԿՄՊ-ով պացիենտների իշեմիկ հիվանդության հավանականության նախնական գնահատման համար [212-217]: Տիպիկ լարվածության կրծքահեղձուկով հիվանդներին խորհուրդ է տրվում կատարել ինվազիվ կամ ՀՏ-կորոնարոանգիոգրաֆիա, հիմնվելով նրանց ախտանիշների, տարիքի, սեռի, աթերոսկլերոզի ռիսկի գործոնների վրա [159-218]: Կորոնար անգիոգրաֆիան խորհուրդ է տրվում մեծահասակ պացիենտներին, ովքեր վերապրել են սրտի կանգ, կայուն փորոքային առիթմիաներով հիվանդներին և ռեվասկուլյարիզացիա անցած ախտանշանային պացիենտներին [219]: Ինվազիվ կամ ՀՏ կորոնարոանգիոգրաֆիան պետք է կատարել նախքան սեպտալ ռեդուկցիայի վիրահատությունը 40 և ավելի մեծ տարիք ունեցող հիվանդներին անկախ տիպիկ կրծքահեղձուկի առկայությունից:

Կորոնար անգիոգրաֆիայի վերաբերյալ խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Ինվազիվ կորոնար անգիոգրաֆիան խորհուրդ է տրվում սրտի կանգ վերապրած մեծահասակներին, կայուն փորոքային տախիկարդիայով պացիենտներին, ծանր լարվածության կրծքահեղձուկով պացիենտներին (CCS \geq 3 դաս)	I	C

<p>Ինվազիվ կամ ԿՏ-անգիոգրաֆիան պետք է դիտարկվի կրծքավանդակի շրջանում տիպիկ ծանրաբեռնվածության ցավերի դեպքում (CCՏդաս <3), որոնց մոտ առկա է աթերոսկլերոտիկ իշեմիկ հիվանդության նախաթեստային հավանականություն, հաշվի առնելով տարիքը, սեռը և աթերոսկլերոզի ռիսկի գործոնները կամ անամնեզում սրտային ռևասկուլյարիզացիայի առկայությունը</p>	Ila	C
<p>40-ից բարձր բոլոր պացիենտների համար պետք է դիտարկվի ինվազիվ կամ ԿՏ-կորոնարանգիոգրաֆիան մինչև սեպտալ ռեդուկցիան՝ անկախ կրծքավանդակի շրջանում տիպիկ ծանրաբեռնվածության ցավերի առկայությունից</p>	Ila	C
<p>Նշումներ. ^a- խորհուրդի դաս, ^b- ապացուցողականության մակարդակ</p>		

8.2 Սրտային անբավարարություն

Քրոնիկական սրտային անբավարարության ախտանիշները հանդիպում են շատ հաճախ, սակայն ծանր սրտային անբավարարության դրսևորումների կոմբինացիաները փոփոխվում են պացիենտից պացիենտին անցնելիս: Որոշ պացիենտների մոտ սրտային անբավարարությունն ասոցացվում է դիաստոլիկ դիսֆունկցիայով և պահպանված արտամղման ֆրակցիայով և ծախս փորոքի փոքր խոռոչով, այլ պացիենտների մոտ ախտանիշները զարգանում են ծախս փորոքի սիստոլիկ դիսֆունկցիայի կամ արտատար ուղու օբստրուկցիայի պատճառով (միտրալ անբավարարության առկայության կամ բացակայության պայմաններում) [222]: Նախասրտերի ֆիբրիլացիան կարող է միանալ այս կոմբինացիաներից յուրաքանչյուրին և ավելի ծանրացնել ախտանիշները [223]: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ սրտային անբավարարության հետերոգեն պաթոֆիզիոլոգիայի ընկալումը կարևոր է, քանի որ դա ազդում է բուժման սխեմայի վրա:

Մեծամասամբ պացիենտների մոտ սրտային անբավարարության հարաճման և խորացման պրոցեսը բնութագրվում է սրտամկանի ֆիբրոզով, պատերի բարակումով և շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում [222,224,225]: Սկզբնական փուլում պացիենտները հաճախ չունեն ախտանշաններ և ստանդարտ ոչ ինվազիվ ցուցիչները մնում են նորմալի սահմաններում:

Հիվանդության հարաճմանը զուգընթաց, նկատվում է ձախ փորոքի դիաստոլիկ և սիստոլիկ ֆունկցիայի իջեցում, ձախ փորոքի պատի հաստության նվազում և արտամղման ֆրակցիայի նվազում (երբեմն մատնանշելով < այրման փուլը > կամ հիպոկինետիկ դիլատացիոն փուլը) կամ ծանր դիաստոլիկ դիսֆունկցիա, ուղեկցվելով նախասրտի արտահայտված դիլատացիայով՝ փորոքի նվազագույն դիլատացիայով կամ դրա բացակայությամբ (ռեստրիկտիվ ֆենոտիպ) [222]: Այս խորացված դեպքերում հաճախ միանում են միտրալ և տրիկուսպիդալ հետհոսքն և նաև միջինից մինչև ծանր աստիճան թոքային հիպերտենզիան [226]:

Սուր սրտային անբավարարության տեսքով դրսևորումը հանդիպում է ոչ հաճախ, սակայն այն կարող է առաջանալ ռիթմի խանգարումների (նախասրտերի ֆիբրիլացիա, վերփորոքային տախիկարդիա, կամ կայուն փորոքային տախիկարդիա), սուր միտրալ անբավարարության (օրինակ, փեղկի պոկում կամ ինֆեկցիոն էնդոկարդիտ), սրտամկանի իշեմիայի կամ ինֆարկտի և ուղեկցող հիվանդությունների (օրինակ, անեմիա կամ հիպոթիրեոզ) պատճառով:

8.2.1. Ճնշման ինվազիվ գնահատում

Սրտի ոչ ինվազիվ վիզուալիզացիան կարող է մեծամասամբ փոխարինել կաթետերիզացիային՝ սրտի ֆունկցիայի ռուտին գնահատման ժամանակ: Ներսրտային ճնշումների ինվազիվ չափումը կարող է լինել պահանջված, երբ սրտի ոչ ինվազիվ վիզուալիզացիան բավարար տվյալներ չի տալիս ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի գնահատման, ինվազիվ բուժման պլանավորման (օրինակ, փականային հիվանդությունների բուժման) և սրտի փոխպատվաստման համար [227]:

Հեմոդինամիկայի ինվազիվ հետազոտման խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Աջ և ձախ սրտի ֆունկցիայի և թոքային զարկերակներում դիմադրության գնահատման համար սրտի կաթետերիզացիա խորհուրդ է տրվում այն պացիենտներին, որոնց պլանավորվում է սրտի փոխպատվաստում կամ մեխանիկական ցիրկուլյատոր աջակցություն	I	B
Սրտի ոչ ինվազիվ վիզուալիզացիան, որոշ տվյալներով, սիմպտոմատիկ պացիենտների մոտ կարող է	IIb	C

դիտարկվել ձախ և աջ սրտի կաթետերիզացիան ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիան գնահատելու և ձախ փորոքի լցման ճնշումը հաշվելու համար		
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

8.2.2. Սիրտ-թոքային ծանրաբեռնվածության թեստեր

Մասնագիտացված լաբորատորիաների կողմից իրականացվող շնչառական գազերի միաժամանակյա չափումը ներկայացնում է ֆունկցիոնալ սահմանափակման ծանրության և դրա պատճառների օբյեկտիվ պատկերը: Դա կարող է օգտակար լինել ՀԿՄՊ-ի և մարզիկների մոտ փորոքների ֆիզիոլոգիական հիպերտրոֆիայի միջև տարբերակիչ ախտորոշման համար և ներկայացնել ախտորոշիչ հուշումներ, ինչպես օրինակ, թթվածնի առավելագույն պահանջի ոչ համաչափ իջեցումը և մետաբոլիկ հիվանդություններով պացիենտների ցածր անաէրոբ շեմը [231,232]: Հնարավորության դեպքում, սիրտ-թոքային ծանրաբեռնվածության թեստերը, շնչառական գազերի միաժամանակյա որոշմամբ, պետք է դիտարկել որպես առաջնային կլինիկական հետազոտություն, եթե պացիենտի մոտ նկատվում է ախտանիշների փոփոխություն և, երբ պլանավորվում է արտատար ուղու գրադիենտի ինվազիվ բուժում [233-235]: Սիրտ-թոքային ծանրաբեռնվածության թեստերը խորհուրդ է տրվում բոլոր պացիենտներին, որոնց պլանավորվում է սրտի փոխպատվաստում [227]:

Եթե սիրտ-թոքային ծանրաբեռնվածության թեստերն անհասանելի են, որպես այլընտրանք, կարող է օգտագործվել տրեդմիլ-թեստը կամ վելոէրգոմետրիան՝ միաժամանակյա էլեկտրասրտագրությամբ: Անկախ ծանրաբեռնվածության թեստավորման մեթոդից, հետազոտության ժամանակ խորհուրդ է տրվում զարկերակային ճնշման չափում սովորական սինգոմետրով, սիստոլիկ ճնշման փոփոխությունը հայտնաբերելու համար, որը կարող է լինել կարևոր՝ կանխատեսիչ տեսանկյունից [236,237]:

Խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Սիրտ-թոքային ծանրաբեռնվածության թեստավորումը շնչառական գազերի միաժամանակյա չափումներով խորհուրդ է տրվում արտահայտված ախտանիշներով, ձախ փորոքի սիստոլիկ և/կամ դիաստոլիկ	I	B

<p>դիսֆունկցիայով պացիենտներին, որոնք հետազոտվում են սրտի փոխապատվաստման կամ մեխանիկական աջակցության համար</p>		
<p>Անկախ ախտանիշներից, սիրտ-թոքային ծանրաբեռնվածության թեստավորումը շնչառական գազերի միաժամանակյա չափումներով (դրա բացակայության դեպքում ստանդարտ տրեդմիլ կամ վելոէրգոմետրիա) պետք է դիտարկել ֆիզիկական ծանրաբեռնվածության անտանելիության ծանրությունը և մեխանիզմը գնահատելու և սիստոլիկ արյան ճնշման փոփոխությունները գնահատելու համար</p>	Ila	B
<p>Սիրտ-թոքային ծանրաբեռնվածության թեստավորումը շնչառական գազերի միաժամանակյա չափումներով (կամ ստանդարտ տրեդմիլ կամ վելոէրգոմետրիա դրա բացակայության դեպքում) պետք է դիտարկել այն պացիենտների մոտ, որոնց մոտ պլանավորվում է սեպտալ միոմէկտոմիա՝ ծանրաբեռնվածության ժամանակ սահմանափակման աստիճանը որոշելու համար</p>	Ila	C
<p>Նշումներ. ^a- Խորհուրդի դաս ,^b- ապացուցողականության մակարդակ</p>		

8.3 Ուշագնացություններ

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ ուշագնացության պատճառ կարող են լինել հիպովոլեմիան, լրիվ լայնակի պաշարումը [239], սինուսային հանգույցի դիսֆունկցիան, կայուն փորոքային տախիկարդիան, ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիան [240], անոմալ անոթային ռեֆլեքսները [237,241,242]: Երբեմն արագ փորոքային պատասխանով նախասրտային առիթմիաները կարող են առաջացնել ուշագնացություններ, հատկապես, նախասրտի պահպանված ֆունկցիայով և բարձր լցման ճնշումով անհատների մոտ[223], ինչպես նաև կարող են լինել մի քանի պատճառների

համակցումներ, ներառյալ այնպիսի ուղեկցող հիվանդություններ, ինչպիսիք են էպիլեպսիան կամ շաքարային դիաբետը [243]:

Տոթ կամ շոգ միջավայրում երկար մնալուց կամ սննդի ընդունումից հետո առաջացած ուշագնացությունը թույլ է տալիս ենթադրել նեյրոգեն պատճառների մասին, հատկապես, եթե այն ասոցացվում է սրտխառնոցով և փսխումով: Ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ, կամ դրանից անմիջապես հետո, սրտխփոցից կամ կրծքավանդակի շրջանում ցավից հետո առաջացած ուշագնացությունը, ենթադրաբար, ունի սրտային ծագում [243]: Պրովոկացվող օբստրուկցիան [85] պետք է բացառվի, եթե հիվանդի մոտ զարգանում է կրկնակի ուշագնացություն ծանրաբեռնվածության ժամանակ (աստիճան բարձրանալուց կամ լարվածության ժամանակ): Փորոքային առիթմիաները ոչ հաճախ են հանդիսանում ուշագնացության պատճառ, բայց նույնպես պետք է ուշադրությամբ ընդունել, եթե ուշագնացությունն առաջանում է հանկարծակի՝ հատկապես, հանգիստ վիճակում կամ նվազագույն ծանրաբեռնվածության ժամանակ:

Հաշվի առնելով, որ չբացատրվող ոչ վազովազալ ուշագնացությունները հանդիսանում են հանկարծակի սրտային մահվան ռիսկի գործոն [99,244-248], հատկապես, երբ այն լինում է երիտասարդ պացիենտների մոտ առաջին հետազոտությունից հետո կարճ ինտերվալում [99], կարելի է նշանակել պրոֆիլակտիկ բուժում՝ ԻԿԴ, այն պացիենտներին, ովքեր ունեն հանկարծակի մահվան բարձր ռիսկի այլ նշաններ, նույնիսկ, եթե սինկոպեալ վիճակների առաջացման մեխանիզմը մնում է անհայտ՝ պացիենտի լրիվ հետազոտումից հետո: Այն փաստը, որ ուշագնացության պատճառները կարող են լինել փորոքային առիթմիաներից տարբերվող մեխանիզմներ, նշանակում է, որ հիվանդների մոտ կարող է պահպանվել կրկնակի ուշագնացության ռիսկը ԻԿԴ իմպլանտացիայից հետո:

Ուշագնացությունով հիվանդներին պետք է կատարել 12-արտաձուձային ԷՍԳ հետազոտություն, ստանդարտ ուղղահայաց ծանրաբեռնվածության թեստ և 48-ժամյա ԷՍԳ հոլտեր մոնիտորինգ: Պետք է դիտարկել սթրես էխոսրտագրության հնարավորությունը, հատկապես, սթրեսային և պոստուրալ ուշագնացություններով պացիենտների մոտ՝ ձախ փորոքի արտատար ուղու պրովոկացվող օբստրուկցիան հայտնաբերելու համար[85]: Անբացատրելի կրկնվող սինկոպեալ վիճակներով պացիենտների մոտ, ովքեր ունեն հանկարծակի սրտային մահվան ցածր ռիսկ, պետք է դիտարկել երկարատև ԷՍԳ գրանցման սարքի իմպլանտացիան [249,250]: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ թիլտ-թեստի հետ կապված տվյալները շատ չեն, սակայն թեստերի դրական արդյունքների մեծ

հաճախականությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն օգտակար չէ ռուտին հետազոտության սահմաններում, միայն, եթե չկան ավտոնոմ դիսֆունկցիայի մասին վկայող այլ ախտանիշներ [243, 251, 252]:

Ուշագնացությունների ժամանակ հետազոտության խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
12-արտաձուլային ԷՍԳ-ն, ուղղահայած ծանրաբեռնվածության թեստը, 2Դ և դոպլեր էխոսրտագրությունը հանգիստ վիճակում և ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ և 48-ժամյա ամբուլատոր ԷՍԳ մոնիտորինգ խորհուրդ է տրվում անբացատրելի ուշագնացություն ունեցող պացիենտներին, այդ ախտանշանների պատճառները բացահայտելու համար	I	C
Պետք է դիտարկել իմպլանտավորվող կանթային ձայնագրիչը կրկնակի ուշագնացություններով այն պացիենտների համար, որոնց մոտ առկա է հանկարծակի մահվան ցածր ռիսկ	IIa	C
Նշումներ. ^a -Խորհուրդի դաս, ^b – ապացուցողականության մակարդակ		

8.4 Սրտխփոց

Բազմաթիվ պացիենտներ զանգատվում են սրտխփոցից [165,246], որոնք առաջանում են սիմպտոմատիկ սրտային կծկումների և փորոքային էկտոպիայի հետևանքով: Սրտխփոցների կայուն, մի քանի րոպեից երկար տևող էպիզոդների հաճախակի պատճառ են հանդիսանում վերփորոքային առիթմիաները: Հաճախակի սրտխփոցներով պացիենտներին պետք է կատարվի 48-ժամյա ԷՍԳ հոլտեր մոնիտորինգ [250,253]: Եթե պատճառը հայտնաբերված չէ, կարելի է նկատի ունենալ երկարատև ԷՍԳ գրանցման սարքի իմպլանտացիան [250]:

Խորհուրդներ սրտխփոցի համար		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Հաճախակի, կայուն սրտխփոցներով պացիենտների	I	C

համար խորհուրդ է տրվում 48-ժամյա ամբուլատոր ԷՍԳ մոնիթորինգ, պատճառը հայտնաբերելու համար		
Կարելի է դիտարկել իմպլանտավորվող կանթային ձայնագրիչի իմպլանտացիան հաճախակի սրտխփոցներով այն պացիենտների մոտ, որոնց մոտ երկարատև ԷՍԳ մոնիթորինգով չեն հայտնաբերվել պատճառներ	IIb	C
Նշումներ. ^a - Խորհուրդի դաս, ^b – ապացուցողականության մակարդակ		

8.5 Էլեկտրաֆիզիոլոգիական թեստավորման դերը

Ուշագնացությամբ կամ առիթմիաների մասին վկայող ախտանիշներով պացիենտներին ռուտին էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտությունը խորհուրդ չի տրվում: ԷՖՀ ցուցված է պերսիստենտ կամ պարբերական վերփորոքային առիթմիաներով (նախասրտերի թրթռում, նախասրտային տախիկարդիա, ատրիովենտրիկուլյար հանգուցային ռե-էնթրի տախիկարդիա, հավելյալ ատրիովենտրիկուլյար հաղորդչական ուղիներով պայմանավորված տախիկարդիա) պացիենտներին և այն պացիենտներին, ովքեր ունեն սինոատրիալ հիվանդության կամ AV-պաշարման մասին վկայող այլ ոչ ինվազիվ թեստերի տվյալներ [249,254]: ԷՖՀ ցուցված է փորոքների վաղաժամ վերաբևեռացմամբ պացիենտներին առիթմոգեն սուբստրատի նույնականացման և արևացիայի միջոցով վերացման համար [255]: ԷՖՀ կարող է առաջարկվել արձանագրված և ախտանշանային մոնոմորֆ կայուն փորոքային տախիկարդիայով պացիենտներին առիթմոգեն սուբստրատի նույնականացման և արևացիայի միջոցով վերացման համար [256,257]:

Էլեկտրաֆիզիոլոգիական թեստավորման խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Ինվազիվ էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտությունը խորհուրդ է տրվում արձանագրված պերսիստենտ կամ պարբերական վերփորոքային առիթմիաներով (նախասրտերի թրթռում, նախասրտային տախիկարդիա, ատրիովենտրիկուլյար հանգուցային ռե-էնթրի տախիկարդիա, հավելյալ ատրիովենտրիկուլյար հաղորդչական ուղիներով պայմանավորված տախիկարդիա)	I	C

և փորոքների վաղաժամ վերաբևեռացմամբ պացիենտներին՝ առիթմոգեն սուբստրատի նույնականացման և արլացիայի միջոցով վերացման համար		
ԷՖՀ կարող է դիտարկվել արձանագրված և սիմպտոմատիկ մոնոմորֆ կայուն փորոքային տախիկարդիայով առանձին պացիենտների մոտ՝ առիթմոգեն սուբստրատի նույնականացման և արլացիայի միջոցով վերացման համար:	IIb	C
Ծրագրավորվող փորոքային խթանումով պացիենտներին հանկարծակի սրտային մահվան ռիսկի գնահատման համար էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտություն խորհուրդ չի տրվում	III	C
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

9. Ախտանիշների և բարդությունների բուժում

Մեծ ռանդոմիզացված հետազոտությունների պարագայում դեղորայքային բուժումն ընտրվել է էմպիրիկ հիմքով ֆունկցիոնալ հնարավորությունների բարելավման, ախտանիշների արտահայտվածության իջեցման, հիվանդության զարգացման իջեցման նպատակով [2]:

9.1 Ճախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիա

Ըստ սահմանման, ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիան սահմանվում է ինչպես ձախ փորոքի արտատար ուղիում ակնթարթային առաջացող դոպլերային ճնշման բարձրացում ≥ 30 մմ ս.ս., սակայն ինվազիվ բուժման համար շեմը սովորաբար համարվում է ≥ 50 մմ ս.ս. գրադիենտը:

Հանգիստ վիճակում կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ < 50 մմ ս.ս. գրադիենտով պացիենտներին մեծամասնությունը պետք է ստանան բուժում՝ համապատասխան ոչ օբստրուկտիվ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիաների հանձնարարականների, սակայն ոչ մեծ քանակի ձախ փորոքի արտատար ուղու մաքսիմալ գրադիենտի 30-50 մմ ս.ս. արժեք ունեցող և ախտանիշների այլ արտահայտված պատճառների բացակայությամբ պացիենտների մոտ պետք է դիտարկվել գրադիենտի ինվազիվ իջեցումը, հաշվի առնելով, որ համոզիչ տվյալներ այդ խմբի հիվանդների մոտ առկա չեն:

9.1.1. Ընդհանուր մոտեցումներ

Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով բոլոր պացիենտները պետք է խուսափեն ջրազրկումից և մեծ քանակությամբ ալկոհոլի ընդունումից, նաև պետք է խորհուրդ տալ իջեցնել քաշը: Զարկերակները և երակները լայնացնող դեղամիջոցները, այդ թվում՝ նիտրատները և ֆոսֆոդիէսթերազ-5 ինհիբիտորները, կարող են խորացնել ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիան և, հնարավորության դեպքում, պետք է խուսափել այդ դեղամիջոցներից [258]: Առաջին անգամ ծագած կամ վատ կարգավորվող նախասրտերի ֆիբրիլացիան կարող է վատթարացնել ախտանիշները և պետք է բուժել սինուսային ռիթմին արագ անցման կամ փորոքային ռիթմի վերահսկման ճանապարհով [223]: Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով հիվանդներին խորհուրդ է տրվում խուսափել դիգոքսինի ընդունումից, որը կապված է դրա դրական ինտորոպ արդյունքի հետ [259]:

Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով պացիենտների բուժման խորհուրդներ. ընդհանուր մոտեցումներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Հանգիստ կամ ինդուկցված վիճակում ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով պացիենտներին խորհուրդ է տրվում խուսափել զարկերակային և երակային դիլատատորներից, ներառյալ, նիտրատները և ֆոսֆոդիէսթերազ ինհիբիտորները	IIa	C
Առաջին անգամ ծագած կամ վատ վերահսկվող նախասրտերի ֆիբրիլացիայով պացիենտների մոտ սինուսային ռիթմի վերականգնումը և ադեկվատ հսկողությունը պետք է դիտարկվի մինչև ինվազիվ թերապիայի հարցի որոշումը	IIa	C
Հանգիստ կամ ինդուկցված վիճակում ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով պացիենտներին խորհուրդ չի տրվում դիգոքսին	III	C
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

9.1.2. Դեղորայքային բուժում

Ընդհանուր կարծիքով, ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով ախտանշանային պացիենտներին խորհուրդ է տրվում սկզբնական շրջանում բուժել առանց վազոդիլատացնող հատկությամբ բետտա-պաշարիչներով, ընտրելով առավելագույն տանելի դեղաչափ, սակայն տարբեր բետտա-պաշարիչների տարբերությունները միմյանցից համեմատող հետազոտությունները շատ քիչ են: Ոչ մեծ և հիմնականում ռետրոսպեկտիվ հետազոտությունները վկայում են, որ օրալ պրոպրանոլոլի ընդունումը կարող է վերացնել կամ իջեցնել հանգիստ վիճակում կամ ծանրաբեռնվածությամբ ուղղորդված ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիան, բերել ախտանիշների բարելավմանը [263-265]: Մեկ հետազոտության մեջ ցույց է տրվել տոլերանտության, ախտանիշների բարելավումը և վերփորոքային ու փորոքային առիթմիաների ճնշումը ստտալոլ ընդունող հիվանդների մոտ [266]:

Եթե բետտա-պաշարիչներով մոնոթերապիան արդյունավետ չէ, կարող է բուժմանը ավելացվել առավելագույն տանելի դեղաչափով դիզոպիրամիդ (եթե հասանելի է) (սովորաբար 400-600 մգ/օր) [267,268]: Այս IA դասի հակաառիթմիկ դեղամիջոցը վերացնում է ձախ փորոքի բազալ հատվածաներում ճնշման գրադիենտը, բարելավում է ֆիզիկական ծանրաբեռնվածության նկատմամբ տոլերանտությունը և ֆունկցիոնալ ռեգերվը՝ առանց պրոառիթմիկ արդյունքի կամ հանկարծակի սրտային մահվան ռիսկի բարձրացման [267,268]: Դեղաչափ-կախյալ հակախոլիներգիկ կողմնակի արդյունքները ներառում են աչքերի և բերանի խոռոչի չորություն, միզակապություն և փորկապություն [267,268]: Պետք է հսկողության տակ պահել կորեկցված ՕՏ ժամանակամիջոցն աճող դեղաչափի ժամանակ և 480 մվ-ից բարձր լինելու դեպքում դեղաչափը պետք է իջեցնել: Գլաուկոմայով, շագանակագեղձի բորբոքմամբ տղամարդկանց, ՕՏ-ժամանակամիջոցը երկարացնող պատրաստուկներ (օրինակ, ամիոդարոն, ստտալոլ) ընդունող պացիենտներին պետք է խուսափել դիզոպիրամիդի նշանակումից: Նախասրտերի ֆիբրիլացիայով կամ դրա զարգացման ռիսկով պացիենտներին, որոնց մոտ դեղորայքով ինդուկցված AV- հաղորդականության հեշտացումը կարող է արագացնել փորոքային ռիթմը, պետք է զգուշությամբ նշանակել դիզոպիրամիդ: Դիզոպիրամիդը կարելի է կիրառել վերապամիլի հետ համակցումով [268]:

Վերապամիլ (սկզբնական դեղաչափը 40 մգ օրը 3 անգամ մինչև առավելագույն դեղաչափ 480 մգ/օր) կարելի է օգտագործել այն իրավիճակներում, երբ բետտա- պաշարիչները հակացուցված են կամ արդյունավետ չեն, սակայն ձախ փորոքի արտատար ուղու արտահայտված օբստրուկցիայով կամ թոքային զարկերակի բարձր սիստոլիկ ճնշումով պացիենտները պահանջում են մանրակրկիտ հսկողություն, քանի որ այն կարող է հրահրել

թոքի այտուց [269]: Կարճաժամկետ ընդունումը կարող է բարելավել ծանրաբեռնվածության նկատմամբ տոլերանտությունը, թեթևացնել ախտանշանները և կարգավորել կամ բարելավել դիաստոլիկ լեցումն առանց սիստոլիկ ֆունկցիայի ճնշման [270-273]: Նման դիտարկումներ ցույց են տրվել դիլտիազեմի համար (սկզբնական դեղաչափը 60 մգ-ից, 3 անգամ, առավելագույն դեղաչափը 360 մգ/օր)[274], որը պետք է դիտարկել այն պացիենտների համար, ովքեր ունեն բետտա- պաշարիչների և վերապամիլի նկատմամբ անտանելիություն կամ հակացուցումներ: Նիֆեդիպինը և այլ դիհիդրոպիրիդիններ ցուցված չեն ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի բուժման համար [275,276]:

Քիչ դեղաչափով կանթային կամ թիագիդային միզամուղները կարելի է զգուշությամբ օգտագործել ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով պայմանավորված հևցը թեթևացնելու համար, սակայն կարևոր է թույլ չտալ հիպովոլեմիայի առաջացումը :

Պետք է դիտարկել բետտա- պաշարիչների նշանակումը ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով նորածիններին, ինչպես նաև կան սահմանափակ տվյալներ, որ երեխաների մոտ կարելի է անվտանգ օգտագործել վերապամիլ [272]: Երեխաների մոտ բացակայում են դիզոպիրամիդոլ բուժման մասին տվյալները, որոնք թույլ կտային մշակել առանձնահատուկ հանձնարարականներ:

Հազվադեպ ձախ փորոքի արտատար ուղու հրահրող օբստրուկցիայով պացիենտների մոտ հիվանդությունը կարող է մանիֆեստացվել հիպոտենզիայով և թոքի այտուցով, որոնք կարող են իմիտացնել սրտամկանի սուր իշեմիա: Կարևոր է հասկանալ դեպքերի նման զարգացումը, քանի որ վազոդիլատատորների և ինոտրոպ արդյունքով պատրաստուկների կիրառումն այս իրավիճակներում կարող է լինել կյանքին վտանգ սպառնացող: Դրա փոխարեն բուժումը պետք է կազմված լինի բետտա-պաշարիչներից (օրալ և ներերակային) և վազոկոնստրիկտորներից (օրինակ, ֆենիլէֆրին, մետարամինոլ և ադրենալին):

9.1.3. Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի ինվազիվ բուժում


Անախտանշանային պացիենտների մոտ ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի ինվազիվ բուժման առավելության մասին տվյալները բացակայում են անկախ օբստրուկցիայի աստիճանից:

Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի իջեցման նպատակով, ինվազիվ բուժումը պետք է դիտարկել ≥ 50 մմ ս.ս. գրադիենտով, միջինից մինչև ծանր արտահայտվածությամբ ախտանիշներով (III-IV ֆունկցիոնալ դաս NYHA) պացիենտների մոտ, և/կամ չնայած

առավելագույն տանելի դեղորայքային բուժմանը ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ ինդուկցված կրկնակի ուշագնացություններով պացիենտների մոտ: Որոշ կենտրոններում ինվազիվ բուժումը դիտարկվում է նաև մեղմ ախտանիշներով (II դաս NYHA) պացիենտների մոտ, որոնց մոտ առավելագույն կամ ինդուկցված գրադիենտը ≥ 50 մմ ս.ս. (ծանրաբեռնվածություն կամ Վալսալվայի փորձ) համակցվում է SAM-միջնորդավորված միջին կամ ծանր աստիճանի միտրալ հետհոսքով, նախասրտերի ֆիբրիլացիայով, կամ միջինից մինչև ծանր աստիճանի ձախ նախասրտի դիլատացիայով, սակայն այդ պրակտիկային աջակցող տվյալները քիչ են [277]:

Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով պացիենտների դեղորայքային բուժման խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս a	Մակարդակ b
Առանց անոթալայնիչ հատկության բետտա-պաշարիչները, առավելագույն տանելի դեղաչափով, խորհուրդ են տրվում հանգիստ վիճակում կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ առաջացող ձախ փորոքի արտատար տրակտի օբստրուկցիայով պացիենտներին, որպես առաջին գծի թերապիա, ախտանիշները նվազեցնելու համար :	I	B
Հանգիստ վիճակում կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ առաջացող ձախ փորոքի արտատար տրակտի օբստրուկցիայով այնպացիենտներին, որոնք ունեն անտանելիություն բետտա – պաշարիչներին կատմամբ, կամ որոնց հակացուցված են բետտա – պաշարիչներ, խորհուրդ է տրվում նշանակել վերապամիլ՝ առավելագույն տանելի դեղաչափով	I	B
Հանգիստ վիճակում կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ առաջացող ձախ փորոքի արտատար տրակտի օբստրուկցիայով պացիենտներին, որպես հավելյալ դեղամիջոց բետտա – պաշարիչներով բուժմանը (կամ եթե հնարավոր չէ բետտա –	I	B

<p>պաշարիչներով, վերապամիլով բուժմանը) խորհուրդ է տրվում նշանակել դիզոպիրամիդ՝ առավելագույն տանելի դեղաչափով :</p>		
<p>Հանգիստ վիճակում կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ առաջացող ձախ փորոքի արտատար տրակտի օբստրուկցիայով պացիենտների շրջանում դիզոպիրամիդը առավելագույն տանելի դեղաչափով կարող է դիտարկվել որպես մոնոթերապիա, զգուշությամբ կիրառվելով նախասրտերի ֆիբրիլյացիայի առկայությամբ (կամ նախասրտերի ֆիբրիլյացիայի նախատրամադրվածությամբ) պացիենտների շրջանում, քանի որ կարող է բարձրացնել փորոքային կծկումների հաճախականությունը</p>	IIb	C
<p>Բետտա-պաշարիչները կամ վերապամիլը խորհուրդ է տրվում հանգիստ վիճակում կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ առաջացող ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով անախտանիշ պացիենտներին՝ ձախ փորոքում ճնշման իջեցման համար</p>	IIb	C
<p>Ցածր դեղաչափերով կանթային կամ թիագիդային միզամուղները կարող են զգուշությամբ օգտագործել ձախ փորոքի արտատար ուղու ախտանշանային օբստրուկցիայի դեպքում՝ ծանրաբեռնվածության ժամանակ շնչարգելությունը նվազեցնելու համար:</p>	IIb	C
<p>Առավելագույն տանելի դեղաչափով դիլտիազեմի նշանակումը պետք է դիտարկել հանգիստ վիճակում կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ առաջացող ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով ախտանշանային պացիենտներին, որոնց հակացուցվաց են բետտա-պաշարիչներ և վերապամիլ կամ ունեն տանելիություն բետտա-պաշարիչների և վերապամիլի նկատմամբ:</p>	IIa	C
<p>Օրալ կամ ներերակային բետտա-պաշարիչները և վազոկոնստրիկտորները պետք է դիտարկել հիպոտենզիայով և թոքի այտուցով դրսևորվող, ծանր, ինդուկցված ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով պացիենտների շրջանում</p>	IIa	C
<p>Նշումներ. ^a- խորհուրդի դաս, ^b – ապացուցողականության մակարդակ</p>		



Նկար 5

9.1.3.1. Վիրահատական բուժում

Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի բուժման համար առավել հաճախ կատարվող վիրահատական միջամտությունը հանդիսանում է փորոքային սեպտալ միոմէկտոմիան (Մոռոուի միջամտություն), որի ժամանակ ձևավորվում է ուղղանկյուն խորացում, որը շարունակվում է դիստալ, միտքայլ փեղկի և աորտալ փականից ներքև միջնապատի միջև կոնտակտից դուրս [278] : Դա 90% և ավելի դեպքերում վերացնում է կամ նշանակալիորեն իջեցնում ձախ փորոքի արտատար ուղու գրադիենտը, փոքրացնում է SAM-միջնորդավորված միտքայլ հետհոսքի աստիճանը, բարելավում ֆիզիկական ծանրաբեռնվածության նկատմամբ տանելիությունը և ախտանիշները: Երկարատև ախտանշանային արդյունք դիտվում է պացիենտների 70-80%-ի դեպքում՝ ընդհանուր պոպուլյացիայի հետ համեմատելի ապրելիությամբ [279-287]: Վիրահատության բարորակ ելքի նախավիրահատական պրեդիկտորներն են տարիք <50 տ, ձախ նախասրտի չափ <46 մմ ս.ս., նախասրտերի ֆիբրիլացիայի բացակայությունը և արական սեռը [287]:

Հիմնական վիրահատական բարդություն է հանդիսանում AV-բլոկադան, միջփորոքային միջնապատի դեֆեկտը և աորտալ ռեգուրգիտացիան, սակայն գոյություն ունեն բարձրակարգ մասնագիտացված կենտրոններ, որոնք ունեն ինտրաօպերացիոն տրանսէզոֆագեալ էխո-սո օգտագործման փորձ [286,288,289]: Երբ միաժամանակ նկատվում է ձախ փորոքի խոռոչի

միջին մասի օբստրուկցիա, ստանդարտ միոմէկտոմիան կարող է շարունակել դիտալ՝ մինչև փորոքի միջնամաս պապիլյար մկանների հիմքի շրջան, սակայն նման մոտեցման արդյունավետության և երկարատև արդյունավետության մասին տվյալները սահմանափակ են [290]:

Միտրալ փականի ուղեկցվող վիրաբուժական շտկում պահանջվում է միոմէկտոմիայի ենթարկվողների 11-20% դեպքերում [114]: Միտրալ փականի փեղկերի արտահայտված երկարումով պացիենտների մոտ և/կամ միջինից մինչև ծանր աստիճանի միտրալ հետհոսքով պացիենտների մոտ միոմէկտոմիան կարող է համակցվել մի քանի հավելյալ միջամտություններից մեկով՝ ներառյալ միտրալ փականի փոխարինումը, պտկային մկանների առաջնահետին ռեկոնստրուկցիան, միտրալ փականի առաջնային փեղկի ծալքավորում, առաջնային փեղկի երկարացնելը պերիկարդիալ թաղանթի միջոցով մշակված գլուտարալդեհիդով, որն ավելացնում է փականի միջին հատվածի կոշտությունը [291-294]: Միտրալ փականի երկարած առաջնային փեղկն ավելի շատ տրամադրում է միտրալ փականի պլաստիկայի քան նրա փոխմանը [295]: Միտրալ փականի վրա մանիպուլյացիայով միոմէկտոմիայի վիրաբուժական մահացությունը կազմում է 3-4 % [294,296,297]:

9.1.3.2. Սեպտալ ալկոհոլային արլացիա

Մանսագիտացված կենտրոններում ալկոհոլի ինեկցիան սեպտալ պերֆորատիվ ճյուղեր (կամ երբեմն ձախ առաջնային վայրէջ զարկերակի այլ ճյուղեր) լոկալ սեպտալ սպիի ինդուկցիայի համար, ունի վիրաբուժական բուժմանը մոտիկ արդյունավետություն գրադիենտի իջեցման, ախտանշանների բարելավման, ֆիզիկական ծանրաբեռնվածության նկատմամբ տանելիության առումով [298-302]: Հիմնական ոչ մահացու բարդություն է հանդիսանում AV-պաշարումը 7-20% պացիենտների մոտ, իսկ միջամտության արդյունքում մահացությունը համադրելի է իզոլացված միոմէկտոմիայի հետ [299-303]:

Սեպտալ արյունահոսքի վարիաբելության հետ կապված, մինչև ալկոհոլի ինեկցիան անհրաժեշտ է իրականացնել սրտամկանի կոնտրաստ էխոսրտագրություն: Եթե կոնտրաստ նյութը չի տեղայնացվում բացառապես միջնապատի բազալ մասի և միտրալ-սեպտալ կոնտակտին հարող շրջանում, բուժգործողությունը պետք է չեղարկել [11-113]:

Էնդովասկուլյար լաբորատորիայում արգելվում է գրադիենտի ռեդուկցիայի նպատակով մեծ քանակությամբ սպիրտի ինեկցիան մի քանի սեպտալ ճյուղեր, քանի որ ասոցացվում է բարդությունների և առիթմիկ իրադարձությունների բարձր ռիսկի հետ [304]:

Որոշ պացիենտների մոտ նկարագրվել են այլընտրանքային մեթոդներ, ներառյալ ոչ ալկոհոլային սեպտալ էմբոլիզացիայի տեխնիկան (ժապավեններ [305,306], պոլիվինիլալկոհոլային փրփուրի մասնիկներ [307], ցիանոկրիլատ [308]) և ուղղակի ներխոռոչային արևացիան (ռադիոհաճախականության մեթոդ, կրիոթերապիայի մեթոդ) [309,310]: Այդ մեթոդներն ուղղակիորեն չեն համեմատվել սեպտալ ռեդուկցիայի այլ տարբերակների հետ և դրանց հարաբերակցությունը երկարատև արդյունքի և անվտանգության տեսանկյունից անհասանելի է:

Սեպտալ ռեդուկցիայի խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
Խորհուրդ է տրվում, որպեսզի սեպտալ ռեդուկցիան իրականացվի հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի բուժման մեջ մասնագիտացած բազմապրոֆիլ թիմում աշխատող մասնագետի կողմից	I	C
Սեպտալ ռեդուկցիան խորհուրդ է տրվում հանգիստ վիճակում կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ առաջացող ձախ փորոքի արտատար ուղու ≥ 50 մմ ս.ս. գրադիենտով օբստրուկցիայով պացիենտներին՝ ախտանիշների նվազեցման համար, ովքեր չնայած առավելագույն տանելի թերապիայի ընդունմանը, ունեն III-IV ֆունկցիոնալ դաս (NYHA)	I	B
Սեպտալ ռեդուկցիան պետք է դիտարկել ծանրաբեռնվածության ժամանակ ձախ փորոքի արտատար ուղու ≥ 50 մմ ս.ս. գրադիենտով օբստրուկցիայի դեպքում, որը բերել է կրկնվող ուշագնացությունների, չնայած օպտիմալ դեղորայքային բուժմանը	IIa	C
Սեպտալ միոմէկտոմիան ավելի նախընտրելի է, քան սեպտալ ալկոհոլային արևացիան, խորհուրդ է տրվում այն, պացիենտներին, ովքեր ունեն սեպտալ ռեդուկցիայի ցուցում և վիրահատական միջամտության այլ ցուցումներ	I	C
Միտրալ փականի շտկումը կամ պրոթեզավորումը պետք է դիտարկել հանգիստ վիճակում կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության	IIa	C

<p>ժամանակ, ձախ փորոքի արտատար ուղու ≥ 50 մմ.ս. գրադիենտով օբստրուկցիայով և միջինից ծանր արտահայտվածությամբ միտրալ հետհոսքով պացիենտներին, որոնց մոտ միտրալ հետհոսքն առաջացել է ոչ միայն միտրալ փականի փեղկի առաջնասիստոլիկ շարժման հետևանքով</p>		
<p>Միտրալ փականի շտկումը կամ պրոթեզավորումը կարելի է դիտարկել հանգիստ վիճակում կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ, ձախ փորոքի արտատար ուղու ≥ 50մմ.ս. գրադիենտով օբստրուկցիայով և միտրալ փականի ու միջնապատի շփման տեղում միջփորոքային միջնապատի ≤ 16մմ հաստության դեպքում, կամ, երբ իզոլացված միոմէկտոմիայից հետո առկա է միջինից մինչև ծանր միտրալ հետհոսք</p>	IIb	C
<p>Նշումներ. ^a- խորհուրդի դաս, ^b- ապացուցողականության մակարդակ</p>		

9.1.3.3. Վիրահատական միջամտության համեմատումն ալկոհոլային արլացիայի հետ

Մինչև ինտերվենցիոն բուժումը, բոլոր պացիենտները պետք է հետազոտվեն փորձառու մուլտիդիսցիպլինար թիմի կողմից:

Թերապիայի ընտրությունը պետք է հիմնվի միտրալ փականի և սեպտալ անկանոնության բազմակողմանի գնահատման վրա, որը ներառում է իր մեջ արտատար ուղու և միտրալ փականի վիրահատական բուժում պահանջող այլ անկանոնությունների մանրակրկիտ բացառում: Սեպտալ արլացիան կարող է քիչ արդյունավետ լինել սրտի ՄՌՏ հետազոտությունով արտահայտված սեպտալ ֆիբրոզով և արտահայտված հիպերտրոֆիայով պացիենտների մոտ (≥ 30 մմ), սակայն համակարգային տվյալները բացակայում են: Ընդհանուր առմամբ, վենտրիկուլ- սեպտալ դեֆեկտի ռիսկը սեպտալ ալկոհոլային արլացիայի և սեպտալ միոմէկտոմիայի արդյունքում բարձր է միտրալ փականի և միջորոքային միջնապատի շփման տեղում՝ թեթև արտահայտված հիպերտրոֆիայի դեպքում (< 16 մմ): Այդ դեպքերում կարելի է դիտարկել այլընտրանքային մոտեցումներ, ինչպիսին է երկխոռոչանի խթանումը:

Վիրահատական բուժումը և սեպտալ ալկոհոլային արլացիան համեմատող ուսումնասիրված հետազոտություն չի կատարվել, բայց մի քանի մետաանալիզներ ցույց են տվել, որ երկու միջամտություններն էլ բարելավում են ֆունկցիոնալ կարգավիճակը՝ միանման միջամտական մահացությամբ [311-314]: Սեպտալ ալկոհոլային արլացիան ասոցացվում է


մշտական ռիթմը վարող սարքի տեղադրման անհրաժեշտություն առաջացնող AV- պաշարման հետ և ձախ փորոքի արտատար ուղու ավելի մեծ մնացորդային գրադիենտի հետ[311-314]: Ի տարբերություն միոմէկտոմիայի, պացիենտների մեծ մասի մոտ սեպտալ ալկոհոլային արևացիայից հետո առաջանում է ոչ թե Հիսի խրձի ձախ այլ աջ ոտիկի պաշարում : AV- պաշարման առաջացման ռիսկը վիրահատական միջամտությունից կամ ալկոհոլային արևացիայից հետո բարձր է այն պացիենտների մոտ, որոնց մոտ նախկինում առկա է եղել հաղորդականության խանգարումներ, այդ պատճառով սրտի ռիթմը վարող մշտական սարքի կանխարգելող տեղադրումն ինտերվենցիայից առաջ արդարացված է [315]:

Մասնագիտացված կենտրոններում երեխաների մոտ վիրահատական մահացությունը < 2% է: Ձախ փորոքի արտատար ուղու կրկնակի, վիրահատություն պահանջող օբստրուկցիան հանդիպում է հազվադեպ՝ բացառությամբ երեխաների, կապված ռեգելցիայի տեխնիկական սահմանափակման և սրտամկանի հարածող հիպերտրոֆիայի հետ: Սեպտալ ալկոհոլային արևացիան երեխաների, դեռահասների և երիտասարդների մոտ մնում է քննարկելի հարց, քանի որ չկան որևէ տվյալներ այդ խմբում սրտամկանի սպիի ուշ ազդեցության մասին և նաև այն պատճառով, որ տեխնիկական դժվարությունները և պոտենցիալ ռիսկերը երեխաների մոտ բարձր են:

9.1.3.4. Վիրաբուժական ակտիվության նվազագույն մակարդակին ուղղված պահանջներ

Ինչպես և ցանկացած այլ ինվազիվ միջամտությունների դեպքում, վիրահատական բուժման և ալկոհոլային արևացիայի արդյունքները հավանական է, որ ավելի լավ են այն կենտրոններում, որտեղ կատարվում են ավելի մեծ թվով միջամտություններ: Յուրահատուկ տվյալների բացակայության պայմաններում ինտերվենցիաների քանակի վերաբերյալ հանձնարարականները արտամիջարկվում են այլ միջամտություններից: Ողջամիտ է թվում, որպեսզի նվազագույն վիրաբուժական ակտիվությունը ներառի 10 սեպտալ ալկոհոլային արևացիա և 10 միոմէկտոմիա 1 տարվա ընթացքում: Երկու միջամտությունների համար էլ անհրաժեշտ է, որպեսզի լինեն մեկից ավելի պատրաստված մասնագետներ, ինտերվենցիոն ծրագրի անվտանգության և կայունության մեջ վստահ լինելու համար: Խորհուրդ է տրվում իրականացնել ազգային տվյալների հավաք և պրոսպեկտիվ ռեգիստրներ՝ արդյունքների և անվտանգության մոնիտորինգի համար:

Գրադիենտի ինվազիվ իջեցումը իրականացնող վիրաբույժները և սրտաբանները պետք է պատրաստված լինեն մասնագիտացված կենտրոններում և պետք է աշխատեն հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի բուժման փորձ ունեցող մուլտիդիսցիպլինար թիմի կազմում:



Նկար 6

9.1.3.5 Երկխոռոչային էլեկտրակարդիոխթանում

Երկխոռոչային էլեկտրակարդիոխթանման երեք ոչ մեծ ուսումնական հետազոտությունները և մի քանի երկարատև օբսերվացիոն դիտարկումները հաստատում են ձախ փորոքի արտատար ուղու գրադիենտի իջեցումը և կյանքի որակի, ախտանիշների վարիաբել բարելավումը [315-318]: Մի հետազոտության մեջ ենթախմբերի ռետրոսպեկտիվ անալիզը թույլ է տալիս ենթադրել, որ տարեց պացիենտները (>65տ) մեծ հավանականությամբ օգուտ են ստանում այդ տեսակ բուժումից [321]: Մեկ այլ հետազոտության մեջ կատարվել է ուղղակի համեմատություն սեպտալ ալկոհոլային արլացիայի և խթանման միջև և ցույց է տրվել արլացիայի դեպքում գրադիենտի առավել իջեցումը [323]: Կոխրեյնի վերջերս կատարված դիտարկումը ցույց է տալիս, որ խթանման օգտակարության մասին տվյալները հիմնված են ֆիզիոլոգիական չափումների վրա և կլինիկորեն ռելևանտ վերջնական կետեր չեն պարունակում [324]:

AV կարճ ինտերվալով մշտական AV հաջորդականությամբ խթանումը կարող է առաջարկվել ախտանշանային տարեց պացիենտներին, ովքեր չեն համապատասխանում կամ համաձայն չեն գրադիենտի ինվազիվ իջեցման այլ մոտեցումներին և այն պացիենտներին, ովքեր ունեն կարդիոխթանման այլ ցուցումներ: Խթանման պարամետրերը պետք է

օպտիմիզացվեն աջ փորոքի առավելագույն նախագրգռման և ձախ փորոքի լցման նվազագույն խանգարմանը հասնելու համար [325]: Ծանրաբեռնվածության ժամանակ երկու փորոքների ամբողջությամբ ներգրավվածության մեջ համոզված լինելու համար, պետք է հասանելի լինի AV- ինտերվալի դինամիկ պահանջվող արժեքը և ծրագրավորվող վերին շեմը պետք է լինի ավելին, քան ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ հասնող ամենաարագ ռիթմը [249]: Ատրիովենտրիկուլյար հանգույցի արլացիան կամ դրա մոդիֆիկացիաները կարող են դիտարկվել որպես շատ կարճ P-R ինտերվալով պացիենտների մի մասի մոտ օպտիմալ AV ծրագրավորման հասնելու մեթոդ, սակայն խորհուղ չեն տրվում [326]:

Օբստրուկցիայով պացիենտների էլեկտրակարդիոլոգիաների խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
Մշտական AV խթանումը՝ օպտիմալ AV ինտերվալով ձախ փորոքի արտատար ուղու գրադիենտի իջեցման կամ բետտա- պաշարիչներով և/կամ վերապամիլով բուժմանը նպաստելու համար, կարող է դիտարկվել առանձին, հանգիստ վիճակում կամ ծանրաբեռնվածության ժամանակ առաջացող ≥ 50 մմ ս.ս. գրադիենտով օբստրուկցիայով, սինուսային ռիթմով և դեղորայքային բուժմանը ռեֆրակտեր ախտանիշներով բնորոշ պացիենտների համար և այն պացիենտների համար, ովքեր ունեն սեպտալ ալկոհոլային արլացիայի կամ սեպտալ միոմէկտոմիայի հակացուցում կամ ունեն սեպտալ ալկոհոլային արլացիայի կամ սեպտալ միոմէկտոմիայի արդյունքում լայնակի պաշարման բարձր ռիսկ	IIb	C
Հանգիստ վիճակում կամ ծանրաբեռնվածության ժամանակ առաջացող ≥ 50 մմ ս.ս. գրադիենտով օբստրուկցիայով, սինուսային ռիթմով և դեղորայքային բուժմանը ռեֆրակտեր ախտանիշներով բնորոշ պացիենտներին և այն պացիենտներին, ովքեր ունեն ԻԿԴ իմպլանտացիայի ցուցում, ձախ փորոքի արտատար ուղու գրադիենտը նվազեցնելու և բետտա-պաշարիչներով և/կամ վերապամիլով բուժմանը նպաստելու համար կարող է դիտարկվել երկխոռոչային էլեկտրակարդիոլոգիանի իմպլանտացիան (միախոռոչային էլեկտրակարդիոլոգիանի փոխարեն):	IIb	C
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b – ապացուցողականության մակարդակ		

9.2. Ձախ փորոքի խոռոչի միջին մասի օբստրուկցիա և գազաթային անևրիզմաներ

Ձախ փորոքի միջին մասի օբստրուկցիան զարգանում է ՀԿՄՊ-ով պացիենտների մոտավորապես 10%-ի մոտ [328,329]: Ձախ փորոքի խոռոչի միջին մասի օբստրուկցիայով պացիենտները հաճախ ունեն բավականին ախտանշաններ և շատ հետազոտություններով ցույց է տրված հարաճող սրտային անբավարարության և հանկարծակի սրտային մահվան բարձր ռիսկը [328-330]: 25% պացիենտները նաև ունենում են գազաթային անևրիզմա, որը որոշ հետազոտություններով ասոցացվում է ավելի բարձր սիրտ-անոթային մահացության հետ [129,328,329,331]: Ձախ փորոքի խոռոչի միջին մասի օբստրուկցիայով պացիենտները ստանում են մեծ դեղաչափերով բետա-պաշարիչներ, վերապամիլ կամ դիլտիազեմ, սակայն բուժմանը տրվող պատասխանը հաճախ ոչ օպտիմալ է: Կա ոչ մեծ փորձ, սովորաբար եզակի կենտրոններից, որը ենթադրում է, որ ձախ փորոքի խոռոչի միջին մասի օբստրուկցիան կարելի է իջեցնել տրանսատրտալ միոմէկտոմիայի (տրանսսապիկալ մուտքով կամ համակցված տրանսատրտալ և տրանսսապիկալ կտրվածով) միջոցով՝ լավ կարճաժամկետ արդյունքով [332,333]: Ձախ փորոքի իզոլացված գազաթային անևրիզման հազվադեպ է բուժում պահանջում: Պացիենտների ոչ մեծ մասի մոտ կարող է զարգանալ մոնոմորֆ փորոքային տախիկարդիա՝ կապված գազաթային ֆիբրոզի հետ, որը կարող է ենթարկվել քարտեզավորման և արվացիայի [331,334]: Հազվադեպ անևրիզմայում հայտնաբերվում է թրոմբ, որը ենթակա է հակակոագուլյանտներով երկարատև բուժման [335,336]: Անևրիզմայի և հանկարծակի սրտային մահվան բարձր ռիսկի միջև կապի ապացույցները ձեռք են բերվել սահմանափակ թվով ոչ մեծ հետազոտություններից [129]: ԻԿԴ-ի կանարգելիչ իմպլանտացիան, հանկարծակի սրտային մահվան բարձր ռիսկի մասին վկայող այլ կլինիկական դրսևորումների բացակայության դեպքում, խորհուրդ չի տրվում:

9.3. Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի նշանների բացակայությամբ պացիենտների ախտանիշների բուժում

9.3.1 Սրտային անբավարարություն

9.3.1.1. Դեղորայքային բուժումը

Սրտային անբավարարության բուժման ընդհանուր մոտեցումը ցույց է տրված նկար 6-ում. Նորմալ արտամղման ֆրակցիայով և ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի նշանների բացակայությամբ պացիենտների մոտ հանգիստ վիճակում կամ ծանրաբեռնվածության ժամանակ հևոցի դեպքում, դեղորայքային բուժման նպատակը հանդիսանում է դիաստոլիկ ճնշման իջեցումը և ձախ փորոքի լեցման բարելավումը՝ սրտի

կծկումների հաճախության իջեցման ճանապարհով՝ բետոն-պաշարիչների, վերապամիլի կամ դիլտիազեմի նշանակման միջոցով (ԷՍԳ երկարատև մոնիտորինգը օպտիմալ է) և կանթային միզամուղների ճշգրիտ օգտագործման միջոցով: Սինուսային ռիթմի վերականգնումը և փորոքային ռիթմի հսկողությունն անհրաժեշտ է այն պացիենտների համար, որոնց մոտ հանդիպում է նախասրտերի ֆիբրիլացիայի հաճախակի պարոքսիզմալ կամ պերմանենտ ձևը, սակայն դիգոքսինը խորհուրդ չի տրվում պահպանված արտամղման ֆրակցիայով պացիենտներին, կապված դրական ինտորոպ ստիմուլյացիայի հետ:

Շատ քիչ հետազոտություններ կան, որոնք ուսումնասիրել են ռենին-անգիոտենզին-ալդոստերոնային համակարգի արգելակումը հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ: Ռենին-անգիոտենզին-ալդոստերոնային համակարգի ինհիբիտորների ազդեցությունը հոսպիտալացման հաճախականության, ախտանիշների և մահացության վրա ցույց տրվող ռանդոմիզացված հետազոտությունների բացակայության պայմաններում, նրանց ազդեցությունը ենթադրելի է և խորհուրդ է տրվում ցածր արտամղման ֆրակցիայով և սրտային անբավարարության նշաններով հիվանդներին բուժել միզամուղներով, բետոն-պաշարիչներով, ԱՓՖ ինհիբիտորներով, անգիոտենզին ընկալիչների պաշարիչներով և միներալոկորտիկոիդային ընկալիչների անտագոնիստներով՝ համաձայն քրոնիկական սրտային անբավարարության ուղեցույցների: Խորհուրդ է տրվում ՌԱԱՀ ինհիբիտորների համար որպես շեմ ընդունել <50% արտամղման ֆրակցիան հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ խոռոչի չափը պահպանելու և արտահայտված սրտային անբավարարության դեպքում [337]: Հարաբերական փոքր ծավալը նաև նշանակում է, որ պացիենտների համար կարող են տանելի չլինել մեծ դեղաչափերով վազոդիլատատորները և դիուրետիկերը: Ձախ փորոքի արտատար ուղու նշանակալի օբստրուկցիայի բացակայության դեպքում դիգոքսինը իզոլացված կամ բետոն-պաշարիչների հետ համակցված խորհուրդ է տրվում նախասրտերի ֆիբրիլացիայի և <50% արտամղման ֆրակցիայով պացիենտների ռիթմը վերահսկելու համար:

Պահպանված արտամղման ֆրակցիայով և սրտային անբավարարությամբ պացիենտների խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
II-IV ֆունկցիոնալ դասով (NYHA) և $\geq 50\%$ արտամղման ֆրակցիայով և ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի բացակայությամբ պացիենտներին սրտային անբավարարության ախտանշանները	IIa	C

նվազեցնելու համար պետք է դիտարկել բետոն-պաշարիչների, վերապամիլի կամ դիլտիազեմի նշանակումը		
II-IV ֆունկցիոնալ դասով (NYHA) և $\geq 50\%$ արտամղման ֆրակցիայով և ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի բացակայությամբ պացիենտներին սրտային անբավարարության ախտանշանները նվազեցնելու համար պետք է դիտարկել ցածր դեղաչափով կանթային և թիազիդային միզամուղների նշանակումը	IIa	C
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

Իջած արտամղման ֆրակցիայով և սրտային անբավարարությամբ պացիենտների խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
ԱՓՑ ինհիբիտորները կարող են դիտարկվել որպես հավելյալ թերապիա բետոն-պաշարիչներին առանց ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի և $< 50\%$ արտամղման ֆրակցիայով պացիենտներին՝ հանկարծակի սրտային մահվան և սրտային անբավարարության կապակցությամբ հոսպիտալացման ռիսկը նվազեցնելու համար	IIa	C
Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով և $< 50\%$ արտամղման ֆրակցիայով պացիենտներին հանկարծակի սրտային մահվան և սրտային անբավարարության կապակցությամբ հոսպիտալացման ռիսկը նվազեցնելու համար անհրաժեշտ է դիտարկել բետոն-պաշարիչների և ԱՓՑ ինհիբիտորների (կամ ԱԸՊ, եթե ԱՓՀ տանելի չէ) համակցման հնարավորությունը	IIa	C
Ցածր դեղաչափերով կանթային և թիազիդային միզամուղների կիրառումը պետք է դիտարկել II-IV ֆունկցիոնալ դաս (NYHA) ունեցող և $< 50\%$ արտամղման ֆրակցիայով պացիենտների շրջանում ախտանիշները և սրտային անբավարարության կապակցությամբ հոսպիտալացումը նվազեցնելու համար	II a	C

II- IV ֆունկցիոնալ դաս (NYHA), մշտական ախտանշաններ ունեցող և <50% արտամղման ֆրակցիայով բոլոր պացիենտներին, չնայած ԱՓՖ կամ ԱԸՀ և բետտա-պաշարիչներով բուժմանը, պետք է դիտարկել միներալոկորտիկոիդային ընկալիչների պաշարիչների նշանակումը՝ հոսպիտալացման և մահվան ռիսկը նվազեցնելու համար	II a	C
Դիգոքսինի ցածր դեղաչափերը կարող են դիտարկվել ձախ փորոքի արտամղման ուղու օբստրուկցիա չունեցող, II-IV ֆունկցիոնալ դասով (NYHA) և <50% արտամղման ֆրակցիա ունեցող պերմանենտ նախասրտերի ֆիբրիլյացիայով պացիենտների մոտ ՍԿՀ վերահսկելու համար	II a	C
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

9.3.1.2. Ռեսինխրոնիզացիոն թերապիա

Ձախ փորոքի կծկման և թուլացման ռեգիոնար հետերոգենությունը հաճախ է հանդիպում հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ և ձախ փորոքի դիսսինխրոնիան կարող է լինել վատ կանխատեսման մարկեր: Կլինիկական դեպքերը և միախումբ հետազոտությունները ցույց են տվել, որ ռեսինխրոնիզացիոն թերապիան կարող է բարելավել Հիսի խրճի ձախ ոտիկի պաշարմամբ (QRS > 120 մս) պացիենտների մոտ սրտային անբավարարության ախտանիշները և ասոցացվում է ցածր արտամղման ֆրակցիայով պացիենտների ձախ նախասրտի և ձախ փորոքի հետադարձ ռեմոդելավորման հետ [339]: Ռանդոմիզացված հետազոտությունների բացակայության պայմաններում CRT կարելի է դիտարկել ռեֆրակտեր ախտանիշներով եզակի պացիենտների մոտ, որոնց մոտ առկա է <50% ԱՖ, ՀԽՁՈ-ի պաշարում (QRS > 120 մվ):

Ռեսինխրոնիզացիոն թերապիայի խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով, ձախ փորոքի արտատար ուղու < 30 մմ.ս.ս մաքսիմալ գրադիենտով, բուժման հանդեպ ռեֆրակտեր նշաններով, II- IV ֆունկցիոնալ դասով (NYHA), < 50% արտամղման ֆրակցիայով Հիսի խրճի ձախ ոտիկի պաշարումով	IIb	C

>120 մվ QRS կոմպլեքսով պացիենտներին կարող է նշանակվել սրտային ռեսինխրոնիզացիոն թերապիա՝ ախտանիշները նվազեցնելու համար		
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

9.3.1.3 Սրտի փոխապատվաստում

Սրտի փոխապատվաստում խորհուրդ է տրվում նշանակել արտահայտված ախտանիշներով, դեղորայքային թերապիայի հանդեպ ռեֆրակտեր (III –IV դաս NYHA) և ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի բացակայությամբ պացիենտներին, ովքեր համապատասխանում են ստանդարտ չափանիշներին [337]: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիաներին բաժին է ընկնում ԱՄՆ-ում իրականացվող սրտի բոլոր փոխապատվաստումների 1-5%-ը և եվրոպական կենտրոններում սպասման ցուցակում գտնվողների մինչև 7%-ը [340]: Դեռահասների և մեծահասակների մոտ ձախ փորոքի դիլատացիայով և սիստոլիկ դիսֆունկցիայով ուղեկցվող հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի տերմինալ փուլն առավել հաճախ հանդիպող կլինիկական տարբերակն է, որը հարաճում է մինչև չկարգավորվող սրտային անբավարարության, այն առավել արագ զարգանում է երիտասարդ պացիենտների մոտ: Երեխաներին ավելի բնորոշ է սրտամկանի զանգվածային հիպերտրոֆիան՝ փորոքների փոքր խոռոչներով և ռեֆրակտեր դիաստոլիկ դիսֆունկցիայով [342]: Սրտի փոխապատվաստման համար դիմող պացիենտների մոտ 5%-ն ունեն դեղորայքային թերապիայի հանդեպ ռեֆրակտեր փորոքային ռիթմի խանգարումներ՝ սրտային անբավարարության ախտանիշների հետ համակցված կամ առանց դրանց [340]: Հետփոխապատվաստումային ապրելիությունը նման է այլ ցուցումների դեպքում հետտրանսպլանտացիոն ապրելիությանը: Այն ավելի բարձր է, քան հետտրանսպլանտացիոն ապրելիությունը սրտի իշեմիկ հիվանդությամբ պացիենտների մոտ, ավելի ցածր՝ սուր մերժման հաճախականությամբ [340,341,343,344]:

9.3.1.4 Ձախ-փորոքային օգնող սարքեր

Հաշվի առնելով, որ տերմինալ փուլի սրտային անբավարարությունով պացիենտների թվի աճին զուգընթաց, դոնորական օրգանների քանակը մնում է սահմանափակ, ձախ -փորոքային օգնող սարքերի կամ բիվենտրիկուլյար օգնող սարքերի միջոցով աջակցությունն արյան շրջանառությանը շատ ավելի շատ է գործածվում որպես փոխապատվաստումային անցումային փուլ կամ որպես թերապիա այն պացիենտների մոտ, ովքեր ենթակա չեն

փոխպատվաստմանը: Ձախ-փորոքային օգնող սարքերը հազվադեպ են օգտագործվում հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ՝ որպես անցումային փուլ, քանի որ ձախ փորոքի փոքր խոռոչը և ռեստրիկտիվ ֆիզիոլոգիան խոչնդոտում են սարքի իմպլանտացիան [345]: Նախնական տվյալները, սակայն վկայում են, որ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով և տերմինալ փուլի սրտային անբավարարությամբ պացիենտները կարող են օգուտ ստանալ ձախ-փորոքային օգնող սարքերով բուժումից և դրանց միջամտական մահացությունը համեմատելի է դիլատացիոն կարդիոմիոպաթիայով և իշեմիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների միջամտական մահացության հետ [346]: Անհրաժեշտ են հետագա ուսումնասիրություններ այս բնագավառում, սակայն մշտական աքսիալ արյան հոսքը կարող է լինել ընտրության թերապիա այն պացիենտների մոտ, ովքեր չեն հանդիսանում սրտի փոխպատվաստման թեկնածուներ: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների վերականգնողական կամ նպատակային թերապիայի մասին տվյալներ չկան:

Սրտի փոխպատվաստման խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
Սրտի փոխպատվաստումը պետք է դիտարկել փոխպատվաստմանը համապատասխանող պացիենտների համար, ովքեր ունեն <50% արտամղման ֆրակցիա, III-IV դաս ֆունկցիոնալ դաս (NYHA) կամ կայուն փորոքային առիթմիաներ՝ չնայած օպտիմալ դեղորայքային թերապիային	IIa	B
Սրտի փոխպատվաստումը կարող է դիտարկվել փոխպատվաստմանը համապատասխանող պացիենտների համար, ովքեր ունեն $\geq 50\%$ արտամղման ֆրակցիա, դիաստոլիկ դիսֆունկցիայի հետևանքով առաջացած, դեղորայքային բուժմանը ռեզիստենտ ծանր ախտանիշներ (III-IV ֆունկցիոնալ դաս NYHA)	IIb	B
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

Ձախ փորոքային օգնող սարքերի փոխպատվաստման խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
Ակսիալ պոմպային ձախ փորոքային օգնող սարքերի փոխպատվաստումը կարող է դիտարկվել որոշ սրտային	IIb	C

անբավարարության տերմինալ փուլով (չնայած դեղորայքային թերապիային և փոխպատվաստման սարքերին) պացիենտների համար, որոնց հնարավոր է կատարվի սրտի փոխպատվաստում՝ ախտանշանների բարելավման և փոխպատվաստմանը սպասելու ժամանակահատվածում սրտային անբավարարության հարաճման կապակցությամբ հոսպիտալացման ռիսկը նվազեցնելու համար		
Նշումներ. ^a - Խորհուրդի դաս, ^b – ապացուցողականության մակարդակ		

9.3.2. Կրծքահեղձուկ (ստենոկարդիա)

Ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ ինդուցվող կամ կրծքահեղձուկի ցավերի երկարատև դեպքերով պացիենտներին, ձախ փորոքի արտատար ուղու հանգստի կամ ծանրաբեռնվածության օբստրուկցիայի բացակայության, կամ սրտի օբստրուկտիվ կորոնար հիվանդության դեպքում պետք է կիրառվեն բետա-պաշարիչներ կամ կալցիումական անցուղիների պաշարիչներ: Դեղորայքային երկու խմբերը բարելավում են դիաստոլիկ ֆունկցիան և իջեցնում են սրտամկանի պահանջը թթվածնի նկատմամբ: Վերապամիլի դեպքում կարող են բարելավել սթրես-ինդուցված սուբենդոկարդիալ պերֆուզիայի խանգարումները [347-351]: Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի բացակայության դեպքում զգուշորեն կարելի է դիտարկել օրալ նիտրատների կիրառումը:

Խորհուրդներ առանց ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի պացիենտների ֆիզիկական ծանրաբեռնվածության պատկերին առաջացող կրծքավանդակի ցավերի համար		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
Բետա-պաշարիչների և կալցիումական անցուղիների պաշարիչների նշանակումը կարող է դիտարկվել ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի բացակայությամբ ստենոկարդիկ բնույթի կրծքավանդակի ցավերով կամ կորոնար անոթների օբստրուկտիվ հիվանդությամբ պացիենտների համար	IIa	C
Պերօրալ նիտրատների նշանակումը կարող է դիտարկվել ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի բացակայությամբ ստենոկարդիկ բնույթի կրծքավանդակի ցավերով կամ կորոնար	IIb	C

անոթների օբստրուկտիվ հիվանդությամբ պացիենտների համար՝ ախտանիշները նվազեցնելու նպատակով		
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

9.4. Նախասրտային տախիկարդիաներ

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ ամենահաճախ հանդիպող ռիթմի խանգարումը նախասրտերի ֆիբրիլյացիան է: Նախատրամադրող գործոններն են ծախս նախասրտում բարձր ճնշումը և ծախս նախասրտի մեծ չափը, որոնք հանդիսանում են դիաստոլիկ դիսֆունկցիայի, ծախս փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի և միտրալ հետհոսքի հետևանք: Նախասրտերի ֆիբրիլյացիայի հաճախականությունը և տարեկան հիվանդացությունը կազմել է համապատասխանաբար 22,5% և 3.1%, նախասրտերի ֆիբրիլյացիայով պացիենտների մոտ թրոմբոէմբոլիայի (ինսուլտ և պերիֆերիկ էմբոլիաներ) հաճախականությունը և տարեկան հիվանդացությունը կազմում է համապատասխանաբար՝ 27.1% և 3.8% [72]: Նախասրտերի ֆիբրիլյացիայի պարոքսիզմալ կամ պերմանենտ ձևերի դեպքում, կլինիկական դրսևորումներն առավել սերտորեն կապված են այնպիսի առանձնահատկությունների հետ, որոնք ներառում են տարիքը, ծախս նախասրտի չափերի մեծացումը [72]: Այլ հնարավոր պրեդիկտորների մեջ ներառվում են ծախս փորոքի արտատար ուղու օբստրուկցիան, P-ալիքի տևողությունը >140 մվ, պարոքսիզմալ վերփորոքային տախիկարդիան, հանգստի էՍԳ-ի վրա ST-T սեգմենտի փոփոխությունները, փորոքային էքստրասիստոլան, ՄՌՏ հետազոտությամբ գադոլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումը և կորոնար արյունահոսքի անոմալ ռեզերվը [72]: Թրոմբոէմբոլիայի բացահայտված պրեդիկտորները ներառում են պարոքսիզմալ կամ պերմանենտ նախասրտերի ֆիբրիլյացիան, ծանր ախտանիշները (III – IV դաս NYHA), տարեց հասակը, ծախս նախասրտի ծավալի ցուցիչի մեծացումը, արական սեռը և անամնեզում սրտային անբավարարության կապակցությամբ հոսպիտալացումը [72]:

Հաշվի առնելով, որ ծախս նախասրտի չափը հանդիսանում է հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ նախասրտերի ֆիբրիլյացիայի և ինսուլտի կայուն պրեդիկտոր, սինուսային ռիթմով և ծախս նախասրտի ≥ 45 մմ տրամագիծ ունեցող պացիենտներին պետք է կատարել 48-ժամյա հոլտեր մոնիտորինգ ամեն 6-12 ամիսը մեկ՝ նախասրտերի ֆիբրիլյացիան բացահայտելու համար: Նախասրտերի թրթռման և այլ նախասրտային առիթմիաների մասին կան ավելի քիչ տվյալներ, բայց, ընդհանուր առմամբ,

նախասրտերի թրթռումը պետք է ճիշտ վերահսկվի, իսկ թրոմբոէմբոլիայի ռիսկը համարվում է նույնը, ինչ նախասրտերի ֆիբրիլացիայի դեպքում:

9.4.1. Անհետաձգելի թերապիա

Առաջին անգամ առաջացած նախասրտերի ֆիբրիլացիան հաճախ ուղեկցվում է սրտային անբավարարության ախտանիշներով և պետք է արագ կարգավորել՝ համապատասխան նախասրտերի ֆիբրիլացիայի ուղեցույցների [261,262]: Հեմոդինամիկ անկայուն պացիենտներին պետք է կատարել անհապաղ էլեկտրական կարդիովերսիա: Եթե պացիենտների մոտ նկատվում են կրծքահեղձուկի կամ սրտային անբավարարության ծանր ախտանշաններ խորհուրդ է տրվում բետտա-պաշարիչների կամ ամիոդարոնի ներերակային ներարկում:

Հեմոդինամիկ կայուն պացիենտներին խորհուրդ է տրվում բետա-բլոկատորների կամ ոչ դիհիդրոպիրիդինային Ca-անտագոնիստների օրալ ընդունումը նախասրտերի ֆիբրիլացիայի ժամանակ փորոքային պատասխանը դանդաղեցնելու համար [261,262]: Եթե առկա է նախագրգռում, ոչ դիհիդրոպիրիդինային Ca-անտագոնիստները և ադենոզինը հակացուցված են [261,262]: Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով և նախասրտերի ֆիբրիլացիայով պացիենտների մոտ պետք է խուսափել դիգոքսինի կիրառումից, ինչպես նաև IC դասի հակաանոթամիկ պատրաստուկների կիրառումից, ինչպիսիք են ֆլեկաինիդը և պրոպաֆենոնը, քանի որ դրանք կարող են երկարացնել QRS և QT ինտերվալը և արագացնեն փորոքային ռիթմը՝ նախասրտերի թրթռման և փորոքային հաղորդականության 1:1 կոնվերսիայի արդյունքում [261,262]: Ռիթմի վերահսկմանը հասնելու դեպքում, ընտրողական պլանավորված էլեկտրական կարդիովերսիան պետք է նկատի ունենալ ոչ շուտ, քան 3 շաբաթ վիտամին K անտագոնիստներով արդյունավետ հակակոագուլյացիայից հետո (INR 2-3): Եթե պլանային էլեկտրական կարդիովերսիան պլանավորվում է ավելի վաղ, ապա այն անհրաժեշտ է իրականացնել հիմնվելով տրանսէզոֆագեալ էխոսրտագրության արդյունքների վրա՝ ըստ համապատասխան ուղեցույցների [261,262]:

9.4.2. Թրոմբոէմբոլիայի կանխարգելում

Հաշվի առնելով, որ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտներն, ընդհանուր առմամբ, ավելի երիտասարդ են, քան ռիսկի այլ խմբերի պացիենտները, և նրանք չեն ներառվել թրոմբոզների կանխարգելմանը վերաբերվող կլինիկական ուսումնասիրությունների մեջ, CHA₂DS₂-VASc սանդղակի օգտագործումն ինսուլտի ռիսկի գնահատման համար

խորհուրդ չի տրվում [261,262]: Հաշվի առնելով հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով և պարոքսիզմալ պերսիստենտ կամ պերմանենտ նախասրտերի ֆիբրիլացիայով պացիենտների մոտ ինսուլտի բարձր հաճախականությունը, նախասրտերի ֆիբրիլացիայով բոլոր պացիենտներին խորհուրդ է տրվում վիտամին K անտագոնիստներով բուժում: Երկու հետազոտություններ բացահայտել են վարժարին ստացող պացիենտների մոտ ինսուլտի ռիսկի իջեցումը՝ համեմատած այն պացիենտների հետ, ովքեր ստացել են հակաագրեգանտներ կամ բուժում չեն ստացել [223,352]: Այսպիսով, ասպիրինի 75-100 մգ և կլոպիդոգրելի 75մգ ամենօրյա համակցումը պետք է նշանակվի միայն այն պացիենտներին, ովքեր չեն կարող ստանալ կամ հրաժարվում են օրալ հակակոագուլյանտների ընդունումից: Հակաթրոմբոտիկ թերապիայի նշանակման ժամանակ խորհուրդ է տրվում արյունահոսության ռիսկի գնահատում: HAS-BLED սանդղակը հանդիսանում է խելամիտ միջոց՝ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ արյունահոսության ռիսկի գնահատման համար [353]: HAS-BLED սանդղակով ≥ 3 բալլը վկայում է արյունահոսության բարձր ռիսկի մասին և պետք է կիրառվեն նախազգուշական միջոցառումներ, պարբերական կլինիկական հսկողությամբ [261,262]: Չկան տվյալներ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ նոր սերնդի օրալ հակակոագուլյանտների կիռաման վերաբերյալ, բայց դրանք խորհուրդ են տրվում այն դեպքերում, երբ ընտրված վիտամին K անտագոնիստի դեղաչափը չի կարող օգտագործվել թերապևտիկ մակարդակը պահելու համար (INR 2.0-3.0), կամ երբ վիտամին K անտագոնիստների ընդունումից հետո առաջացել են կողմնակի արդյունքներ, կամ երբ հնարավոր չէ INR պարբերաբական հսկողությունը: Այս դեպքերում խորհուրդ է տրվում թրոմբինի ուղղակի ինհիբիտորներ (դաբիգատրան) կամ X_a գործոնի օրալ ինհիբիտոր (ռիվարոքսաբան, ապիքսաբան) [261,262]:

9.4.3. Փորոքների կծկման հաճախականության հսկողություն

Պարոքսիզմալ պերսիստենտ կամ պերմանենտ ձևերով նախասրտերի ֆիբրիլացիայով պացիենտների մոտ փորոքների կծկման հաճախականության հսկողության համար խորհուրդ է տրվում բետա-պաշարիչների և ոչ դիհիդրոպիրիդինային Ca-անտագոնիստների օգտագործումը ինչպես մոնոթերապիայի, այնպես էլ համակցված թերապիայի տեսքով [261,262]: Թերապիայի ընտրությունը պետք է լինի անհատական, հաշվի առնելով տարիքը, կենսակերպը և սրտային անբավարարության ախտանիշները, դեղաչափերն ընտրվում են այնպես, որպեսզի հնարավոր լինի խուսափել ախտանշանային բրադիկարդիայից և հնարավոր լինի հասնել հանգիստ վիճակում $U\check{Y} < 100$ գ/ր: Ռիթմի վերահսկման համապատասխանությունը պետք է գնահատել ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ: Եթե դեղորայքային թերապիայի

արդյունքում չի հաջողվում հասնել ռիթմի համապատասխան վերահսկման, պետք է դիտարկել AV-հանգույցի արևացիան և մշտական կարդիոխթանումը: Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի բացակայության դեպքում, դիգոքսինը (0.125- 0.5 մգ /օր) ինչպես մոնոթերապիայի, այնպես էլ բետա-պաշարիչների հետ համակցված թերապիայի տեսքով կարող է օգտագործվել նախասրտերի ֆիբրիլյացիայով և ԱՖ<50% պացիենտների մոտ ռիթմի վերահսկման համար, սակայն այս կոնտեքստում արդյունավետության մասին տվյալներն անբավարար են:

9.4.4 Ռիթմի վերահսկում

Չկան ռանդոմիզացված հսկողական հետազոտություններ, որոնք նվիրված են հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ նախասրտերի ֆիբրիլյացիայի երկարատև կանխման համար հակառիթմիկ պատրաստուկների և ռադիոհաճախային արևացիայի արդյունավետությանը: Մեկ հետազոտությամբ ցույց է տրվել, որ ամիոդարոնով թերապիան նույնականացվել է սինուսային ռիթմի պահման, դեղորայքային թերապիայի մեջ փոփոխությունների նվազեցման, էմբոլիկ դեպքերի նվազեցման և ոչ արդյունավետ պլանային էլեկտրական կարդիովերսիայի նվազեցման հետ [354]: Այլ աշխատանքներ ցույց են տվել, որ ամիոդարոնի, բետա-պաշարիչների և վերապամիլի տարբեր համակցումներ՝ ստացած պացիենտների մոտ սինուսային ռիթմի տևողության և նախասրտերի ֆիբրիլյացիայի առաջին դեպքից հետո մահացության ցուցանիշներում չեն եղել տարբերություններ [223,355], սակայն կարճատև կրկնակի կույր մեծածավալ հետազոտությունը (n=30) ցույց է տվել նախասրտային առիթմիայի ճնշումը սոտալոլի միջոցով [266]: Դիգոպիրամիդին օգտագործվել է ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի բուժման համար, սակայն հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ նախասրտերի ֆիբրիլյացիայի վրա ճնշման արդյունքն անհայտ է [267]: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ նաև բացակայում են դրոնեդարոնի օգտագործման հետ կապված համակարգային տվյալները, բայց հաշվի առնելով ոչ վաղ անցյալում սիրտ-անոթային պատահարների ավելացումը, ներառյալ սիրտ-անոթային պատճառներից մահացությունը ցույց տրվող հետազոտությունները, դրոնեդարոնը հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտներին խորհուրդ չի տրվում [261,365]: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ նախասրտերի ֆիբրիլյացիայի ժամանակ կաթետերային արևացիայի արդյունավետության մասին տվյալները շատ չեն [357-361], սակայն այս միջամտությունը կարելի է դիտարկել ձախ նախասրտի ոչ արտահայտված մեծացման, դեղորայքային թերապիայի հանդեպ ռեսպիտենտ ախտանիշների կամ այն պացիենտների մոտ, ովքեր չեն կարող ընդունել հակառիթմիկ

պատրաստուկներ [357]: Սինուսային ռիթմի պահմանը հասնում են 67%-ից ոչ պակաս պացիենտների մոտ, նախասրտերի ֆիբրիլացիայի ճնշման անհնարինությունը նույնականացվում է ձախ նախասրտի չափի և տարեց հասակի հետ [357, 358]:

Նախասրտերի ֆիբրիլացիայի/թրթռման մասին խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս	Մակարդակ
Հակացուցումների բացակայության դեպքում, պերմանենտ, պերսիստենտ կամ պարոքսիզմալ նախասրտերի ֆիբրիլացիայով պացիենտներին խորհուրդ է տրվում թրոմբոէմբոլիայի կանխարգելում՝ վիտամին K անտագոնիստների միջոցով (INR 2.0-3.0)	I	B
Ինչպես նախասրտերի ֆիբրիլացիայով, այնպես էլ նախասրտերի թրթռումով պացիենտներին խորհուրդ է տրվում հակաթրոմբոտիկ թերապիա	I	C
HAS-BLED սանդղակով արյունահոսության ռիսկի գնահատումը խորհուրդ է տրվում հակաթրոմբոտիկ թերապիա նշանակելիս	IIa	B
Սինուսային ռիթմի վերականգնումն ամիոդարոնի ներերակային ներարկմամբ դեղորայքային կարդիովերսիայի միջոցով խորհուրդ է տրվում դիտարկել ոչ վաղ անցյալում սկսված նախասրտերի ֆիբրիլացիայի դեպքում	IIa	C
Դեղորայքային կարդիովերսիայից հետո ամիոդարոնի նշանակումը պետք է դիտարկել ռիթմի վերահսկման կամ սինուսային ռիթմը պահելու նպատակով	IIa	B
Բետտա-պաշարիչներ, վերապամիլ կամ դիլտիազեմ խորհուրդ է տրվում նախասրտերի ֆիբրիլացիայի պերսիստենտ կամ պերմանենտ ձևով պացիենտների ՍԿՀ վերահսկելու համար	I	C
Նախասրտերի ֆիբրիլացիայի կաթետերային արլացիան պետք է դիտարկել ձախ նախասրտի առանց նշանակալի լայնացման, դեղորայքային բուժման հանդեպ ռեֆրակտեր ախտանիշներով պացիենտների կամ հակաառիթմիկ պատրաստուկների ընդունման անհնարինության դեպքում	IIa	B
ՍԿՀ վերահսկման համար AV-հանգույցի արլացիան կարող է	IIb	C

<p>դիտարկվել այն դեպքերում, երբ փորոքների կծկման հաճախականությունը դեղորայքի միջոցով վերահսկման չի ենթարկվում և, երբ նախասրտերի ֆիբրիլյացիայի պարոքսիզմը չի կարող ընդհատվել հակաառիթմիկ դեղորայքով կամ նույնականացվում է անտանելիության կամ կողմնակի արդյունքների հետ</p>		
<p>>50% ձախ փորոքի արտանդման ֆրակցիա ունեցող պացիենտներին AV-հանգույցի աբլացիայից հետո, պարոքսիզմալ նախասրտերի ֆիբրիլյացիայի առկայության դեպքում, խորհուրդ է տրվում անջատիչ ռեժիմով երկխոռոչանի խթանիչի տեղադրում (DDD), իսկ պերսիստենտ կամ պերմանենտ ձևերի դեպքում՝ միախոռոչանի խթանիչի տեղադրում (VVIR)</p>	I	C
<p>Անհրաժեշտ է դիտարկել CRT (ռիթմավար) փոխպատվաստման հարցը ցանկացած ձևի նախասրտերի ֆիբրիլյացիայի և <50% արտանդման ֆրակցիայով պացիենտների մոտ AV-հանգույցի աբլացիայից հետո</p>	IIb	C
<p>48-ժամյա ամբուլատոր հոլտեր-մոնիթորինգի անհրաժեշտությունը պետք է դիտարկել ամեն 6-12 ամիսը մեկ սինուսային ռիթմով և ձախ նախասրտի ≥ 45 մմ տրամագծով պացիենտների շրջանում նախասրտերի ֆիբրիլյացիան հայտնաբերելու համար</p>	IIa	C
<p>Աբլացիայի միջամտությունը կարող է դիտարկվել հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով և ախտանշանային նախասրտերի ֆիբրիլյացիայով պացիենտների սեպտալ միոմէկտոմիայի ժամանակ</p>	IIb	C
<p>Հակաթրոմբոտիկ թերապիան ասպիրինով (75-100 մգ) գումարած կլոպիդոգրել 75 մգ օրեկան (արյունահոսության ցածր ռիսկի դեպքում) պետք է դիտարկել այն դեպքում, երբ պացիենտը հրաժարվում է ընդունել ցանկացած խմբի օրալ հակակոագուլյանտ</p>	IIa	B
<p>Եթե նախասրտերի ֆիբրիլյացիայով պացիենտը չի կարող ընդունել վիտամին K անտագոնիստի ընտրված դեղաչափը (INR</p>	I	B

2-3) կապված հակակոագուլյացիայի անհրաժեշտ մակարդակի պահման հնարավորության բացակայության, վիտամին K անտագոնիստների կողմնակի արդյունքների կամ INR մոնիտորինգի հնարավորություն չունենալու հետ, խորհուրդ է տրվում նշանակել թրոմբինի ուղղակի ինհիբիտոր (դաբիգատրան) կամ Xa գործոնի օրալ ինհիբիտոր (օրինակ, ռիվարոքսաբան, ապիքսաբան)		
Բացի կարգավորվող պատճառներից, մնացած բոլոր պատճառներից առաջացած նախասրտերի ֆիբրիլյացիայի դեպքում, նույնիսկ, եթե վերականգնվել է սինուսային ռիթմը, խորհուրդ է տրվում ցմահ հակակոագուլյացիա՝ վիտամին K անտագոնիստների միջոցով (INR 2.0 – 3.0)	I	C
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

9.5. Հանկարծակի սրտային մահ

Մեծահասակ պացիենտների վրա կատարված հետազոտությունների մեծամասնությունը վկայում է սիրտ-անոթային պատճառներից տարեկան մահացության 1-2%-ի մասին, որոնց մեջ հիմնական պատճառ են հանդիսանում հանկարծակի սրտային մահը, սրտային անբավարարությունը և թրոմբոէմբոլիան: Առավել հաճախ գրանցվող մահացու առիթմիկ պատահարներն են փորոքների ինքնակա ֆիբրիլացիան, սակայն նկարագրված են նաև ասիստոլիա, AV-պաշարում, առանց պուլսի էլեկտրական ակտիվություն [239,367-371]: 9.5.1.

Ռիսկի կլինիկական գնահատում

Հանկարծակի սրտային մահվան ռիսկի գնահատումը հանդիսանում է պացիենտի կլինիկական վարման հիմնական մաս: Մեծ քանակի վկայություններ վկայում են այն մասին, որ դեռահասների և մեծահասակների մոտ ռիսկի գնահատումը պետք է ներառի իր մեջ անհատական և ընտանեկան անամնեզ, 48-ժամյա ECG հոլտեր մոնիտորինգ, տրանսթորակալ էխոսրտագրություն (կամ սրտի ՄՌՏ ` ոչ բավարար էխոսրտագրային պատկերի դեպքում) և ախտանիշով սահմանափակված ծանրաբեռնվածության թեստը: Հանկարծակի սրտային մահվան հետ նույնականացվող և նախորդ բաժիններում օգտագործվող կլինիկական նշանները պատկերված են աղյուսակում:

9.5.2 Հանկարծակի սրտային մահվան ռիսկի գնահատման մոդելներ

Սիրտ-անոթային այլ հիվանդությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առաջնային և երկրորդային կանխարգելման համար ԻԿԴ փոխպատվաստումը կարող է նվազեցնել մահացությունը [382,383], սակայն սարքի փոխպատվաստումը հիմնավորող ռիսկի շեմային արժեքը սովորաբար ավելի շատ որոշվում է ուսումնասիրության համար հավաքած խմբի կլինիկական բնութագրերով, քան ընդունելի ռիսկի ապրիորային գնահատմամբ: Դա բերում է մեծ քանակությամբ հակասությունների, քանի որ հետազոտվող խմբերը նշանակալիորեն տարբերվում են: Նաև հնարավոր է, որ սոցիալ-տնտեսական և մշակութային գործոններն ազդում են աշխատանքային խմբերի կողմից ստեղծված հանձնարարականների վրա:

Բացակայում են ռանդոմիզացված հետազոտությունները կամ կանխատեսման վիճակագրական վալիդացված պրոսպեկտիվ մոդելները, որոնք կարող էին օգտագործվել հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ՝ ԻԿԴ իմպլանտացիայի հարցի լուծման համար: ESC և AHA ուղեցույցների հանձնարարականների մեջ, կլինիկական նշանների ոչ մեծ խումբ (ոչ կայուն փորոքային տախիկարդիաներ, ձախ փորոքի պատի առավելագույն հաստություն ≥ 30 մմ, հանկարծակի սրտային մահվան ընտանեկան անամնեզ, չբացատրվող ուշագնացություններ և ծանրաբեռնվածության հանդեպ արյան ճնշման անկանոն պատասխան) օգտագործվել է ռիսկի գնահատման և ԻԿԴ թերապիայի ցուցումները որոշելու համար [384,385]: Այս մոտեցումն ունի շատ սահմանափակումներ, հատկապես, որ այն գնահատում է ոչ թե բացարձակ այլ հարաբերական ռիսկը, հաշվի չի առնում տարբեր անհատական ռիսկի գործոնների ներդրումը [386]: Այնպիսի կլինիկական պարամետրերը, ինչպիսիք են սրտամկանի ֆիբրոզը (որոշված սրտի ՄԴՏ կոնտրաստավորման միջոցով), ձախ փորոքի գազաթային անևրիզման և սարկոմերային սպիտակուցների գեների մի քանի մուտացիաների ժառանգումը, հավանաբար, հանդիսանում են վճռական և կարող են օգտագործվել այն հիվանդների ԻԿԴ իմպլանտացիայի հարցը լուծելու համար, որոնց ռիսկը գնահատվում է միջին, սակայն այս մոտեցմանն աջակցող տվյալները նույնպես քիչ են: Վերջերս բազմակենտրոն ռետրոսպեկտիվ երկարատև խմբային հետազոտության մեջ, որում ընդգրկվել է 3675 պացիենտ, հայտնի որպես "HCM Risk – SCD", օգտագործվում է բարձրացած հանկարծակի մահվան ռիսկի գործոնների հետ կապված փոփոխվող պրեդիկտորը՝ հրատարակված նվազագույնը մեկ բազմատարբերակային վերլուծության մեջ: Սա ռիսկի մարկերներից բացառում է ֆիզիկական ծանրաբեռնվածությանն արյան ճնշման անկանոն պատասխանը: Այսպիսի մոդելը թույլ է տալիս գնահատել անհատականացված հինգամյա ռիսկը և համաձայնեցվում է 4 հիմնական ռիսկի գործոն օգտագործող մոդելի հետ:

Այս մոդելի արդյունավետությունը մշտապես կատարելագործվում է (C-ինդեքս 0.54-ից մինչև 0.7) և հաջողությամբ դիմանում է այնպիսի նման, կանխատեսիչ ալգորիթմների հետ համեմատության, ինչպիսին է CHA₂DS₂ – VASc-ը [73]:

"HCM Risk-SCD" ռիսկի գնահատման բանաձևն այսպիսին է. **Հավանականություն** հանկարծակի սրտային մահ 5 տարվա ընթացքում $= 1 - 0.998^{\exp(\text{կանխատեսող դասիչ})}$, որտեղ **կանխատեսող դասիչը** = $\{0,15939858 * \text{պատի առավելագույն հաստություն (մմ)} - \{0.00294271 * \text{պատի առավելագույն հաստություն}^2 (\text{մմ}^2)\} + \{0.0259082 * \text{ծախ նախասրտի տրամագիծ (մմ)} + \{0,00446131 * \text{ծախ փորոքի արտատար ուղիում առավելագույն (հանգիստ/Վալսալվայի փորձ) գրադիենտ (մմ ս.ս.)}\} + \{0.4583082 * \text{հանկարծակի սրտային մահվան ընտանեկան անամնեզ}\} + \{0.82639195 * \text{ոչ կայուն փորոքային տախիկարդիա}\} + \{0,71650361 * \text{անբացատրելի ուշագնացություններ}\} - \{0.01799934 * \text{տարիք՝ կլինիկական հետազոտության ժամանակ (տարիներ)}\}$:

"HCM Risk-SCD" -ում հանկարծակի սրտային մահվան ռիսկի և ծախ փորոքի առավելագույն հաստության միջև հաստատված է ոչ գծային կապ[73]: Այս պարամետրը հաշվի է առնվում որպես կվադրատիկ ժամկետ:

9.5.3. Հանկարծակի սրտային մահվան կանխարգելում

9.5.3.1. Ֆիզիկական ծանրաբեռնվածության սահմանափակում

Չնայած վավերացված, ծանրաբեռնվածությամբ ինդուցված կայուն փորոքային տախիկարդիաները հազվադեպ են [246] և մեծամասամբ ԻԿԴ-ի աշխատելն ընդդեմ փորոքային առիթմիաների տեղի է ունենում տախիկարդիայի կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության բացակայության պայմաններում [387,388], հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտներին խորհուրդ է տրվում խուսափել սպորտային մրցումներին մասնակցությունից և ինտենսիվ ֆիզիկական ծանրաբեռնվածությունից, հատկապես, եթե նրանց մոտ առկա են հակարծակի սրտային մահվան ռիսկի գործոններ և/ կամ ծախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիա:

9.5.3.2 Հակաառիթմիկ պատրաստուկներ

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ժամանակ հանկարծակի սրտային մահվան կանխարգելման համար հակաառիթմիկ պատրաստուկների օգտագործմանն աջակցող ռանդոմիզացված հսկվող տվյալները բացակայում են: Հոլտեր մոնիտորինգով ոչ կայուն փորոքային տախիկարդիաների և փորոքների ֆիբրիլյացիայի բարձրացած շեմով

պացիենտների մեկ ոչ մեծ օբսերվացիոն հետազոտության մեջամիոդարոնը նույնականացվել է հանկարծակի սրտային մահվան քիչ հաճախականության հետ, սակայն հետազոտության տվյալները վկայում են, որ ամիոդարոնը հաճախ ի վիճակի չէ կանխել հանկարծակի սրտային մահը [389,390]: Դիզոպիրամիդը հանկարծակի սրտային մահվան ռիսկի վրա նշանակալի ազդեցություն ցույց չի տվել [267]:

9.5.3.3 Կարդիոլերտեր-դեֆիբրիլյատորի փոխապատվաստում

9.5.3.3.1. Երկրորդային կանխարգելում

Փորոքների ֆիբրիլյացիայի կամ կայուն փորոքային տախիկարդիայի դեպք վերապրած հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտներն ունեն հետագա մահաբեր սրտային առիթմիաների բարձր ռիսկ և պետք է բուժվեն ԻԿԴ-ով [327,367,391-393]: Կլինիկական պրակտիկայում պացիենտների այդ խումբը շատ քիչ է և նրանց մոտ ԻԿԴ-ի փոխապատվաստումը հազվադեպ է հանդիսանում քննարկման առարկա [327] Սթրես-ինդուկցված փորոքային առիթմիաների մասին տվյալները բավականին քիչ են, սակայն մի հետազոտության տվյալները թույլ են տալիս ենթադրել, որ դրանք նույնականացվում են հանկարծակի սրտային մահվան բարձր ռիսկի հետ [246]:

9.5.3.3.2. Առաջնային կանխարգելում՝ առանց փորոքների ֆիբրիլյացիայի պատմության

Հանկարծակի սրտային մահվան ռիսկ ունեցող անհատների հայտնաբերումը շարունակում է մնալ դժվար խնդիր և միայն վերջերս ԻԿԴ բուժում ստացած հիվանդների ոչ մեծ ենթախումբն է վերապրել պոտենցիալ կյանքին վտանգ սպառնացող փորոքային առիթմիաները՝ շնորհիվ ԻԿԴ-ի աշխատանքի: Միևնույն ժամանակ, մեծ քանակությամբ ԻԿԴ կրող պացիենտներ ունենում են առանց պատճառի էլեկտրական հարվածներ և փոխապատվաստման բարդություններ [327]: Այս ուղեցույցներով առաջարկվում է բոլոր պացիենտներին անցկացնել ստանդարտիզացված կլինիկական հետազոտություն, տարբեր կանխատեսիչ արժեք ունեցող և հետագայում հանկարծակի սրտային մահվան հնգամյա ռիսկի գնահատման համար օգտագործվող արդյունքների ֆիքսմամբ (օգտագործելով "HCM Risk – SCD" մոդելը): "HCM Risk-SCD" հրատարակված տվյալների հավաքածուն՝ ըստ համաձայնության, օգտագործվել է ռիսկի երեք տեսակների որոշման համար (բարձր, միջանկյալ և ցածր): ԻԿԴ-ով բուժման հանձնարարականները յուրաքանչյուր ռիսկի տեսակի համար հաշվի են առնում ոչ միայն բացարձակ վիճակագրական ռիսկը, այլ նաև տարիքը և պացիենտի ընդհանուր առողջական վիճակը: Հանձնարարականները պետք է լինեն բավականին ճկուն, որպեսզի հաշվի առնեն այն իրավիճակները, որոնք ընդգրկված չեն "HCM Risk -SCD" մոդելի մեջ: "HCM Risk-SCD"

մոդելը խորհուրդ չի տրվում օգտագործել <16 տ պացիենտների, պրոֆեսիոնալ մարզիկների, մետաբոլիկ/ինֆիլտրատիվ հիվանդություններով անհատների (օրինակ, Անդերսոն-Ֆաբրիի հիվանդություն) և համախտանիշային ձևերի դեպքում (օրինակ, Նունանի համախտանիշ): Այս մոդելը չի օգտագործում սթրես-ինդուկցված գրադիենտը ձախ փորոքի արտատար ուղիում և միոմէկտոմիայից կամ սեպտալ ալկոհոլային արլացիայից առաջ և հետո չի վալիդացվել անհատների մոտ: Քանի որ ձախ փորոքի պատի առավելագույն հաստության և ռիսկի միջև կապը գծային չէ, հանկարծակի սրտային մահվան հաշվողական ռիսկը կիրառելի չէ ձախ փորոքի ծանր հիպերտրոֆիայով պացիենտների մոտ (≥ 35 մմ): Դա կարող է ցույց տալ այդպիսի պացիենտների ոչ մեծ քանակ, սակայն հանկարծակի մահվան մակարդակն այդ խմբում եղել է շատ ցածր: Այս ֆենոմենը նկատվել է ծայրահեղ դեպքում մեկ հետազոտության մեջ [99]: Մինչև հետագա հետազոտությունների արդյունքները ստանալը "HCM Risk-SCD" մոդելը պետք է զգուշորեն օգտագործվի ձախ փորոքի պատի ≥ 35 մմ առավելագույն հաստություն ունեցող պացիենտների մոտ: ԻԿԴ-ի փոխպատվաստումը խորհուրդ չի տրվում, եթե հանկարծակի սրտային մահվան գնահատված հնգամյա ռիսկը $< 4\%$ և չկան այլ կլինիկական նշաններ, որոնք ունեն պոտենցիալ կանխատեսիչ կարևորություն (օրինակ, երիտասարդ տարիքում բազմաթիվ հանկարծակի մահեր ընտանիքում կամ արյան ճնշման անկանոն պատասխան ֆիզիկական ծանրաբեռնվածությանը): Երբ այդպիսի գործոններն առկա են, ԻԿԴ-ի փոխպատվաստման որոշումը պետք է ընդունել անհատական ձևով և որոշումը պետք է բալանսավորված լինի՝ հաշվի առնելով կյանքի ընթացքում բարդությունների ռիսկը, ԻԿԴ-ի ազդեցությունը կենսակերպի վրա, սոցիալ-տնտեսական կարգավիճակը և հոգեբանական առողջությունը:

Հանկարծակի սրտային մահվան կանխարգելման խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտներին խորհուրդ է տրվում խուսափել մրցակցային սպորտից ^c	I	C
ԻԿԴ-ի փոխպատվաստումը խորհուրդ է տրվում փորոքային տախիկարդիայի կամ փորոքների ֆիբրիլյացիայից առաջացած սրտի կանգ վերապրած պացիենտներին, կամ այն պացիենտներին, որոնց մոտ եղել է կայուն փորոքային տախիկարդիա՝ գիտակցության կորուստով կամ հեմոդինամիկ խանգարումներով, որոնք ունեն >1 տարի ենթադրյալ կյանքի տևողություն	I	B

<p>"HCM Risk-SCD" սանդղակը խորհուրդ է տրվում կիրառել 5 տարվա ընթացքում հանկարծակի մահվան ռիսկի գնահատման համար առանց փորոքային տախիկարդիայի/փորոքների ֆիբրիլյացիայի հետևանքով վերակենդանացման միջոցառումների, կամ գիտակցության կամ հեմոդինամիկ խանգարումներով ինքնակա կայուն փորոքային տախիկարդիաների էպիզոդների ≥ 16 տարեկան պացիենտների համար</p>	I	B
<p>Խորհուրդ է տրվում, որպեսզի հանկարծակի սրտային մահվան հնգամյա ռիսկը գնահատվի առաջնային հետազոտության ժամանակ և հետագայում վերագնահատվի ամեն 1-2 տարին մեկ կամ կլինիկական կարգավիճակի փոփոխության ժամանակ</p>	I	B
<p>ԻԿԴ-ի փոխպատվաստումը պետք է դիտարկվի հանկարծակի սրտային մահվան հնգամյա $\geq 6\%$ ռիսկի գնահատմամբ, >1 տարի կյանքի ենթադրվող տևողությամբ պացիենտների մոտ՝ մանրակրկիտ կլինիկական հետազոտությունից և կյանքի ընթացքում բարդությունների ռիսկի, կենսակերպի վրա ԻԿԴ-ի ազդեցության, սոցիալ-տնտեսական կարգավիճակի և հոգեբանական առողջության վրա ուշադրություն դարձնելուց հետո</p>	IIa	B
<p>ԻԿԴ-ի փոխպատվաստումը կարող է դիտարկվել հանկարծակի սրտային մահվան հնգամյա $\geq 4\%$ և $<6\%$ ռիսկի գնահատմամբ, >1 տարի կյանքի ենթադրվող տևողությամբ պացիենտների մոտ՝ մանրակրկիտ կլինիկական հետազոտությունից և կյանքի ընթացքում բարդությունների ռիսկի, կենսակերպի վրա ԻԿԴ-ի ազդեցության, սոցիալ-տնտեսական կարգավիճակի և հոգեբանական առողջության վրա ուշադրություն դարձնելուց հետո</p>	IIb	B
<p>ԻԿԴ-ի փոխպատվաստումը կարող է դիտարկվել հանկարծակի սրտային մահվան հնգամյա $<4\%$ ռիսկի գնահատմամբ պացիենտների մոտ միայն այն դեպքում, երբ առկա են ապացուցված կանխատեսիչ նշանակություն ունեցող</p>	IIb	B


կլինիկական դրսևորումներ և կյանքի ընթացքում բարդությունների ռիսկը, կենսակերպի վրա ԻԿԴ-ի ազդեցությունը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը և հոգեբանական առողջությունը թույլ են տալիս ենթադրել ԻԿԴ-ով բուժման առավելությունը		
ԻԿԴ-ի փոխպատվաստումը խորհուրդ չի տրվում հանկարծակի սրտային մահվան հնգամյա ռիսկը <4% և ապացուցված կլինիկական նշանակություն ունեցող կլինիկական դրսևորումների բացակայությամբ պացիենտներին	III	B
Նշումներ. ^a -խորհուրդի դաս, ^b -ապացուցողականության մակարդակ, ^c -մրցակցային սպորտ, նշված ուղեցույցը դիտարկում է մրցակցային սպորտը որպես պրոֆեսիոնալ կամ սիրողական մշտական զբաղմունք՝ սպորտով և պաշտոնական մրցումներին մասնակցություն		

9.5.3.3.3. ԻԿԴ-ով բուժման պրակտիկ տեսակետներ

Մինչև ԻԿԴ-ի փոխպատվաստումը, հիվանդները պետք է տեղեկացված լինեն ոչ մոտիվացված աշխատանքի ռիսկի, փոխպատվաստման բարդությունների, սոցիալ և աշխատանքային հետևանքների (ներառյալ վարորդական սահմանափակումները) մասին: Փոխպատվաստման ժամանակ դեֆիբրիլյատորի թեստավորման դերն ուսումնասիրող հետազոտությունները շարունակվում են, սակայն առկա են հաղորդագրություններ այն մասին, որ արտահայտված ձախ փորոքի հիպերտրոֆիայով և ամիոդարոն ստացող հիվանդների մոտ առկա է փորոքների ֆիբրիլյացիայի բարձր շեմ [397-400]: Քանի դեռ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիային վերաբերվող հստակ տվյալներ չկան, դեֆիբրիլյատորի թեստավորումը մնում է բժշկի հայեցողությանը: Դեֆիբրիլյացիայի բարձր շեմով պացիենտների մոտ և նաև այն պացիենտների մոտ, որոնց մոտ չի հաջողվել հասնել կարդիոլերսիայի, ընտրության տարբերակ կարող է լինել սուբպեկտորալ փոխպատվաստումը և ստանդարտ միջամտությունները, ինչպիսիք են դեֆիբրիլացնող էլեկտրոդի հետադարձ բևեռայնությունը, լիցքավորման ուղղության փոփոխությունը ,թեստավորումից հետո superior vena cava-ի օդի ներառումը/բացառումը և, անհրաժեշտության դեպքում, ենթամաշկային էլեկտրոդի փոխպատվաստումը: Սարքի փորոքների ֆիբրիլյացիայի սահմանը պետք է ծրագրավորել > 220 գ/ր հաճախականությամբ՝ արագ հաղորդականությամբ նախասրտերի ֆիբրիլյացիայի

դեպքում էլեկտրաշոկերը նվազագույնի հասցնելու համար: Նաև պետք է նկատի ունենալ կայուն փորոքային տախիկարդիայի սահմանի անհրաժեշտությունը պայմանավորված պացիենտի անհատական առանձնահատկություններով : Օբսերվացիոն տվյալները ցույց են տալիս, որ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիաների ժամանակ փորոքային առիթմիաները կանգնեցնելու համար հակատախիկարդիկ խթանումն արդյունավետ է, սակայն չի իջեցնում ԻԿԴ մոտիվացվող գործարկման թիվը [372,393,396]: Հաշվի առնելով, որ նախասրտային էլեկտրոդները չեն իջացնում ԻԿԴ-ի չմոտիվացված գործարկումների հաճախականությունը, հիվանդների մեծամասնությանն անհրաժեշտ է միակ փորոքային էլեկտրոդ: Բացառություն են ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով հիվանդները, որոնց մոտ նախասրտային էլեկտրոդը հնարավոր է դարձնում կարճ AV ձգձգմամբ խթանումը և սինուսային ռիթմով ու սիստոլիկ դիսֆունկցիայով հիվանդները, որոնց մոտ կարող է նախընտրելի լինել CRT-ն : Ըստ MADIT-RIT (Multicenter Automatic Defibrillator Implantation Trial – Reduce Inappropriate Therapy) հետազոտության արդյունքների, միայն շոկային ծրագրավորումը կարող է դիտարկվել որպես առաջնային կանխարգելում, սակայն այս հետազոտությունն իրականացվել է ցածր արտամղման ֆրակցիայով պացիենտների վրա [402]: ԻԿԴ-ով պացիենտներին, որոնց մոտ, չնայած օպտիմալ թերապիային և սարքի վերածրագրավորմանը, պահպանվում է ախտանշանային փորոքային առիթմիան կամ կրկնակի գործարկումները, խորհուրդ է տրվում բետտա-պաշարիչների և/կամ ամիոդարոնի նշանակում [219]: Վերփորոքային տախիկարդիաների պատճառով, ԻԿԴ-ով պացիենտների մոտ սարքի չմոտիվացված գործարկման դեպքում խորհուրդ է տրվում էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություն՝ ցանկացած արևացվող առիթմոգեն սուբստրատի իդենտիֆիկացիայի և վերացման համար [403]: Վերջերս մշակված ենթամաշկային ԻԿԴ-ի էլեկտրոդների համակարգը (S-ICD™, Boston Scientific) ստացել է FDA հաստատում և կարող է դիտարկվել խթանման ցուցումներ չունեցող հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների համար [404]: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել R-ալիքի օպտիմալ զգայունությանը հանգիստ վիճակում և ծանրաբեռնվածության ժամանակ, T-ալիքի հիպերզգայունության հետևանքով չմոտիվացված լիցքավորումներից խուսափելու համար: Ցանկացած պացիենտի մոտ պետք է լինի ԷՍԳ մեկից ավելի սքրինինգ անցնող վեկտոր, որպեսզի հիպերզգայունություն առաջանալու դեպքում լինի վերածրագրավորման հնարավորություն [405,406]: Բազմակենտրոն ռեգիստրի տվյալները, որը ներառում է 58 ՀԿՄՊ-ով պացիենտների, պարունակում է արդյունավետության և անվտանգության գնահատականներ [407]:

Կարդիովերտեր-դեֆիբրիլյատորի փոխպատվաստման պրակտիկ ասպեկտների խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Նախքան ԻԿԴ-ի փոխպատվաստումը, պացիենտը պետք է ստանա տեղեկատվություն սարքի ոչ մոտիվացված գործարկումների, փոխպատվաստման բարդությունների, սոցիալական, մասնագիտական և վարորդական հետևանքների մասին:	I	C
Բետտա-պաշարիչների և/կամ ամիոդարոնի նշանակումը խորհուրդ է տրվում ԻԿԴ-ով պացիենտներին, որոնց մոտ պահպանվում է ախտանիշային փորոքային առիթմիան կամ կրկնակի գործարկումները, չնայած օպտիմալ թերապիային և սարքի վերածրագրավորմանը	I	C
Էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություն խորհուրդ է տրվում այն ԻԿԴ-ով պացիենտներին, որոնց մոտ գրանցվել են վերփորոքային տախիկարդիաների պատճառով սարքի չմոտիվացված գործարկումներ՝ ցանկացած արևաջվող առիթմոգեն սուբստրատի իդենտիֆիկացիայի և վերացման համար	I	C
Ենթամաշկային էլեկտրոդով ԻԿԴ-ի փոխպատվաստումը (S-ICD) կարող է դիտարկվել այն հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների համար, որոնք չունեն էլեկտրոկարդիոթանման ցուցումներ	III	C
Նշումներ. ^a - խորհուրդիդաս, ^b - ապացուցողականության մակարդակ Կրճատում. S- ICD-ենթամաշկային էլեկտրոդով ԻԿԴ		



Նկար 7

9.5.4. Հանկարծակի մահվան ռիսկը երեխաների շրջանում

ԻԿԴ-ի փոխպատվաստումը (երթե անհրաժեշտ է՝ էպիկարդիալ) ցուցված է, եթե երեխաների շրջանում եղել են կյանքին վտանգ սպառնացող փորոքային առիթմիաներ: Շատ փոքր երեխաների մոտ (<8 տարեկան) ԻԿԴ-ի փոխպատվաստման միջոցով առաջնային կանխարգելման անհրաժեշտության որոշման համար կլինիկական ռիսկի ստրատիֆիկացիան դժվարացած է, պայմանավորված անբավարար տվյալներով: Մահվան կամ սրտի փոխպատվաստման ռիսկն ամենաբարձրն է նորածինների և մետաբոլիկ հիվանդություններով, մալֆորմացիայի համախտանիշներով պացիենտների մոտ[408]: Ընդունված է, որ ինչպես մեծահասակների մոտ, ծանր ձախ փորոքային հիպերտրոֆիան, անբացատրելի ուշագնացությունները, ոչ կայուն փորոքային տախիկարդիաները և հանկարծակի մահվան ընտանեկան անամնեզը ներկայացնում են հանկարծակի սրտային մահվան գլխավոր ռիսկի գործոններ [409]: Նորածինների, երեխաների և դեռահաս տարիքում ծանր հիպերտրոֆիայի բնորոշումը կատարվել է տարբեր մոտեցումների և չափումների օգնությամբ [410,411]:

Այս ուղեցույցի համաձայնեցված տեսակետը այսպիսին է. ձախ փորոքի պատի առավելագույն հաստությունը ≥ 30 մմ կամ Z-գործոն ≥ 6 մմ դիտարկվում են երեխաների մոտ որպես մեծ ռիսկի գործոններ [410]: Երեխաների դեպքում ԻԿԴ-ի փոխպատվաստումը պետք է դիտարկվի երկու և ավելի ռիսկի մեծ գործոն ունեցող երեխաների մոտ: Մեծամասամբ դեպքերում միախոռոչ դեֆիբրիլյատորը բավական է և դա նվազեցնում է բարդությունների ռիսկը [412]: Միակ ռիսկի գործոնով որոշ պացիենտների մոտ ԻԿԴ-ի փոխպատվաստումը կարող է դիտարկվել երեխայի

Երեխաների մոտ կարդիովերտեր-դեֆիբրիլյատորի փոխպատվաստման խորհուրդներ
Խորհուրդ
ԻԿԴ-ի փոխպատվաստումը խորհուրդ է տրվում սրտի կանգ վերապրած կամ վավերացված սպոնտան կա
Համապատասխան խորհրդատվությունից հետո ԻԿԴ փոխպատվաստումը պետք է դիտարկել այն երե
գործոններ ^c և երբ բարդությունների ռիսկի գնահատումը կյանքի ընթացքում, ԻԿԴ ազդեցությունը կենսա
առավելություն
Համապատասխան կոնսուլտացիայից հետո ԻԿԴ-ի փոխպատվաստումը կարելի է դիտարկել այն երե
բարդությունների ռիսկի գնահատումը կյանքի ընթացքում, ԻԿԴ ազդեցությունը կենսակերպի և հոգեբանա
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ, ^c - մանկաբուժական մեծ ռիս
ուշագնացություն, անկայուն փորոքային տախիկարդիա (≥ 3 հաջորդող փորոքային կծկումները ≥ 120 զ/
անամնեզ (հանկարծակի սրտային մահվամբ մեկ կամ մի քանի առաջին աստիճանի < 40 տ ազգականներ
մահ առաջին աստիճանի ցանկացած տարիքի ազգականի մոտ)

և ընտանիքի համար ռիսկերի և օգուտների մանրակրկիտ համեմատությունից հետո:

9.6. Ախտանշանային բրադիկարդիա և AV-պաշարում

Մինուսային հանգույցի դիսֆունկցիայի և AV-պաշարման հետևանքով առաջացած ախտանշանային բրադիկարդիան հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիաների ժամանակ հանդիպում է ոչ հաճախ և ենթակա է բուժման՝ ըստ վերջին ուղեցույցների [249]: AV-պաշարման առկայությունը պետք է առավել երիտասարդ պացիենտների մոտ առաջացնի սպեցիֆիկ գենետիկական ենթատիպերի (դեսմին, FHL1, PRKAG2) և ամիլոիդոզի, Անդերսոն-Ֆարրիի հիվանդության հետ կապված կասկած: Ընդհակառակը, քրոնոտրոպ անբավարարությունը բավականին հաճախ է հանդիպում (հատկապես, Անդերսոն-Ֆարրիի հիվանդության ժամանակ) և հանդիսանում է ֆիզիկական ծանրաբեռնվածության հանդեպ ցածր տոլերանտության ռիսկի գործոն [415]: Եթե AV-պաշարում զարգացել է AV հանգույցը

պաշարող դեղամիջոցների ընդունման արդյունքում, դրանց դեղաչափը պետք է կարգավորվի և կարդիոլոգիանման անհրաժեշտությունը պետք է վերլուծվի ևս մեկ անգամ: Ֆիզիկական ծանրաբեռնվածության անտանելիության բուժման մեջ ռիթմ-զգայուն խթանման արդյունքը միանշանակ չէ: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիաների ժամանակ աջ փորոքի քրոնիկական խթանման հետ կապված ռիսկերը, նկատի ունենալով ձախ փորոքի սիստոլիկ ֆունկցիան, անհայտ են, սակայն փորոքային խթանումը պետք է, ինչքան հնարավոր է, նվազեցվի, բացառությամբ ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի բուժման դեպքերի: Ցածր սիստոլիկ ֆունկցիայով (ԱՖ<50%) պացիենտների մոտ պետք է դիտարկել CRT-P տեղադրումը [339,416]:

9.7. Փորոքային տախիկարդիա

Ոչ կայուն փորոքային տախիկարդիան ամբուլատոր ԷՍԳ մոնիտորինգի ժամանակ հաճախակի է հայտնաբերվում [69,70,417,418]: Դրա հաճախականությունն աճում է տարիքի հետ և կորելացվում ձախ փորոքի պատի հաստության և ՄՌՏ հետազոտությամբ Գադոլինումի ազդանշանի ուշ ուժեղացման առկայության հետ: Ոչ կայուն փորոքային տախիկարդիան հանդիսանում է հանկարծակի սրտային մահվան ռիսկի գործոն, սակայն, սովորաբար, հակաառիթմիկ դեղորայք չի պահանջում: Ծանրաբեռնվածության ժամանակ, անմիջապես դրանից հետո դրա առաջացումը հանդիպում է հազվադեպ, սակայն կարող է նույնականացվել հանկարծակի սրտային մահվան բարձր ռիսկի հետ [246]: Վավերացված կայուն մոնոմորֆ փորոքային տախիկարդիան (≥ 30 վ) հանդիպում է հազվադեպ, սակայն կարող է լինել առավել հաճախ ձախ փորոքի անևրիզմայով պացիենտների մոտ [256,419]: Երկարատև և/կամ ախտանշանային դեպքերով ու աթերոսկլերոզի ռիսկի գործոններով հիվանդների մոտ պետք է կատարել սրտի իշեմիկ հիվանդության բացառում: Չկան վկայություններ այն մասին, որ հեմոդինամիկ նշանակություն չունեցող փորոքային տախիկարդիաներին բնորոշ են ավելի վատ ելք՝ համեմատած ոչ կայուն փորոքային տախիկարդիաների, սակայն դրանք պետք է դիտարկվեն որպես հանկարծակի սրտային մահվան ռիսկի գործոն: Վատ տանելիությամբ փորոքային տախիկարդիաներով պացիենտների համար պետք է դիտարկվի ԻԿԴ-ի թերապիան և բուժումը բետտա-պաշարիչներով և ամիոդարոնով՝ կրկնակի դեպքերի ճնշման համար: Ապացուցված ֆոկալ բնույթի փորոքային տախիկարդիաներով պացիենտների մոտ կարելի է դիտարկել էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտությունը և արլացիան [420-422]:

10. Դինամիկ հսկողության խորհուրդներ

Ընդհանուր առմամբ, հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտները կարիք ունեն ամբողջ կյանքի ընթացքում հսկողության՝ ախտանշանային փոփոխությունների, սպառնացող ախտանիշների ռիսկի, ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի, ձախ փորոքի ֆունկցիայի և սրտի ռիթմի հայտնաբերման համար: Առկա են ախտանիշների փոփոխության կամ սրտի ֆունկցիայի փոփոխության հաճախականության երկարատև հսկողության շատ քիչ արդյունքներ, սակայն մի քանի խորացված հետազոտություններ ցույց են տալիս, որ ձախ փորոքի սիստոլիկ դիսֆունկցիայի և նախասրտային առիթմիաների հաճախականությունն ավելանում է տարիքին զուգընթաց [222, 224, 225, 423]: Մոնիտորինգի հաճախականությունը որոշվում է հիվանդության ծանրությամբ, տարիքով և ախտանիշներով: Կլինիկական հետազոտությունը՝ ներառյալ 12-արտածումային ԷՍԳ և տրանսթորակալ էխոսրտագրությունը պետք է կատարվեն ամեն 1-2 տարին մեկ կամ հաճախ, եթե պացիենտների մոտ առաջանում են հիվանդության նոր ախտանշանների հետ կապված գանգատներ: Երկարատև էլեկտրասրտագրություն խորհուրդ է տրվում կատարել ամեն տարի (կամ ամեն 6 ամիսը մեկ՝ ձախ նախասրտի դիլատացիայի առկայության դեպքում ≥ 45 մմ) անախտանիշ նախասրտային և փորոքային առիթմիաները հայտնաբերելու համար կամ, եթե հիվանդների մոտ ի հայտ են գալիս ուշագնացություններ կամ սրտխփոց: Հնարավորության դեպքում, սիրտ-թոքային սթենո-թեստի իրականացում կարող է ներկայացնել հիվանդության վատթարացման մասին նշաններ, սակայն դրա իրականացումը կատարվում է 2-3 տարին մեկ անգամ, միայն, եթե ախտանշանների հարաճում տեղի չի ունենում: Կան ոչ մեծ քանակությամբ տվյալներ սրտի ՄՌՏ հետազոտությամբ սրտամկանի ֆիբրոզի մակարդակի փոփոխության մասին և, եթե սրտի ՄՌՏ հետազոտությունը հասանելի է, պետք է այն կատարել 5 տարին մեկ անգամ, կամ 2-3 տարին մեկ անգամ, եթե առկա է հիվանդության զարգացում [424]: Ամբողջական հետազոտությունը, ներառյալ ԷՍԳ-ն, տրանս-թորակալ էխոսրտագրությունը և ԷՍԳ երկարատև մոնիթորինգը պետք է անցկացնել 1-3 ամսվա ընթացքում և 6-12 ամիսներին կատարված ինվազիվ սեսյոնալ ռեդուկցիայից հետո:

Դինամիկ հետազոտության խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Կլինիկորեն կայուն պացիենտներին խորհուրդ է տրվում կլինիկական հետազոտություն ամեն 12-24 ամիսը մեկ անգամ, ներառյալ՝ ԷՍԳ և տրանսթորակալ էխոսրտագրություն	I	C

Կլինիկական հետազոտությունները, ներառյալ՝ ԷՍԳ և տրանսթորակալ էխոսրտագրությունը, խորհուրդ է տրվում պացիենտներին, անմիջապես, երբ նրանց մոտ նկատվում է ախտանիշների փոփոխություն	I	C
48-ժամյա ամբուլատոր ԷՍԳ-ն խորհուրդ է տրվում ամեն 12-24 ամիսը մեկ՝ կլինիկորեն կայուն պացիենտների մոտ, ամեն 6-12 ամիսը մեկ սինուսային ռիթմով ու ≥ 45 մմ ձախ նախասրտի չափով պացիենտների մոտ, անմիջապես, եթե պացիենտների մոտ ի հայտ են գալիս սրտխփոցի նոր գանգատներ	I	C
Սրտի ՄՌՏ հետազոտությունն ամեն 5 տարին մեկ կարող է դիտարկվել կլինիկորեն կայուն պացիենտների համար և ամեն 2-3 տարին մեկ զարգացող հիվանդությամբ պացիենտների համար	IIb	C
Ախտանշաններով սահմանափակված ծանրաբեռնվածության թեստավորումը կարող է դիտարկվել ամեն 2-3 տարին մեկ՝ կլինիկորեն կայուն պացիենտների համար և ամեն տարին մեկ անգամ՝ զարգացող ախտանշանով պացիենտների համար	IIa	C
Սիրտ-թոքային ծանրաբեռնվածության թեստերը (եթե հասանելի է) կարող են դիտարկվել ամեն 2-3 տարին մեկ՝ կլինիկորեն կայուն պացիենտների համար և ամեն տարի՝ զարգացող ախտանշաններով պացիենտների համար	IIb	C
Նշումներ. ^a - խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

11. Վերարտադրողականություն և հակաբեղմնավորում

11.1. Ներածություն

Հղիությունն ասոցացվում է մեծ քանակի ֆիզիոլոգիական փոփոխությունների հետ, ներառյալ 40-50%-ով պլազմայի ծավալի և արտամղման ծավալի ավելացումը, համակարգային անոթային դիմադրության իջեցումը և հիպերկոագուլյացիոն կարգավիճակը: Չնայած հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով կանանց մեծամասնության մոտ հղիությունն ընթանում է առանց բարդությունների, այդ ֆիզիոլոգիական փոփոխությունները նույնականացվում են մոր և պտղի բարձր ռիսկով, քանի որ ծանրաբեռնվածության ծավալի ավելացումը կարող է դժվար

տանելի լինել ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի և դիաստոլիկ դիսֆունկցիայի պայմաններում: Հակաբեղմնավորման, հղիության ռիսկերի և պտղին հիվանդության փոխանցման ռիսկերի հետ կապված ժամանակին և համապատասխան խորհրդատվությունը կարևոր է հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով բոլոր կանանց համար [427,428]:

11.2. Հակաբեղմնավորումը և հղիության ընդհատում

Երբ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով աղջիկները հասնում են վերարտադրողական տարիքի, նրանց հարկ է խորհուրդներ տալ՝ կապված անվտանգ և արդյունավետ հակաբեղմնավորման հետ, քանի որ չպլանավորված հղիությունն իր մեջ բարձր ռիսկ է կրում [427]: Կանխարգելող մեթոդները (պահպանակներ, դիաֆրագմաներ, կոնքային օղ) անվտանգ են, սակայն ոչ այնքան արդյունավետ, ինչքան օրալ հակաբեղմնավորիչները, նույնիսկ, եթե դրանք համակցվում են սպերմիցիդների հետ (ձախողման հաճախականությունը կազմում է տարեկան 15-30%): 20մգ կամ 30 մգ էթինիլէստրադիոլ պարունակող ցածր դեղաչափի օրալ հակաբեղմնավորիչներն արդյունավետ են (չնայած ամենափոքր չափով՝ դեռահասների մոտ) և կարող են արդյունավետ օգտագործվել հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով կանանց մեծամասնության կողմից, բացառությամբ նրանց, ովքեր ունեն թրոմբոէմբոլիայի բարձր ռիսկ (օրինակ, սրտային անբավարարության և նախասրտերի ֆիբրիլյացիայով կանանց մոտ), եթե միայն նրանք միաժամանակ չեն ստանում ադեկվատ հակակոագուլյացիոն թերապիա: Օրալ հակաբեղմնավորիչներ խորհուրդ չեն տրվում ծխող, >35 տարեկանից բարձր, կամ անամնեզում երակային թրոմբոէմբոլիա ունեցող կանանց: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ անհետաձգելի հակաբեղմնավորումն անվտանգ է [427,429]: Միայն պրոգեստերոնային հակաբեղմնավորումն է հանդիսանում անվտանգ այլընտրանք, սակայն միայն պրոգեստերոնային հաբերի (դեզոգեստրել) արդյունավետությունը պայմանավորված է ընդունման պարբերականությամբ (ամենօրյա ընդունում < 12 ժամյա վարիաբեւությամբ): Կարող են օգտագործվել այլ պրոգեստերոնային հակաբեղմնավորիչներ, ներառյալ, ամեն 3 ամիսը մեկ՝ մեդրոքսիպրոգեստերոն ացետատի ներարկումը կամ ենթամաշկային պրոգեստերոնային իմպլանտներ, սակայն պետք է զգուշություն դրսևորել սիստոլիկ կամ դիաստոլիկ դիսֆունկցիայով կանանց՝ կապված օրգանիզմում հեղուկի պահման ռիսկի հետ: Լևոնորգեստրել արտազատող ներարգանդային սարքերը (ԱՆՍ) հանդիսանում են անվտանգ և արդյունավետ այլընտրանք: Միայն պրոգեստերոնային մեթոդները միշտ չեն ունենում բավարար տանելիություն և նույնականացվում են ոչ պարբերար ցիկլի հետ: Կարող են օգտագործվել պղնձային արտազատող ներարգանդային սարքեր, դրանք ավելի քիչ արդյունավետ են և կարող են նույնականացվել բարձրացած

ամենամայա արյան կորուստով: Հակաբիոտիկների կանխարգելող ընդունումն ԱՆՍ օգտագործման ժամանակ չի հանդիսանում պարտադիր գործողություն, սակայն փոխպատվաստման ժամանակ կարող են դիտվել վազովազալ ռեակցիաներ և ձախ փորոքի արտատար ուղու արտահայտված օբստրուկցիայով կանանց փոխպատվաստումը պետք է կատարվի ստացիոնար պայմաններում՝ սրտաբանի խորհրդատվությունից հետո: Ստերիլիզացիան կարող է անվտանգ իրականացվել արգանդափողերի կապման միջոցով, սակայն պետք է ի նկատի ունենալ անզգայացման ռիսկը և օդի անցումը որովային խոռոչ: Հիստերոսկոպիկ ստերիլիզացիան Essure™ սարքի կիրառումով կարող է լինել այլընտրանք, սակայն նույնպես նույնականացվում է վազովազալ ռեակցիաների հետ [427,429]: Հղիության ընդհատումը պետք է իրականացվի ստացիոնար պայմաններում, սրտաբանի խորհրդատվությունից հետո. Դիլատացիան և էվակուացիան սովորաբար անվտանգ են, սակայն, հաշվի առնելով, որ E1 և E2 պրոստագլանդինները կարող են նվազեցնել անոթային դիմադրությունը և բարձրացնել սրտային ռիթմի հաճախականությունը, ցուցված է հեմոդինամիկ մոնիտորինգ: Պրոստագլանդին F-ը բարձրացնում է թոքային զարկերակում ճնշումը և դրանից պետք է խուսափել [427]:

11.3. Անպտղության բուժում

Արհեստական բեղմնավորումը կարող է ասոցացվել հեղուկի կուտակման, զարկերակային և երակային թրոմբոէմբոլիայի հետ: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով և ցածր ռիսկով կանանց մոտ միջամտությունը հնարավոր է անվտանգ է, սակայն դրանից պետք է խուսափել սրտային անբավարարությունով և նախասրտերի ֆիբրիլացիայով, ինչպես նաև ձախ փորոքի արտահայտված հիպերտրոֆիայով և ռեստրիկտիվ լցման տիպով կանանց մոտ [427]: Նախափոխպատվաստման գենետիկական ախտորոշումը դիտարկելիս, անհրաժեշտ է ի նկատի ունենալ արհեստական բեղմնավորման ռիսկերը:

11.4 Նախակոնցեպցիոն խորհրդատվություն

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մեծամասնությունը հղիությունը տանում է նորմալ: Հիպերտրոֆիկ փոքր փորոքը, մեծամասամբ դեպքերում, կարող է հարմարվել շրջանառող արյան ծավալի ավելացմանը, առանց լցման ճնշման ավելորդ մեծացման: Նկարագրված մի քանի մահվան դեպքերը գլխավորապես տեղի են ունեցել ելքային շատ բարձր ռիսկ ունեցող կանանց հետ [430-432]: Հղիության ժամանակ վատթարացումը մեծամասամբ տեղի է ունենում այն կանանց մոտ, ովքեր մինչև հղիությունն ունեցել են ախտանշաններ [431,433,434]: Սրտային անբավարարության հաճախականությունը

տարբերվում է տարբեր հետազոտությունների մեջ, սակայն առավել հավանական է մինչև հղիությունը ձախ փորոքի իջած ֆունկցիա ունեցող կանանց մոտ [431-433, 435]: Ձախ փորոքի արտատար ուղիում ճնշման գրադիենտն ունի հղիության ընթացքում ոչ մեծ չափով ավելանալու միտում և առավել բարձր ձախ փորոքի արտատար ուղու ճնշման գրադիենտը նույնականացվել է մեծ թվով հղիության բարդությունների հետ [430-432,434,436]: Մինչև հղիությունը ռիթմի խանգարում ունեցող կանայք, առավել հավանական է, որ կունենան այն հղիության ընթացքում [430,436] սակայն, թվում է, թե հղիությունն ինքն իրենով զգալիորեն չի բարձրացնում առիթմիայի ռիսկը [430,432,433,436]: Իդեալական դեպքերում ռիսկի գնահատականը պետք է տրվի բեղմնավորումից առաջ, օգտագործելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) մոդիֆիկացված դասակարգումը: Պացիենտների մեծամասնությունը գտնվում է II կամ III դասում՝ ըստ ԱՀԿ դասակարգման [427]: IV դասում գտնվող կանանց հղիության դեմ խորհուրդ տալու հիմքեր կան ձախ փորոքի նշանակալի դիսֆունկցիայով կամ ծանր ախտանիշի ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով փոքրամասնության մոտ: Էխոսրտագրություն պետք է իրականացվի՝ փորոքների ֆունկցիան, միտրալ հետհոսքն ու ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիան գնահատելու համար: Ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ թեստերը (ցանկալի է նախքան հղիությունը, կամ անախտանիշ հղի կանանց մոտ մինչև կանխագուշակվող սրտի կծկումների առավելագույն հաճախականության 80 -ը) կարևոր են ֆունկցիոնալ հնարավորությունների գնահատման, սրտային ռիթմի պատասխանի և առիթմիաների գնահատման համար [427,437]:

Դեղամիջոցների պլանավորված օգտագործումը և դինամիկ հսկողությունը հղիության ընթացքում պետք է լինի քննարկման առարկա՝ կնոջ և նրա զուգընկերոջ միջև, նախքան բեղմնավորումը [427]: Բժշկագենետիկական խորհրդատվություն խորհուրդ է տրվում ՀԿՄՊ-ով բոլոր կանանց:

ԱՀԿ մոդիֆիկացված դասակարգումը սիրտ-անոթային ռիսկով մայրերի համար. սկզբունքները և կիրառությունը		
Ռիսկի դասը	Հղիության ռիսկ	Կիրառումը ՀԿՄՊ-ի ժամանակ
I	Հայտնաբերված չէ մայրական մահացության ռիսկի բարձրացում և բացակայություն/ ոչ մեծ հիվանդացության ռիսկ	-
II	Մայրական մահացության ռիսկի ոչ մեծ բարձրացում կամ հիվանդացության միջին ռիսկ	ՀԿՄՊ-ով պացիենտների մեծամասնությունը. թեթևից

		մինչև միջին արտահայտված ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիա, դեղորայքային թերապիայի առկայության/բացակայության դեպքում անախտանիշ են, լավ կարգավորվող առիթմիաներ, ձախ փորոքի նորմալ սիստոլիկ ֆունկցիա կամ ձախ փորոքի թեթև սիստոլիկ դիսֆունկցիա
III	Նշանակալի բարձրացած մայրական մահացության ռիսկ կամ հիվանդացության բարձր ռիսկ	Ձախ փորոքի արտատար ուղու ծանր օբստրուկցիա, ախտանիշներ կամ առիթմիա, չնայած, օպտիմալ դեղորայքային բուժմանը, ձախ փորոքի միջին աստիճանի սիստոլիկ դիսֆունկցիա
IV	Բացառապես մայրական մահացության կամ ծանր հիվանդացության բարձր ռիսկ, հղիությունը հակացուցված է	Ձախ փորոքի ծանր սիստոլիկ դիսֆունկցիա, ձախ փորոքի արտատար ուղու ծանր ախտանշանային օբստրուկցիա
Կրճատումներ. ԱՀԿ - Առողջապահության համաշխարհային կազմակերպություն		

11.5. Հղիության և ծննդաբերության վարումը

ԱՀԿ II դասում գտնվող կանայք պետք է հետազոտվեն ամեն եռամսյակը մեկ, ԱՀԿ III դասում գտնվող կանայք 1-2 ամիսը մեկ՝ մասնագիտացված կենտրոններում բազմադիսցիպլինար թիմով մասնագետների կողմից [427]: Ուշադրությունը պետք է բևեռել ֆունկցիոնալ կարգավիճակի, ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի, առիթմիաների և փորոքների

Ֆունկցիայի վրա: Էխոսրտագրություն պետք է կատարվի ամեն եռամսյակը մեկ կամ, երբ ի հայտ են գալիս նոր ախտանշաններ: Դեղորայքային բուժման հանձնարարականները հղիության ժամանակ հավաքված են աղյուսակում [427]: Եթե պետք է նշանակվի դեղորայքը, ապա պետք է նկատի ունենալ պտղի վրա դրա ազդեցությունը, սակայն և կինը, և բժիշկը պետք է հասկանան, որ հղիության ընթացքում դեղորայքի ընդունումից հրաժարվելը կարող է լրջորեն սպառնալ կնոջ առողջությանը, ինչպես նաև պտղի առողջությանը (օրինակ, փորոքային առիթմիաների բուժումը և հակակոագուլյանտ թերապիան՝ նախասրտերի ֆիբրիլյացիայի ժամանակ): Մոր շահերն անկասկած պետք է լինեն առաջնային: Պետք է շարունակել բետտա-պաշարիչների ընդունումը, եթե դրանք արդեն օգտագործվել են նախքան հղիությունը (չնայած խորհուրդ է տրվում կրկնակի հետազոտություն՝ ճշտելու համար դրանց անհրաժեշտությունը), դրանց կողմնակի արդյունքներն այնպիսին, ինչպիսին են աճի դանդաղումը, բրադիկարդիան նորածնի մոտ, սովորաբար ոչ ծանր հիպոգլիկեմիան, կարող են կարգավորվել: Նոր ախտանշանների ի հայտ գալու դեպքում, անհրաժեշտ է սկսել բետտա-պաշարիչների ընդունումը [427,434]: Լայնորեն կիրառվում է մետոպրոլոլը: Աթենոլոլ խորհուրդ չի տրվում, քանի որ այն նույնականացված է աճի դանդաղման հետ: Անկախ նրանից, թե երբ են նշանակվել բետտա-պաշարիչները, խորհուրդ է տրվում նորածնային վիճակի և պտղի աճի մոնիտորինգ: Վերապամիլը և դիլտիազեմը FDA դասակարգումով զբաղեցնում են C դասը, ենթադրելով, որ դրանց հնարավոր օգուտը կարող է հիմնավորել հղիների կողմից դրանց օգտագործումը՝ չնայած հնարավոր ռիսկին: Դիզոպիրամիդը պետք է օգտագործվի միայն այն դեպքերում, երբ հնարավոր օգուտը գերազանցում է ռիսկերը, քանի որ պատրաստուկը կարող է առաջացնել արգանդի կծկումներ [438]: Ամիոդարոնը պետք է օգտագործվի միայն խիստ անհրաժեշտ դեպքերում, քանի որ այն օժտված է ֆետոտոքսիկ հատկություններով և կա պտղի մոտ թիրեոտոքսիկոզի, աճի դանդաղման և անցանկալի նյարդաբանական արդյունքների ռիսկ [427,439,440]: Հղիության ընթացքում նախասրտերի ֆիբրիլյացիայի վատ տանելիության դեպքում կարող է անվտանգ օգտագործվել կարդիոտարբերակը: Քանի որ նկարագրված են ֆետալ դիսթրեսի մի քանի դեպքեր՝ անմիջապես էլեկտրական կարդիոտարբերակից հետո այս միջամտությունը պետք է կատարվի միայն կարդիոմոնիտորինգի և անհետաձգելի կեսարյան հատման հնարավորություններով ստացիոնարում [441]: Առաջին եռամսյակում ցածր- մոլեկուլային հեպարինով թերապևտիկ հակակոագուլյացիայով և Xa- հակա- գործոնի մոնիթորինգով (առավելագույն Xa –հակա-գործոնի մակարդակը 0.8-1.2 Ս/մլ ներարկումից 4-6 ժամ անց) և 36 շաբաթականից մինչև ծննդաբերությունը, կամ վիտամին K անտագոնիստներով կոագուլյացիան երկրորդ և երրորդ եռամսյակներում, խորհուրդ է տրվում

նախասրտերի ֆիբրիլյացիայի պարոքսիզմալ ձևերի ժամանակ [427]: Նոր օրալ հակակոագուլյանտները (օրինակ, դաբիգատրան, ռիվարոքսաբան) խորհուրդ չեն տրվում, քանի որ ցույց է տրվել դրանց թունայնությունը կենդանիների վրա, իսկ մարդկանց վրա կատարված հետազոտության տվյալները բավարար չեն: Հղիության ընթացքում, եթե հնարավոր է, ուլտրաձայնային հսկողության տակ պետք է կատարվի ռիթմավարի կամ ԻԿԴ փոխպատվաստում, եթե դրանց համար կան ցուցումներ: Ծննդաբերությունը պետք է պլանավորել երկրորդ եռամսյակի վերջում բազմադիսցիպլինար թիմի մասնակցությամբ: Պլանային ֆիզիոլոգիական ծննդալուծումն, ընդհանուր առմամբ, նախընտրելի է, սակայն հիվանդության մեղմ դրսևորումներով անախտանիշ կանանց մոտ կարելի է դիտարկել նաև ինքնակա ծննդաբերությունը: Կեսարյան հատումն իրականացվում է գլխավորապես մանկաբարձական ցուցումներով, սակայն պետք է նաև դիտարկել ձախ փորոքի արտատար ուղու ծանր օբստրուկցիայով, օրալ հակակոագուլյանտ ստացող կանանց վաղաժամ ծննդաբերության կամ ծանր սրտային անբավարարության դեպքերում: Էպիդուրալ կամ սպինալ անեսթեզիան օգտակար են ցավը և սթրեսը մեղմացնելու համար, սակայն պետք է օգտագործվեն արդարացված՝ խուսափելու համար վազոդիլատացիայից և հիպոտենզիայից, հատկապես, ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի առկայության դեպքում: Միանգամյա սպինալ անեսթեզիան ցուցված չէ [427,442]: Ծննդաբերության ընթացքում պետք է նկատի ունենալ կարդիոմոնիթորինգն առիթմիաների զարգացման բարձր ռիսկ ունեցող պացիենտների համար: Օքսիտոցինը պետք է օգտագործել դանդաղ ինֆուզիայի տեսքով՝ խուսափելու համար հիպոտենզիայից և տախիկարդիայից: Ծննդաբերությունից հետո, շրջանառող արյան ծավալի փոփոխության հետևանքով, թոքի այտուցի զարգացման բարձր ռիսկի հետ կապված պահանջվում է 24-48 ժամ կլինիկական հսկողություն [427]: Ֆիզիոլոգիական ծննդաբերության ժամանակ ԻԿԴ-ն ապակտիվացնելու անհրաժեշտություն չկա:

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով կանանց վերարտադրողական հարցերով խորհուրդներ		
Խորհուրդ	Դաս ^a	Մակարդակ ^b
Բոլոր կանանց նախքան հղիությունը ցուցված է ռիսկի գնահատում և խորհրդատվություն	I	C
Անվտանգ և արդյունավետ հակաբեղմնավորման մասին խորհրդատվությունը ցուցված է բոլոր կանանց՝ նախքան հղիությունը	I	C

Հիվանդության փոխանցման ռիսկի հետ կապված խորհրդատվությունը ցուցված է բոլոր տղամարդկանց և կանանց՝ նախքան բեղմնավորումը	I	C
Նախքան հղիությունը բետտա-պաշարիչներ (նախընտրելի է մետոպրոլոլը) ստացող կանայք պետք է շարունակեն բետտա-պաշարիչների ընդունումը	IIa	C
Այն կանանց, որոնց մոտ հղիության ընթացքում զարգանում են ախտանշաններ, խորհուրդ է տրվում բետտա-պաշարիչների ընդունում (նախընտրելի է մետոպրոլոլ)	I	C
Անկախ նրանից, թե երբ են նշանակվել բետտա-պաշարիչները, խորհուրդ է տրվում պտղի աճի և նորածնի վիճակի մոնիթորինգ	I	C
Պլանային (ինդուկցված) ֆիզիոլոգիական ծննդալուծումը խորհուրդ է տրվում որպես առաջին ընտրություն՝ բոլոր պացիենտների համար	I	C
Թերապևտիկ անտիկոագուլյացիան ցածր-մոլեկուլային հեպարիններով կամ վիտամին K անտագոնիստներով, պայմանավորված հղիության ժամանակահատվածով, խորհուրդ է տրվում նախասրտերի ֆիբրիլյացիայի դեպքում	I	C
Պերսիստենտ նախասրտերի ֆիբրիլյացիայի դեպքում պետք է դիտարկել կարդիովերսիան	IIa	C
Նշումներ. ^a - Խորհուրդի դաս, ^b - ապացուցողականության մակարդակ		

Հիպերտոնիկ սրտի և հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի միջև տարբերակիչ ախտորոշմանն օգնող կլինիկական նշանները
Կլինիկական նշաններ հոգուտ միայն հիպերտենզիայի
Նորմալ 12 -կանալային ԷՍԳ կամ իզոլացված բարձրացած վոլտաժ առանց վերաբևեռացման անկանոնությունների
Ձախ փորոքի հիպերտրոֆիայի ռեգրես 6-12 ամսում՝ արյան սիստոլիկ ճնշման պատշաճ կարգավորման դեպքում (< 130 մմ ս.ս.)
Հօգուտ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի կլինիկական նշաններ

Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ընտանեկան անամնեզ
Աջ փորոքի հիպերտրոֆիա
Աջ փորոքի միացման տեղում կամ ձախ փորոքի առավելագույն հաստացման սեզամենտներում տեղայնացված գադոլինումի ազդանշանի ուշ ուժեղացում ՄՌՇ հետազոտությամբ
Ձախ փորոքի պատի հաստացում ≥ 15 մմ (սպիտակամորթներ), ≥ 20 մմ (սևամորթներ)
Ծանր դիաստոլիկ դիսֆունկցիա
Վերաբևեռացման արտահայտված անկանոնություններ, հաղորդականության կամ Օ- ալիքի խանգարումներ 12-կանալային ԷՍԳ-ի վրա
ԷՍԳ – էլեկտրասրտագրություն, ՄՌՇ– մագնիսառեզոնանսային շերտագրություն

12. Հալույզ դեպքեր

12.1 Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ախտորոշումը մարզիկների մոտ

Պարբերաբար ինտենսիվ սպորտային ծանրաբեռնվածություններին ֆիզիոլոգիական հարմարվողականությունը նույնականացվում է ԷՍԳ դրսևորումների հետ, որոնք արտացոլում են վազալ տոնուսի ավելացումը, սրտի խոռոչների չափերի մեծացման, ձախ փորոքի հաստության և զանգվածի ավելացման հետ [443]: Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի և մարզումների նորմալ արդյունավետության հստակ տարբերակման հնարավորությունը շատ կարևոր է, քանի որ ոչ ճիշտ ախտորոշումն ունի խորը գնացող հետևանքներ մարզիկների և նրանց ընտանիքների, ինչպես նաև նրանց կազմակերպությունների և, ընդհանուր առմամբ, հասարակության համար: Նկարագրված են մի քանի կլինիկական նշաններ, որոնք տարբերում են ֆիզիոլոգիական հիպերտրոֆիան պաթոլոգիականից [444,445], սակայն բարդությունները կարող են առաջանալ սահմանային կամ թեթև արտահայտված ձախ փորոքի հիպերտրոֆիայով անհատների մոտ [446]: Ընդունված ոսկե չափանիշի բացակայության պայմաններում, ՀԿՄՊ ախտորոշումը մարզիկների մոտ պահանջում է մեծ քանակությամբ տարբեր զգայունությամբ և սպեցիֆիկությամբ պարամետրերի ներառում: Աղյուսակում հավաքված են նշաններ, որոնք օգնում են տարբերակել ՀԿՄՊ-ն ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ պայմանավորված ձախ փորոքի ֆիզիոլոգիական հիպերտրոֆիայից և, որոնք առավելապես ապահովված են հրատարակված տվյալներով [59, 445-460]:

12.2 Հիպերտրոֆիա

Կլինիկական պրակտիկայում կարող է դժվար լինել անցկացնել տարբերակիչ ախտորոշում մի

կողմից սրտի հիպերտոնիկ հիվանդության և մյուս կողմից՝ ՀԿՄՊ-ի միջև: Ձախ փորոքի հիպերտրոֆիայի ռեգրեսը հիպերտենզիայի բուժման ընթացքում հակասում է հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա ախտորոշմանը, սակայն հակառակն անպայման չէ, որ ճիշտ լինի [461-466]: Հիպերտենզիայով պացիենտների մոտ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա ախտորոշելուն օգնող կլինիկական առանձնահատկությունները հավաքված են վերը պատկերված աղյուսակում:

12.2.1. Վիզուալիզացիա

Էխոսրտագրության միջոցով որոշվող ավելացած ձախ փորոքի զանգվածն առկա է հիպերտոնիայով պացիենտների >30%-ի մոտ [467]: Հիպերտրոֆիայի աստիճանի վրա ազդում են էթնիկ ծագումը, նեյրոհումորալ գործոնները և գենետիկական տարբերակները [468-470]: Ընդհանուր առմամբ, ձախ փորոքի պատի առավելագույն հաստությունն անկասկած, ավելի է հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ, սակայն պարամետրերն այս երկու վիճակների միջև մասամբ համընկնում են [471-473]: Հիպերտոնիկ ձախ փորոքի հիպերտրոֆիայով պացիենտների մեծամասնության մոտ միջփորոքային միջնապատի հաստությունը < 15 մմ [474-477] է, սակայն սևամորթ պացիենտների մոտ (հատկապես, երբ կա երիկամների քրոնիկական հիվանդություն) այն գտնվում է 15-20 մմ դիապազոնում [478]: Գաղղլինիումի ազդանշանի ուշ ուժեղացումը նկարագրված է սրտամկանի միջին մասում և էպիկարդում, հիպերտոնիայի և ՀԿՄՊ-ի ժամանակ [136], սակայն ՀԿՄՊ-ի դեպքում կա աջ փորոքի միացման տեղում կամ ձախ փորոքի առավելագույն հաստացման սեզոններում տեղայնացված գաղղլինիումի ազդանշանի ուշ ուժեղացման միտում [136]: Նմանապես, չնայած դիաստոլիկ անկանոնությունները և ձախ նախասրտի լայնացումը դիտվում են և ՀԿՄՊ-ի, և հիպերտոնիայի ժամանակ, ծանր դիաստոլիկ դիսֆունկցիան առավել բնորոշ է ՀԿՄՊ-ին: Ծանրաբեռնվածության ժամանակ սրտամկանի դոպլեր հետազոտությունը և վիզուալիզացիան կարող են օգնել տարբերելու երկու վիճակները [479,480]: Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիան հանգիստ վիճակում կամ ծանրաբեռնվածության ժամանակ կարող է դիտվել հիպերտենզիայի ժամանակ և չի հանդիսանում ախտորոշիչ չափանիշ [481,482]:

12.2.2 Էլեկտրասրտագրություն

Ձախ փորոքի հիպերտրոֆիային բնորոշ 12-արտածումային ԷՍԳ վոլտաժը դիտվում է 10-20% հիպերտենզիկ պացիենտների մոտ, համենայնդեպս սպիտակամորթների մոտ վերաբևեռացման նշանակալի խանգարումները, հաղորդականության և Օ-ալիքի խանգարումները հաճախ չեն [68,467,483,484]: Նախասրտերի ֆիբրիլյացիան բնորոշ է երկու

վիճակների համար էլ, հանդիպելով մոտավորապես պացիենտների 1/3-ի մոտ: Փորոքային էքստրասիստոլան և ոչ կայուն փորոքային տախիկարդիան հանդիպում է ձախ փորոքի հիպերտրոֆիայով բարդացած հիպերտենզիայով պացիենտների մինչև 30%-ի մոտ [485-487]:

12.3 Իզոլացված բազալ սեպտալ հիպերտրոֆիա (սիզմայաձև միջնապատ) տարեց պացիենտների մոտ

Որոշ տարեց պացիենտների մոտ նկատվում է ոչ արտահայտված միջնապատի բազալ հիպերտրոֆիա (երբեմն նկարագրվում է ինչպես սիզմայաձև միջնապատ) ձախ փորոքի և աորտայի միջև նույնականացվող փոքր անկյունով (մեծ կոումով): Շատերի մոտ անամնեզում առկա է հիպերտենզիա և հիվանդների մի մասի մոտ նկատվում է միտրալ փականի օղի կալցիֆիկացիա: Ոչ մեծ քանակությամբ տվյալները վկայում են սրտի ռեմոդելավորման այդ տարբերակի ընտանեկան բնույթի կամ սարկոմերային սպիտակուցների գենի մուտացիայի հավանականության մասին [488]: Կարևոր է իմանալ, որ որոշ միջնապատի բազալ հատվածի հիպերտրոֆիայով պացիենտներ դառնում են ախտանշանային՝ ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ ինդուկցված ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի հետևանքով և նրանք պետք է անցնեն ծանրաբեռնվածության թեստեր և սթրես էխոսրտագրություն նույն այն սխեմայով, ինչ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտները [489,490]: Այս խմբում ընտանեկան սքրինինգի մասին հանձնարարականները միանշանակ չեն և պետք է կառավարվել ընտանիքի անդամների համար նշանակությամբ և ազգականների մոտ ենթադրյալ ախտանիշների առկայությամբ:

12.4. Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայով պացիենտների մոտ փականային հիվանդությունների ախտորոշումը և բուժումը

12.4.1. Աորտալ փականի հիվանդություններ

Անամնեզում հայտնի ՀԿՄՊ-ով կամ ՀԿՄՊ ընտանեկան անամնեզի բացակայությամբ պացիենտները, նախքան աորտալ փականի նշանակալի հիվանդության ախտորոշումը, աորտալ ստենոզի տարբերակիչ ախտորոշումը ծանր ձախ փորոքային հիպերտրոֆիայից մի կողմից և աորտալ փականի դեգեներացիայի հետ ասոցացված ՀԿՄՊ՝ մյուս կողմից, կարող է ներկայացնել դժվարություններ, հատկապես, հիպերտենզիայով տարեց պացիենտների մոտ: Ընդհանուր առմամբ, ձախ փորոքի ռեմոդելավորման պատկերը և ծանրությունն աորտալ ստենոզի դեպքում թույլ է փոխկապակցվում փականի ստենոզի արտահայտվածության հետ: Դեպքերի 20-30%-ն ունեն հաստացած պատի ասիմետրիկ պատկերը, չնայած

հիպերտրոֆիայի աստիճանը սովորաբար հարաբերական մեղմ է (պատի հաստությունը ≤ 15 մմ) [491,492]: Ձախ փորոքի պատի հաստությունը ≥ 15 մմ, նկարագրվել է փոքր հսկողության խմբերի տարեց պացիենտների մոտ, որոնց մոտ իրականացվել է սրտի ՄՌՇ հետազոտություն: Առաջնասիստոլիկ շարժումը և դինամիկ ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիան նկատվել է աորտալ ստենոզով հիվանդների մոտ և դժվարացրել է փականի վրա գրադիենտի ճշգրիտ չափումը: Աորտալ ստենոզի բուժումը պետք է իրականացվի ըստ համապատասխան ուղեցույցների [493]: Առանց դինամիկ օբստրուկցիայի աորտալ ստենոզով հիվանդների մոտ պերիօպերատիվ սեպտալ միոմէկտոմիան հանդիսանում է քննարկելի և խորհուրդ չի տրվում ռուտին կիրառման համար [494]:

12.4.2. Միտրալ փականի հիվանդություններ

Միտրալ փականի բնածին անկանոնությունների գնահատումը կարող է դժվար լինել ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայի պայմաններում, որն ինքնին կարող է առաջացնել միտրալ հետհոսք: Սովորաբար օգտագործվում է ինտեգրատիվ մոտեցումը՝ համապատասխան սրտի փականային հիվանդությունների ուղեցույցների, սակայն այն ունի որոշակի սահմանափակումներ հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի դեպքում, կապված նրա հետ, որ ձախ փորոքի խոռոչը շատ դեպքերում փոքր է, նույնիսկ արտահայտված միտրալ հետհոսքի առկայության դեպքում և սովորական քանակական, և կիսաքանակական դոպլեր պարամետրերը հաստատված չեն ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով պացիենտների համար [493]: Ընդհանուր առմամբ, փականի անատոմիայի քանակական չափումները՝ դոպլեր ալիքների տևողությունը և գույնը զուգակցված ձախ նախասրտի չափերի և թոքային զարկերակի ճնշան գնահատման հետ, ավելի օգտակար են: Որոշ դեպքերում տրանսէզոֆագեալ էխոկարդիոգրաֆիան կարող է օգտակար լինել միտրալ ռեգուրգիտացիայի մեխանիզմի որոշման և միտրալ ռեգուրգիտացիայի ծանրության որոշման համար:

12.4.3. Էնդոկարդիտի կանխարգելում

Ինֆեկցիոն էնդոկարդիտի կանխարգելումը պրակտիկորեն սահմանափակված է ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով պացիենտներով, հատկապես, այն պացիենտներով, որոնց մոտ առկա է ձախ նախասրտի լայնացում [496]: Ձախ փորոքի արտատար ուղու օբստրուկցիայով պացիենտների մոտ ինֆեկցիոն էնդոկարդիտով հիվանդացությունը կազմում է 3.8/1000 մարդ/տարի և էնդոկարդիտի հավանականությունը կազմում է 4.3%՝ մեծ հսկողության խմբում 10 տարվա դինամիկ հսկողության ընթացքում [496]: Էնդոկարդի վնասումը առավել հաճախ զարգանում է միտրալ փականի հաստացած առաջային փեղկի վրա

կամ միջփոքրըային միջնապատի պրոքսիմալ հատվածի մակերեսի վրա [495,497]: Ինչպես և փականային արատներով պացիենտների մոտ, մեծ նշանակություն ունի բերանի խոռոչի հիգիենան, սակայն հակաբիոտիկներով ռուտին պրոֆիլակտիկան ձախ փոքր արտատար ուղու ճնշման գրադիենտով պացիենտներին ցուցված չէ [498]: Հակաբիոտիկներով կանխարգելումը պետք է դիտարկել սրտի պրոթեզավորված փականով կամ փականի պլաստիկայի ժամանակ օգտագործված պրոթեզային նյութերով հիվանդների բարձր ռիսկի միջամտությունների ժամանակ, անամնեզում էնդոկարդիտի կամ բնածին արատների առկայության, համապատասխան սրտի փականային հիվանդությունների դեպքում [493,498]:

13. Կյանքը կարդիմիոպաթիայով: Խորհուրդներ պացիենտներին

ՀԿՄՊ-ով մարդկանց մեծամասնությունը վարում են նորմալ կենսակերպ, սակայն ոչ մեծ թվով մարդկանց մոտ զարգանում են ծանր ախտանշաններ և կա հիվանդության հետ կապված բարդությունների բարձր ռիսկ: Անկախ հիվանդության ծանրությունից, կարևոր է, որպեսզի պացիենտները ստանան աջակցություն և կշռադատված հանձնարարականներ՝ ընտանեկան բժիշկների և առջապահական համակարգի այլ մասնագետների կողմից, որպեսզի փորձեն ինքնուրույն հասկանալ և վերահսկել սեփական ախտանիշները: Վերը նշված աղյուսակում հավաքված են որոշ կարևոր իրավիճակներ, որոնք պետք է քննարկել պացիենտների, ազգականների և խնամք իրականացնող անհատների հետ: Անհրաժեշտության դեպքում, (օրինակ, հղիության պլանավորման) պացիենտներին պետք է ուղղորդել այլ ծառայությունների մասնագետների մոտ:

Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Հայաստանի Հանրապետությունում հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի ախտորոշումը դժվարություն չի ներկայացնում, հաշվի առնելով էխոսրտագրության մատչելիությունն ու տարածվածությունը: ՀԿՄՊ-ի վարման արդի պահանջները հնարավոր է ապահովել Հայաստանի բուժհաստատություններում՝ ներդնելով հետևյալ գործառույթները:

- *Գործելակարգեր, ընթացակարգեր, որոշումների ընդունման աջակցման համակարգեր (Decision Support System)*
- *Շարունակական ինտերակտիվ կրթական միջոցառումներ*
- *Աուդիտ փեդալյանացված ցուցանիշների կիրառում:*

Գործելակարգում նշված բոլոր քայլերը և դրանց հերթականությունը կրում են պարտադիր բնույթ և ենթակա չեն կամայական մեկնաբանությունների: Ցանկացած շեղում հանդիսանում է հիմնավորումների և ընդլայնված ձևաչափով քննարկումների հիմք: Աուդիտի ցուցանիշները պետք է արտացոլեն տվյալ ախտաբանության կլինիկական և կազմակերպչական վարման հիմնաքարային օղակները, որոնք էականորեն ազդում են բուժման ելքերի վրա: Նրանք բաժանում են ամբողջ գործընթացն առանձին ավելի դյուրին ընկալվող և վերահսկվող փուլերի: ՀԿՄՊ-ի վաղաժամ հայտնաբերման և հետազայում այս ախտաբանությամբ պացիենտների կանխատեսումը բարելավելու համար անհրաժեշտ է.

1. Պետք է պարտադիր էխսուրտագրություն անցնեն բոլոր այն պացիենտները, որոնց մոտ արձանագրվում են այս կամ այն ծանրության ռիթմի խանգարումներ՝ ՀԿՄՊ ախտորոշումը հաստատելու կամ ժխտելու համար:
2. Աքրինինգային հետազոտություններ պացիենտների ընտանիքների անդամների համար, որոնց մոտ առկա է ախտորոշված հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիա կամ այլ արյունակից հարազատների մոտ առկա է հանկարծամահության ռեպք:
